

ԳԵՂՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ


ԺԱԴԻԿ



ԱԶԵՐՆԵՇՐ

ԲԱՔՈՒ

1947 թ



Գ Ե Վ Ո Ր Գ Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն

891.99

Պ-50

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Ծ Ա Ղ Ի Կ

(ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ)

2012

5883



Ա Ջ Ե Ր Ն Ե Շ Ր
Բ Ա Ք ՈՒ-1947

Ծ Ա Ղ Ի Կ

Երեկոյանում էր: Արևը քանի գնում, այնքան խորն էր անցնում անտառի ետևը: Նրա թույլ ճառագայթները խաղում, վետվետում էին ծառերի կատարների ու բաց բլրակների վրա:

Ես և լեյտենանտ Մուխամեդյարովը լուռ ու դանդաղ քայլում էինք անտառային նեղ կածանով: Դուրբալի էր լսել թռչունների ականջ շոյող դայլայլը, կանաչ խոտի սլսվոցը, գետակների մեղմ կարկաչը:

Հանկարծ մեր առջև բացվեց լայն, գեղատեսիլ մի բացատ, ուր աճել, հասունացել էին բազմապիսի ծաղիկներ: Ես խենթի պես առաջ վազեցի և սկսեցի ծաղիկներից փունջ հյուսել: Երբ պատրաստի փունջը զմայլանքով մոտեցրի հոտ քաշելու, չգիտես ինչու, ուրախությունից ծիծաղեցի:

— Ինչո՞ւ ես ծիծաղում,— լսեցի Մուխամեդյարովի մռայլ ձայնը: Արագ նայեցի նրան: Նա կանգնած էր ուղիղ, զգաստ դրուժյան մեջ: Նա չէր շարժվում և խիստ նայում էր ինձ: Նրա թախծոտ, բայց միաժամանակ խստահայաց դեմքն ինձ դարմացրեց:

— Ինչո՞ւ պոկեցիր այդ ծաղիկները և ինչու ես ծիծաղում,— կրկնեց նա:

Նա մոտեցավ ինձ, ձեռիցս վերցրեց ծաղիկփունջը, քանդեց այն ու ծաղիկները ցրեց:

Ես նրան ոչինչ չասացի: Բայց երբ մենք բավա-
կանին հեռացանք ու նստեցինք փոքրիկ բլրակի վրա,
հարցրի:

— Ծաղիկների հետ կապված հուշ ունե՞ս:

Նա հանեց գլխարկը, դեմքով շրջվեց դեպի ինձ,
սկսեց պատմել:

— Երբ ծաղիկներ կմ տեսնում, հիշում կմ նրան:
Նա նույնպես գեղեցիկ էր, հոտավետ, քնքույշ, ինչպես
գարնանային ծաղիկ: Երբ նայում էի նրա ծիծաղկուն
դեմքին, ուզում էի ապրել, ապրել...

Նա իմ զինվորն էր: Նրան ուղարկել էին իմ
վաշտը՝ որպես ուղղիստուհի: Աշխատում էր ռազիոկա-
յանի վրա: Իմ սիրտը ցավից մղկատում էր, երբ տեսնում
էի, թե ինչպես արշավների ժամանակ նա իր մեջքին
կրում էր ծանր ռազիոկայանը: Նրա զինվորական
վերնաշապիկը թրջվում էր քրտնաբեց, իսկ ինքը շնչում
էր ծանր, քայլում օրորվելով: Կանգառների ժամանակ
պառկում էր գետնին՝ առանց մեջքից հանելու իր բեռը:
Ես պատրաստ էի ինքս կրել ռազիոկայանը, բայց հրա-
մանատար էի և այդ անելու իրավունքը չունեի: Այն
ժամանակ կարգադրում էի իմ կապավոր բանակա-
յինին:

— Ընկեր Սմիրնով, օգնեցեք նրան...

Սակայն նա ոչ մի գնով չէր ուզում բաժանվել իր
բեռից:

— Հարկավոր է, ես ինքս կտանեմ:

Եվ նա տանում էր:

Ես չգիտեի նրա անունը: Դեռ ոչ մի անգամ հետը
չէի խոսել: Մեկ անգամ, կանգառի ժամանակ, մոտեցա

նրան: Նա արագ ոտքի ելավ և ջութակի լարի նման ձգվեց առջև:

— Նստեցեք, նստեցեք, — ասացի ես:

Բայց նա չնստեց:

— Ձե՞ք հոգնում, — հարցրի ուղիղ նայելով նրա սև աչքերին: Նրա սպիտակ, կլորիկ այտերը պատեցին վարդի գույնով:

— Ո՛չ, չեմ հոգնում, ընկեր լեյտենանտ:

— Ինչպե՞ս է ձեր անունը, մարտիկ, — հարցրի նրան.

— Ծաղիկ:

— Ցագի՞կ: Այդ ի՞նչ անուն է:

Նա ծիծաղեց:

— Ծաղիկ, հայկական անուն է:

Եվ այդպես, նրա անունը Ծաղիկ էր: Նա, հիրավի, աշխարհիս ամենասիրուն ծաղիկը կարող էր լինել...

Մուխամեդյարովը լռեց, ապա ձեռքով շփելով մազերը, շարունակեց:

— ...եվ այդ չքնաղ ծաղիկը զինվորական կռույտ սապոզների տակ տրորվեց, մեռավ... Մենք հրաման ստացանք իջնել թշնամու թիկունքը, զարկել նրան ետևից, այդպիսով հեշտացնել գրոհող մեր հետիոտն դորամասերի աշխատանքը հակառակորդի խորը և շարան-շարան ամուր պաշտպանողական գծերը ջարդելու համար:

Պարաշուտները պատրաստ էին: Մարտիկները հանգիստ էին առնում:

Այդ ժամանակ Ծաղիկը գետափին թաշկինակ էր լվանում: Չէի համար ձակվում մոտենալ: Երբ նա թաշկինակը կախեց ծառի ճյուղից, ապա պայուսակից հանելով թուղթ ու մատիտ, նստեց սովերոտ մի տեղ:

սկսեց նամակ գրել, ես մոտեցա նրան: Նա սկզբում շփոթվեց, իսկ հետո իրեն հավաքելով՝ ոտքի կանգնեց: Նա բոկոտն էր: Այդպիսի գեղեցիկ, կանացի սպիտակ ոտները իմ կյանքում առաջին անգամ էի տեսնում:

— Ոչինչ, ոչինչ, — ասացի ես, — նստեցեք:

Նա նստեց:

— Այդ սնամ եք գրում:

— Գրում եմ մայրիկիս:

— Գուցե սիրած սղայի՞ հք գրում:

— Ի՞նչ եք ասում, ընկեր լեյտենանտ: Կարող եք կարդալ:

Նա մեկնեց ինձ գրված թերթիկը:

— Հավատում եմ, հավատում, մարտիկ: Սակայն ձեզ հարկավոր է հանգստանալ, ուժեր կուտակել... Ձեք վախենում կայանալիք թուխքից:

— Ո՛չ, չեմ վախենում:

Նրա խաղաղ ու հաստատուն ձայնի մեջ վախի իրոք ոչ մի նոտա չկար:

Ես ուզեցի էլի ինչ որ հարցնել, բայց այդ ժամանակ օդում լսվեցին սավառնակների վժժոցներ: Պետք է շտապել զարթնեցնել մարտիկներին ու կարգի բերել նրանց:

— Արագ հագնվեցեք, կլինեք ինձ հետ, մեկ սավառնակում, հասկացա՞ք:

— Կա, լինել ձեզ հետ մեկ օդանավում, — կտրուկ ասաց նա ու մեղմ ժպտաց:

Օ՛, նրա ժպիտը...

Սավառնակներում մարտիկների տեղավորումը կատարվեց արագ ու կանոնավոր: Նա նստած էր իմ կողքին և մենք թռչում էինք: Նա թեքել էր գլուխն ու

հենվել կողիս: Այդ իմ կյանքի ամենաերջանիկ վայր-
կյաններն էին:

Բայց ահա տրվեց ազդանշանը:

— Պատրաստվե՛լ...

Մենք ամենքս արագ ոտքի ելանք: Նրա կարաբերնը
ամբարցրի պողպառոյ տրոսից: Նա զնուժ էր առջևից:
Մենք դանդաղ մոտենում էինք սավառնակի բաց դռ-
նակին: Ես տեսա, թե ինչպես նա մոտեցավ բաց դռ-
նակին, ինչպես դուրս տարավ աջ ոտը, իսկ հետո ողջ
իրանով առաջ թեքվեց ու ադիոկայանը մեջքին՝ ցատ-
կեց: Կայծակի արագությամբ ցած թռա նրա ետևից
նաև ես: Օդում աշխատում էի տեսողությունից չկոր-
ցնել նրա բացված պարաշուտը:

Մենք գետին իջանք իրար շատ մոտ: Եղանակը
խաղաղ էր ու մեր գլխավերևում մեղմ ու դանդաղ
ծալծլվելով իջան պարաշուտները:

Սակայն թիկունքում արդեն սկսվել էր մարտը
և լսելի էր, թե ինչպես ձարձատում էին ավտոմատ-
ներն ու շրջապատով մեկ դղրդում էր ռուսական հա-
րազատ «ուռնն»: Այդ մեր մարտիկներն էին, որ
ցած իջնելուն պես, առանց մի վայրկյան անգամ կորց-
նելու, նետվեցին գրոհի՝ անախնկալի բերելով թշնա-
մուն:

Մեկ փոքրիկ թմբի տակ Ծաղիկը բացեց ռադիո-
կայանն ու դեկուցեց ինձ.

— Կապը վերականգնված է, ընկեր լեյտենանտ:

— Հաղորդեցեք, որ վաշտը գրոհի անցավ:

Իմ հրամանը նա իսկույն հաղորդեց գերագույն
հրամանատարությանը:

Սակայն մեզ հարկավոր էր գտնել գումարտակի շտաբը: Իմ վաշաք գնում էր երկրորդ էջելոնում:

Վաշտս բավականին առաջ էր անցել, հանդիպել էր թշնամու ինչ որ խմբի և մարտի բռնվել: Նա ու Մադիկը ետ էինք մնացել: Երբ մենք շտապում էինք առաջ, մեր ճամբան կտրեցին գերմանացիները, թվով տասն—տասնըհինգ հոգի:

— Պատկիր,— գոռացի ես, և երբ նա պահեց, հրեցի փոսը, որը, բարեբախտաբար, գտնվում էր շատ մոտ:

Գերմանացիներն ինչ որ գոռացին, սակայն ավտոմատի մեկ ճարճատյուլնով նրանց լոցեցնել տվի:

Փոսը լայն էր ու խոր: Նայեցի Մադիկին: Նա չնայած քիչ սպրդնել էր, սակայն ամուր բռնել էր ավտոմատն ու հանդիստ կրակում էր:

— Բացել ուղիովայանը, օգնություն խնդրել:

Նա սկսեց հայտնել մեր կոորդինատները և օգնություն պահանջել:

Սյդ նույն բոպեին գերմանացիներն առաջ էին գալիս: Երևում էր, որ նրանք ուզում էին մեզ կենդանի վերցնել: Որպես դիվահար, փոսի մի անկյունից մյուս անկյունն էի նետվում, մերթ այտեղ կրակում, մերթ այնտեղ կրակում: Որքան գերմանացի սպանվեց, հաշվել չէի կարող: Սարսափելի հոգնել էի: Բայց երբ նայում էի Մադիկին, մոռանում էի հոգնությունս ու սատանայական կատաղությամբ կրակ բացում թշնամու վրա: Իսկ թշնամին արդեն օղակի մեջ էր առել մեզ:

— Պատասխանեցին, ընկեր լեյտենանտ, օգնությունը գալիս է,— ուրախ ուրախ հայտնեց նա:

Բայց հենց այդ նույն ժամանակ, հակառակ կողմից փոսի վրա հայտնվեց գերմանացի զինվորը՝ նռնակը ձեռին:

— Ո՛հ, անձնատուր եղիր...

Իսկույն կրակեցի: Գերմանացին վայր ընկավ: Բայց նա արդեն նետել էր նռնակը: Երբ խլացումից ուշքի եկա ու երբ մաղվեց ծուխը, առաջին բանը, որ աչքիս ընկավ, դա Ծաղիկի արյունոտ դեմքն էր: Նա ողջ իրանով թեքվել էր ռադիոկայանի վրա, նրա երեսից ծոր-ծոր ցած էր կաթում մուգ կարմիր արյունը: Նա դեռևս ձեռքում բռնած ունեւր միկրո-հեռախոսի խողովակն ու ճգնում էր թույլ ձայնով կանչել մերոնց:

— Ծաղիկ, — ճչացի ես և նետվեցի դեպի նա: Բայց ինչ որ ուժեղ ձեռներ ետևից գրկեցին ինձ: Ես իսկույն դուրս քաշեցի դանակս, մեծ ճիգով շրջվեցի ու այն խրեցի ինձ գրկած գերմանացու կուրծքը: Նա պոռալով գետին փռվեց: Բայց փոսը թռան երկու երեք հոգի ևս և ես տեսա, թե ինչպես նրանցից մեկը մարտնչման թունդ ժամին իր ծանր ոտքերը դրեց Ծաղիկի կրծքին...

Օրն արեվոտ էր, պարզ, և հանկարծ ամեն ինչ աչքերիս առաջ մթնեց:

...Երբ ուշքի եկա, ինձ տեսա փոսի մեջ: Նրա արյունոտ մարմինն առել էի թևերիս մեջ, իսկ իմ շուրջ բոլորը փռված էին գերմանացիների զիակաները...

* * *

— Ահա այսպես տրորվեց ու մեռավ ամենաքրոնքույշ ու սիրուն ծաղիկը: Ես հարյուրապատիկ առաջ Ծաղիկի վրեժը, բայց դա սիրտս չհանդստացրեց: Այժմ

էլ սառնասրտութեամբ չեմ կարողանում նայել, երբ
իմ աչքերի առջև պոկում, տրորում են ծաղիկները:
Ամեն մի պոկած ու տրորված ծաղիկ, ինձ միշտ հի-
շեցնում է իմ մարտիկ Ծաղիկին:

Մուխամեդյարովը լռեց: Մենք ելանք ու լուս-
քայլեցինք:

Մյուս օրը նա իր վաշտն ինձ հանձնեց:

Նա ծանր կոնտուզիա ուներ և գնաց յարուժվելու:

1944 թ. Մոզել

ԵՍ ՄԱՅՐ ՈՒՆԵՄ

Ամբողջ գիշեր, մերթ խոշոր, մերթ մանր կաթիլներով մաղեց անձրեւը: Առավոտյան դեմ, երբ խաղաղվեց եղանակն ու վախվխելով դուրս ելավ արեւը, սավերախիտ անտառում գունդը կանգ առավ հանգստի:

Մարտիկները մինչև ոսկորները թրջվել էին: Նրանք իսկույն խարուկներ վառեցին և փոխն ի փոխ սկսեցին չորացնել շորերը:

Ես վրայիցս հանեցի թաց պլաշչն ու մտեցա ավտոմատչիկների խարուկին: Խարույկը չափազանց մեծ էր, իսկ նրա շուրջը կանգնած էին երեք հոգի: Մեկը անընդհատ կտտրելով չորացած ճյուղերը, զցում էր կրակի մեջ, որից բոցերն էլ ավելի ուժգին էին բանկվում, իսկ մյուս երկուսը չորացնում էին հագուստները:

— Որտե՞ղ են մնացածները, — հարցրի ճյուղեր կտտրատողից:

Նա դժկամորեն պատասխանեց.

— Նամակ են կարդում, փոստը նոր եկավ, բոլորը նամակ ստացան, իսկ մենք երեքս չստացանք:

Նամակները... Անգին նամակները եկել են Հայրենիքից: Եվ ահա մարտիկները դեռ չչորացրած իրենց թաց շորերը, առանձնացել են, կլանված ընթերցում են հարազատների նամակները: Այժմ ոչ մի ուժ չէր կարող նրանց կտրել այդ նամակներից:

Մարույկից քիչ դենը, մեծ կոճղի վրա, նստել էր ավտոմատչիկներին վաշտի հրամանատար Սուրեն Ալվարյանը: Նա ամբողջովին կլանվել էր նամակով: Դա ինձ շատ հետաքրքրեց, որովհետև Ալվարյանը հարազատներ չուներ, իսկ ծանոթներին, բարեկամներին, ընկերներին ոչ ինքն էր գրում, ոչ էլ նրանցից էր նամակ ստանում:

Հայրենական պատերազմի չորս տարիների ընթացքում նա ոչ մի նամակ չստացավ: Նա նույնիսկ դրանով պարծենում էր:

— Նամակ, ինչի՞ս են պետք, հողիս պղտորելու... Ոչ, ավելի լավ է մի գրի, որ քեզ էլ չգրեն...

Եվ թշնամու թիկունքում գիշերային հարձակումներ կատարող անվախ հսկան անտարբեր հայացք էր նետում փոստատարի վրա, երբ նա ցրելով բերած նամակները, անցնում էր Ալվարյանի մոտով և կատակելով ասում.

— Ձեզ դեռևս գրում են, ընկեր լեյտենանտ:

Այդպիսի ժամանակ ամբողջ վաշտը նամակ էր կարդում, իսկ նա ինչ որ եղանակ սուլելով, մաքրում էր իր ավտոմատը:

«Եթե Ալվարյանը նամակ է ստացել, նշանակում է նա մեկն ու մեկին գրել է» — մտածեցի ես:

Նամակն ընթերցելու ժամանակ Ալվարյանի դեմքը մերթ բորբոքվում էր, մերթ ծածկվում ժպիտով: Հետո նա մոռալում էր և թվում էր, թե խոշոր սև աչքերից ուր որ է կկաթեն արցունքները:

Նրա լարված դեմքից երևում էր, որ նամակը չափազանց կարևոր էր ու հետաքրքիր: Նա այնպես

էր տարվել նամակի ընթերցումով, որ մոռացել էր շրջապատը:

Հանկարծ նամակի ընթերցումը վերջացնելով, նա այն բացեց բերանը և նայեց չորս կողմը: Նրա աչքերը փալատակին էին տալիս:

— Ընկերներ, բարեկամներ, — բացականչեց նա:

Բոլորը զարմացած նայեցին նրան:

— Ընկերներ, — կրկին կանչեց նա և իսկույն ոտքի ելավ, — ես մայր ունեմ, լսում եք, մայր...:

Ուրախությունից խեղդվելով, նա մեկ անգամ էլ արտասանեց այդ բառերը, ապա նայելով մեկ իրեն զարմացած նայող մարտիկներին, մեկ ձեռում բռնած նամակին, այն քնքշորեն մոտեցրեց ու սեղմեց իր սրտին: Այդպես իր ուրախությունը կարող էր արտահայտել անսպասելիորեն երջանկացած մարդը:

— Էխ՛, դուք չեք հասկանում ինձ... Զէ՞ որ ես մայր ունեմ:

Նա ձեռքի կայծակնային շարժումով գլխից հանեց գլխարկն ու մոտ դալով, բռնեց ուսիցս, թափահարեց ու ասաց.

— Բարսեղյան, հասկանում ես, ես մայր ունեմ, շնորհավորիր ինձ:

Տեսնելով, որ ես ոչինչ չեմ ասում, նա թողեց ուսս ու վազեց անտառի խորքը: Նրա այդ արարքից ես ոչինչ չհասկանալով, հետևեցի նրան:

Քանի խորանում էինք անտառը, այնքան օդը հեղձուցիչ ու տաք էր դառնում: Շուրջը հեազհետե մըթնում էր: Մռայլ ամպերն արագորեն վազում էին բարձր ծառերի կատարների վրայով: Ես մոտեցա Ալվարյանին, բռնելով նրա թևը՝ հարցրի.

— Պատմիր մանրամասն, այդ ի՞նչ նամակ է...

Նա ուշքի էր եկել: Նրա դեմքը լուրջ էր ու խիստ:

— Այս բոլորն անսպասելի ուրախությունից էր, —
ասաց նա, — լիր, ես կպատմեմ քեզ...

Մենք նստեցինք սաղարթախիտ կաղնու տակ:
Նա սկսեց պատմել:

«... Ես ինձ այսպես եմ հիշում: Պատռուված հագուստով, կեղտոտ մարմնով ու դզզված մազերով, քաղցից հյուժված քայլում էի արևից շիկացած քաղաքի փողոցներով: Քաղցն ու հոգնածությունն ինձ կատարյալ թուլացրել էին: Այդպես, քայլերս ինձ տարան դեպի շուկան: Այնտեղ ամեն ինչ կար: Ահա իրար վրա դարձած սպիտակ լավաշը, նրանց կողքին փափուկ բոքոնները, խորովվում է տժվժիկը, որի անուշ հոտը տարածվել է շուրջ բոլորը: Ահա վաճառողը դանակով կարում է հալվան ու դնում կշեռքի նժարի վրա... Այդ բոլորը տրվում էր փողով, իսկ ես գրպանումս գրոշ չունեի:

Դարակից խլեցի կլոր բոքոնն ու վազեցի: Վաճառողներն աղմուկ-աղաղակով ընկան ետևիցս: Ես վազում էի ու կրճում բոքոնը: Ճարակորեն դուրս էի պրծնում ինձ բռնել կամեցողների ձեռքերից:

— Բռնեցեք, բռնեցեք, — գոռում էին ինձ հետապնդողները:

Մտածում էի՝ կծե՞ծեն մինչև ուշաթափվելս: Գոնե մինչև վերջն ուտեմ այս անուշ բոքոնը: Ու վազում էի և ուտում:

Հանկարծ լավեց միլիցիոնների սուլոցը:

Պարզ հիշում եմ: Նա բռնեց ձեռիցս: Երիտասարդ էր.

գեղեցիկ: Նա ժպտում էր, տեսնելով, թե ինչպես ես
խեղդվելով կուլ էի տալիս բոքոնի վերջին խոշոր
պատառները:

— Սպասեցեք, քաղաքացիներ, թե՛ւյլ չեմ տա, որ
երեսային ծեծեք:

Մեզ շրջապատողները դժկամորեն ցրվեցին:

Միլիցիոնները կռանալով դեպի ինձ, մեղմ հարցրեց-

— Հը, կշտացմր...

— Չէ, չկշտացա, — մրթմրթացի ես ու խեթ հայաց-
քով նայեցի նրան:

Նա ծիծաղեց:

— Օ՛, որքան շատակերն ես, գնանք, քեզ կշտա-
ցընենք:

Մենք մտանք խորտկարան: Նստեցինք սեղանի
շուրջը:

— Երեսային կակաո, բուլկի տվեք, — կարգադրեց
միլիցիոններն ու նստելով դիմացս՝ սկսեց ծխել:

Ես երկու բաժակ կակաո խմեցի ու երկու բուլկի կերա:

— Էլի կուտես, — հարցրեց նա:

Ես ասացի, որ կշտացել եմ: Մենք ոտքի ելանք:

Հետո ինչ որ շենք մտանք, բարձրացանք աստիճան-
ներով, նա ծեծեց ինչ որ սենյակի դուռը:

— Մտեք, — լսվեց ներսից:

Մենք մտանք կահավորված մի սենյակ, որի մեջ
տեղում դրված էր լայն սեղանը, իսկ սեղանի ետևը
նստած էր պատկառելի մի մարդ:

Միլիցիոնները մոտեցավ նրան, նստեց դիմացը և
ծիծաղելով սկսեց ինչ որ բան պատմել: Իսկ ես
բերանբաց նայում էի նրանց ու չէի հասկանում, թե
ինչի մասին են խոսում:

Հետո մի գրութիւն գրեց, տվեց միլիցիոններին:
... Քիչ անց մենք կանգնած էինք մաքուր, վայել-
լուչ հագնված բարի մի կնոջ առջև: Միլիցիոններն
ասում էր նրան,

— Շատ եմ խնդրում, տղային լավ նայեցեք:

Կինը շոյեց մաղերս ու քնքշազին ասաց.

— Մենք սրան կողացնենք, կկերակրենք, մաքուր
անկողին կտանք: Նա մեզ մոտ շատ ընկերներ կունենա,
ուրախ կապրի:

Միլիցիոնները քնքշալիւր շոյեց դեմքս ու հեռացավ. . .

Այսպես՝ ես ընկա մանկատուն:

Այն ժամանակ յոթ-ութ տարեկան էի: Մեծացա
մանկատնում...

Այնտեղ ստացա միջնակարգ կրթութիւն, ձեռք
բերի փականագործի մասնագիտութիւնը և չափա-
հաս դառա:

Աշխատում էի խոշոր մեքենաշինական գործարա-
նում: Ապրում էի հանրակացարանում: Թվում էր, թե
կյանքից դժգոհ չպէտք է լինելի: Ամեն ինչ ունեի:
Ունեի սենյակ, սեղան, աթոռ, մահճակալ, աշխատում
էի, աշխատավարձ էի ստանում, ընկերներ-բարեկամ-
ներ ունեի: ԼէՆՄ կազմակերպութիւնն ինձ ընդու-
նել էր իր շարքերը: Իմ առջև բացվել էր կյանքի մի
հետաքրքիր ասպարեզ: Շրջապատս առույգ էր, ուրախ:
Ես դառա խաղի ու գեղարվեստի խմբակների ակտիվ
մասնակիցը: Իրամխմբակի, պարի, երգի, շախմատիատ-
ների և Ֆիզկուլտուրայի այլ խմբակների ղեկավար-
ներն ինձ իրենց մոտ էին հրավիրում: Ես եռանդուն
ուսումնասիրում էի կոմերիտմիութեան ու պարտիայի

պատմութիւնը, հրեկոնները հաճախում էի կոմհամալ-
սարան:

Իմ կյանքը լի էր ծիծաղով, ուրախութեամբ: Թ՛վում
էր, թե տեղ չկար ոչ թախիծի, ոչ էլ վշտի: Մակայն
այդ թախիծն ու վիշտը ես ունեի: Այն առանձին
ուժով պոսում էի, երբ ընկերս ինձ իր տունն էր հրա-
վիրում:

Ահա նստած եմ նրա տանը, փափուկ դիվանի վրա:
Զրուցում եմ, վիճում նրա հետ: Մտաբնում է ճաշի
ժամը: Նա ինձ հրավիրում է սեղանի մոտ:

— Մայրիկ, մինչև երբ պետք է մեզ սոված պահես,
դե շուտ արա է՛...:

— Բերում եմ, բերում, ձեզ մատաղ,— լսվում էր
քաղցր մի ձայն ու դուրգուրիչ ժպիտը դեմքին ներս
էր մանում տուռյդ ու բարի մի պառավիկ: Նրա մա-
զերը քունքերի վրա ձերմակել են: Նա կերակուրների
լի ամսնները դնելով մեր առջև՝ հոգատար ձայնով
ասում էր.

— Անուշ արեք, անուշ արեք բալիկներս...

Ես նկատում էի, թե ինչպես այդ սիրալիք պառա-
վիկն իր աղաչի ամանի մեջ դնում է մաի ճարպալի
կտորները ու միևնույն ժամանակ աչքը չհեռացնելով
աղաչից, ասում է.

— Իո՛ւ, Վասյոկ, վեցջերս ախորժակով չե՞ս ուտում,
չինի՞ թե հիվանդ ես:

Եվ չնայած Վասյոկն ուտում է եզսն ախորժակով,
պառավիկին այնուամենայնիվ թ՛վում է, թե աղան
քիչ է ուտում:

— Ի՞նչ է պատահել քեզ, աղավնյակս, — անհամբ-
ղբստանում է մայրը:

— Կուշտ եմ, մայրիկ:

— Այս պատառն էլ կեր, բալաս, — մանրացնելով համեղ կտորը, աղ ցանելով վրան, մոտեցնում ու դնում է որդու առջև:

— Մայր, բավական է, այլևս չեմ ուզում ուտել:

Ես դուրս էի գալիս ընկերոջս տնից թախճոտ սրտով: Մտածում էի, չէ՞ որ ինձ էլ մայր է ծնել, բայց ինչո՞ւ ես մեծացա առանց մայրական դուրգուրանքի...

Ինչպե՞ս այդպես անմայր էի...

Ալվարյանը մի քանի վայրկյան լռեց.

— Շարունակիր, — խնդրեցի ես:

Նա շարունակեց:

—... Մեր զորամասը եկա 1942 թվականին, ուղղա-
կի զինվորական դպրոցից: Ինձ նշանակեցին ավտո-
մատավորների վաշտի հրամանատար:

Ինչպես քեզ հայտնի է, գնդի անձնակազմը բաղկա-
ցած էր երիտասարդ մարտիկներից, այդ իսկ պատճառով
մեզ մեկ տարի ժամանակ տվին նախապատրաստվելու
մարտերին: Եվ ահա վարժությունների և արշավների
ժամանակ մոտիկ, ընկերական կապով կապվեցի ռազմո-
ղասակի հրամանատար լեյտենանտ Պյոտր Մակարովի
հետ: Պյոտրը համակրելի, պարզ ու բարի, ազնիվ հոգու
տեր տղա էր: Ես նրան սիրեցի ամուր և անկեղծորեն:

Մեկ անգամ նա ինձ մոտ կարգաց մորից ստացած
նամակը:

Մայրը գրում էր.

«Սիրելի զավակս, լսել եմ, որ դու մեկ անգամ եղել
ես ճակատում և անխժված գերմանացիք քեզ վերա-
վորել են: Ինչո՞ւ դու քո հարազատ մորից վերքդ

ծածուկ ես պահել ու ինձ այդ մասին չես հայտնել։
Որդյակ իմ, չէ՛ որ քո վերքը—դա իմ վերքն է... Եվ
զգում էր ու ցավում իմ մայրական սիրտը, որ իմ
աղավնյակին ինչ որ բան է պատահել, այլապես նա
ինձ նամակ կգրեր... Փառք աստծո, որ այժմ առողջ ես
ու կենդանի... Տաք-տաք հագնվիր, որդիս, ախորժա-
կով ու շատ կեր, քեզ լավ նայիր, չմըսես, չհիվանդա-
նաս, ինչի կարիք որ զգաս, գրիր, ես կուղարկեմ քեզ»։

Պյոտրը համբուրեց նամակն ու ծիծաղեց։

— Տեսնում ես, թե ինչ հոգատար ու քնքույշ
մայրիկ ունեմ։ Իմ վերքի մասին դիտմամբ չէի գրել,
որպեսզի չանհանգստանա, բայց արի տես, թե ոնց է
իմացել էդ մասին։ Անգին մայրիկ, այդ ո՞ր չափ լե-
զուն անհանգստացրեց քո քնքույշ սրտիկը։

Ես հարցրի նրան, թե որտեղ է ապրում մայ-
րը, աշխատում է, դրամական օգնություն ցոփյց է
տալիս մորը։

— Ամիսը երկու հարյուր ուղբլի եմ ուղարկում։

— Ինչո՞ւ այդքան քիչ, միթե՞ ամոթ չէ քեզ, չէ՞
որ դու շատ ես ստանում։

— Բա ի՞նչ անեմ, որ նա ինքն ավելի չի ուզում։
Ահա տես, թե ինչ է գրում։

«Սիրելի իմ որդյակ, ինձ փող հարկավոր չէ։ Ես
ապրում եմ տանը և ոչ մի բանի կարիք չեմ զգում։ Այդ
դու ես թափառական կյանք վարում, կարող ես ընկնել
այնպիսի մի տեղ, ուր քեզ փողը հարկավոր կգա»։

— Բայց չէ՞ որ ձեռքիդ շատ փող է մնում, ի՞նչ
պիտի անես այդ փողը։ Պյոտր, մայրիկդ արդյոք չի՞
վերավորվի, եթե իմ աշխատավարձից ամսական չորս
հարյուր ուղբլի ուղարկեմ նրան։ Ես մայր չունեմ,

Թող նա լինի իմ մոր փոխարեն, — անկեղծորեն առաջարկեցի ես:

Նա առաջարկս ընդունեց և մենք պայմանավորվեցինք պառավին ամսական հազար ութըլի ուղարկել, որ լավ ապրի նա, առանց կարիքի. Այդ օրվանից մորից ստացած ամեն մի նամակը կարդում էինք միասին:

Մայրիկը գրում էր.

«Իմ զավակներ Պյոտր ու Սուրեն, զիշեր-ցերեկ աղոթում եմ ասածուն, որ պահպանի ձեզ չար թշնամու գնդակից, որ նա օգնի, ուժ տա ձեզ՝ թշնամուն շուտ հաղթելու»:

... Մեր գունդը ճակատ մեկնեց 1943 թվականի սկզբներին: Կարմիր Բանակը գրոհի էր անցել, թշնամին նահանջում էր:

... Մեր գունդը հաջող հարձակողական մարտեր էր մղում լեռնանտառոտ տեղամասերում: Քանի գնում, հարձակումը դադարանում էր, բայց թշնամին ուժեղ կուտակելով, մեր գնդին մի բնագծի մոտ ուժեղ դիմադրութուն ցույց տվավ: Այսպիսով, մեր հարձակումը կանգ առավ:

Մեր աջ ու ձախ կողմերով ձգվում էին բարձր, անանցնելի լեռներ, անտառներով պատած:

Այդ լեռների արանքում, ուղիղ մեր դիմաց, ինչպես անառիկ ամրոց, կանգնել էր հսկա մի բարձունք: Բարձունքի վրա ամրացել էր թշնամին և այնտեղից աչալուրջ հետևում էր մեր շարժումներին: Մենք հնարավորութուն չունեինք նույնիսկ գլուխներս բարձրացնելու: Թշնամին բացում էր ուժեղ կրակ և մահն իսկույն գրկում էր այն խիզախին, որը համարձակվում

էր առաջ նետովել: Դրությունը չափազանց լուրջ էր: Բայց գունդը այնուամենայնիվ պետք է առաջ շարժվեր, այլապես, մնալով մեր դիրքերում, խափանում էինք ամբողջ ճակատի հարձակողական մարտերի զարգացումը: Մեկ օր գնդի հրամանատարը շտապ ինձ իր մոտ կանչեց:

Ես իսկույն ներկայացա նրան՝ իր գետնափոր տնակում: Թրաշված գլխով, թիկնեղ փոխզնդապետն առանց բացատրության կարգադրեց.

— Բաց արեք ձեր տեղագրական քարտեզը:

Ես կատարեցի հրամանը:

— Այս լեռներն անանցանելի են: Ոչ մի ալպինիստ այս կողմից դեռ չի կարողացել բարձրանալ նրանց զագաթը: Սակայն դուք ոչ միայն պետք է բարձրանաք, այլև անցնեք մյուս կողմը, հետո թեքվելով մտնեք բարձունքի ետևը, թիկունքից զարկեք թշնամուն, ոչնչացնեք նրա կենդանի ուժն ու խլեք նրա կրակոցային կետը: Վերցնում եք ձեզ հետ միայն ձեր վաշտը: Խնդրի կատարման համար տալիս եմ 16 ժամ: Առավոտյան ժամ 5-ին գունդը կանցնի հարձակման: Հարցեր կան:

— Ամեն ինչ պարզ է, ընկեր փոխզնդապետ:

— Կապ կապահպանեք ռադիոկայանի միջոցով, որը կվերցնեք ձեզ հետ: Կապը՝ կարճ հաղորդագրերով: Ձեզ հետ կգա լեյտենանտ Մակարովը: Նա ամեն ինչ գիտե:

Այդ լեյտենն պես ես բարձրացրի գլուխս և շեշտակի նայեցի փոխզնդապետի աչքերի մեջ: Սիրտս, չգիտես ինչու, փուլ էր գալիս և ես չէի կարողանում բառանգամ արտասանել:

— Ի՞նչ եք կամենում, — հարցրեց փոխզնդապետը:

— Ինձ թվում է լեյտենանտ Մակարովն ավելորդ է, խնդիրը չափազանց վտանգավոր է և ռազիոդասակի հրամանատարը կարող է շարքից դուրս գալ:

— Այդ գիտեմ, ռազիստներ չեն մնացել... Բացի դրանից, լեյտենանտ Մակարովն ինքն է խնդրել այդ օպերացիային մասնակցելու:

— Ընկեր փոխգնդապետ, խնդրում եմ լեյտենանտ Մակարովին թողնել այստեղ, կապը ձեզ հետ ինքս կապահովեմ:

— Դուք ուշանում եք և կորցրիք հինգ րոպե, իմ որոշումը մնում է իր ուժի մէջ, շտապեցեք:

Ես դուրս եկա գետնափոր տնակից: Վերևում ինձ դիմավորեց Մակարովը՝ երկու ռազիստի հետ, որոնք իրենց մեջքներին ունեին ռազիոկայանի ծանրոցները:

— Ուղարկված ենք ձեր կարգադրութեան տակ, — գեկուցեց նա ինձ:

Փչում էր քամին, շնկշնկում էին անտառի ծառերը:

— Դու ինչո՞ւ ցանկացար գալ հետս:

— Այդ իմ գործն է:

— Լսիր, Պյոտր, օպերացիան վտանգավոր է, քեզ համար չեմ ցավում, ցավում եմ մայրիկի համար:

«Ցավում եմ մայրիկի համար»... այս բառերն իրենք դուրս թռան բերնիցս: Այդ րոպեին հիրավի ինձ թվում էր, թե մենք հարազատ եղբայրներ ենք և ես, որպես ավագը, չէի կամենում վտանգի ենթարկվեր կրտսերը: Չէ՛ որ մայրը կարող էր մնալ առանց զավակի, ի՞նչ կլիներ նրա դրուժյունը:

Պյոտրը մնաց աներեր:

— Ես վախկոտ չեմ, — ասաց նա...

... Ես չեմ պատմի, թե ինչպես մենք մըջյունների պես, գիշերը, մերթ գլորվելով ցած, յմերթ նորից վեր ելնելով, առանց աղմուկի բարձրացանք այդ դիք լեռների կատարները: Ես չեմ պատմի նաև այն մասին, թե ինչպիսի ջանքերով և զգուշությամբ հասանք ու թաքնըվեցինք այդ չարաբաստիկ բարձունքի ետևը: Կասեմ միայն այն, որ, երբ լուսացավ, մենք գտնվում էինք թշնամու կրակոցային կետերին շատ մոտ: Ամեն ինչ պատրաստի դրության մեջ էր՝ ավտոմատը, նոսակը, դանակը: Մնում էր կատարել վերջին թռիչքը: Այդ թռիչքի արագությունից էր կախված ողջ օպերացիայի հաջողությունը:

Լեյտենանտ Մակարովը բացեց ռադիոկայանը և հաղորդեց մերոնց պայմանական նշանը:

— Հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի, առանջ, — գոչեցի ես ու առանջ նետվեցի:

Ճրճտացին ավտոմատները: Գերմանացիները սկզբում շժմել էին, սակայն ուշքի գալով ու կռահելով գործի էությունը, ուժգին կրակ բաց արին բոլոր տեսակի զենքերից: Ես ձախ ձեռիս դաստակից վիրավորվեցի ու կանգ առա այն կապելու:

— Վիրավորված ես, — լսեցի Մակարովի ձայնը և նա կանգնեց կողքիս, — տուր փաթաթեմ:

Ես նրան կարգադրել էի մնալ ռադիոկայանի մոտ և ողջ օպերացիայի ժամանակ չհեռանալ այնտեղից: Նա չէր կատարել իմ հրամանը:

— Ինչո՞ւ դու այստեղ ես:

— Կատարում եմ խնդիրը:

— Ես հրամայեյ էի մնալ ռադիոկայանի մոտ:

— Այնտեղ ռադիստներ կան:

Այդ նույն բոպեին վաշտս պատկել էր ու տատան-
վում էր առաջ գնալ: Բոպեն վճռական էր: Մակարովին
ես հրելով, ես առաջ վազեցի բացականչելով:

— Իմ ետեւից, տղաներ:

Ավտոմատից ես գնդակահարեցի դեպի ինձ վազող
վեց գերմանացու: Այդ քաջալերեց մարտիկներին,
նրանք կատվի արագութեամբ վազեցին ետեւիցս,
հասան ինձ, խառնվեցին գերմանացիներին ու սկսվեց
սոսկալի մի մարտ: Մենք կրակում էինք ուղիղ իրար
երեսի, հարվածում դանակով, ավտոմատով, իսկ հետո
բռնելով իրս բ կոկորդից՝ գլորվում գետին ու ատամ-
ներով միմյանց խեղդամահ անում:

Մարտը չափազանց կարճ տևեց: Թշնամին, թվով
ութսուն հողի, գլխովին ոչնչացվեց: Մենք տիրեցինք
նրա կրակային կետերին:

Մեր գունդը հարձակման անցավ: Լեռներով ու
անտառներով մեկ զորդաց «ուռնա»...

Ես հանգիստ շունչ քաշեցի: Խնդիրը կատարված
էր և թշնամին սկսեց նահանջել:

— Որտեղ է լեյտենանտ Մակարովը, — կանչեցի ես:

— Նա վերավորված է, ձեզ կանչում է իր մոտ:

Ես վազեցի դեպի ընկերս: Նա պառկած էր թշնա-
մու ծանր թնդանոթի տակ: Այդ թնդանոթն ինքն էր
զրավել, ինքն էր ոչնչացրել թնդանոթի ողջ անձնա-
կազմը, հենց այդ թնդանոթի տակ էլ՝ մահացու
վերք ստացել:

Նա մեռնում էր: Ես նստելի, նրա գլուխը զրթ
ծնկանս վրա:

Նա բացեց աչքերը:

— Սուրեն, ոչինչ չեմ աստուում, գիտեմ, որ մայրս
զավակ ունի... Բարևիք նրան իմ կողմից:

Նա ընդմիջա՞ր փակեց աչքերը...

Տաք, արյունալից մարտեր մղեցինք 1944—1945 թվա-
կաններին: Մենք առաջ էինք շարժվում թշնամու տերի-
տորի սյուն: Ժամանակ չկար մորը նամակ գրելու ու
նրան պատմելու որդու մասին: Ես շարունակում էի
ամսական հազար ուղբլի ուղարկել նրան: Թվում էր,
թե պառավը ահավոր ոչինչ չէր զգում: Նրա ուղար-
կած նամակները կարդում էի ու մորմոքալով պահում
պայուսակումս:

1945 թվականի մայիսի սկզբներին ես մեկ նամակ
գրեցի պառավին: Պատմեցի Պյոտրի խիզախ մահը,
խնդրեցի չտխրել, չսգալ որդու ծանր կորուստը, քանի
որ նա կորցնելով սիրեցյալ մեկ զավակին, գտավ մյու-
սին... Ես պատմեցի իմ մասին, ասացի, որ մայր
չունեմ, համարում եմ նրան իմ հարազատ մայրը և
եթե նա համաձայն է, ապա թող ինձ ընդունի իր
որդու փոխարեն:

Կարո՞ղ ես պատկերացնել, թե սրտի ինչպիսի
թրթռոցով եմ ես սպասել իմ զբաժ անդրանիկ նամակի
պատասխանին:

Վերջապես իմ անունով նամակ եկավ: Ես արագ
բացի ու կարդացի այն: Ահա թե ինչ է գրում մայրը—

«Որդյակ իմ Սուրեն, ծանր է տանել որդուս կո-
րուստը, բայց ես մխիթարվում եմ նրանով, որ Պյոտրս
պատվով մեռավ, չարատավորեց իր անունը... Որդյակ
իմ Սուրեն, արի՛, արի՛, ես քեզ կընդունեմ իմ Պյոտրի
փոխարեն, իմ հարազատ զավակ, սպասում եմ անհամ-

քեր քո գալուն, արի՛, ես քո գլուխը կսեղմեմ իմ պա-
պակ կրծքին ու կհամբուրեմ քո ճակատը, աչքերը:

Քո մայր՝ ՊԵՆԱԳԵՅԱ

Այժմ դու կարո՞ղ ես հասկանալ իմ երջանկութեան
և ուրախութեան ողջ խորութիւնը: Չէ՞ որ այժմ ես
մայր ունեմ:

Սուրեն Ալվարյանը բարձրացավ տեղից: Եղանակը
վերստին պարզել էր և իրիկնահովից սվսվում էին
անտառի կանաչ խոտերը:

1945 թ. Բուզազեյտ

ԱՅՐԻՐ ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Արևն իր ոսկեգօծ ճառագայթներով գրկել էր բլրակների գագաթները, ծառերի կատարներն ու կաթճեսթե դժվարանում էր հրաժեշտ տալ, չէր ուզում գնալ դեպի մայրամուտ:

Օդը հագեցած էր պես-պես ծաղիկների անուշ բուրմունքով: Զիփյուռն այդ բուրմունքն առած իր թևերին, տանում ու սփռում էր քաղաքի փողոցներով, բաց պատուհաններից առատորեն լցնում սենյակները: Իրիկնադեմ էր: Լյուսյան և իր ամուսին՝ ավագ լեյտենանտ Սահակյանը, թև-թևի տված, դանդաղ մտանում էին քաղաքային այգուն:

Տակավին դեռ լույս էր, սակայն այգու ճեմուղիները լցված էին զբոսնող մարդկանցով: Թվում էր, թե այգին հսկայական մի փեթակ է, իսկ մարդիկ ժիր մեղուներ, որ հավաքվել, եկել էին ծծելու ծաղիկների նեկտարը, շնչելու անուշ հոտը: Առանձնապես շատ մարդ էր հավաքվել վոլեյբոլիստների խաղը դիտելու:

Երկու զինվորական, հենված կաստիլներին, լուռ ու անձայն դիտում էին խաղը: Նրանցից մեկը դառնալով դեպի ընկերը, ասաց.

— Կար ժամանակ, երբ վոլեյբոլ խաղալիս ոչ ոք չէր կարող ձեռքիցս գնդակը խլել:

Դա լեյտենանտ Անդրեասն էր:

— Գիտեմ Անդրեյ, գիտեմ,— մեղմ ժպտալով ասաց ընկերը՝ լեյտենանտ Գրիգորը,— Ֆուտբոլ խաղալիս դու աջ ոտքով այնպես ամուր էիր զարկում գնդակին, որ կամ այն պայթում էր, կամ էլ գոլապահը կրճքի ու թևի ցավից տնքալով՝ դուրս էր գալիս խաղից։ Իրա համար էլ քեզ անվանել էին «Երկաթյա ոտք»։

— Իսկ այժմ այդ ոտքն անգոր կախվել է ու փոթանակ նա ինձ, ես եմ նրան քարշ տալիս,— դառնորեն ասաց Անդրիասն ու ձախ ձեռքով շփեց վանդուրները։

— Ոտքդ կլավանա, մի տրտմիր։

— Կլավանա, բայց նա այլևս նույն զարկը չի ունենա և ես ընդմիշտ կադ կմնամ,— այս ասելուն պես Անդրիասն ամուր սեղմեց հենակներն ու թռչկոտալով հեռացավ։

Նրան հետևեց Գրիգորը։

Հանկարծ ձեմուղու մեջ տեղում Անդրիասը քարացածի պես կանգ առավ։ Նա սիսեց ակնապիշ նայել մոտեցող զույգերին։

— Քալիիր, խանգարում ենք մարդկանց երթևեկությանը,— ասաց Գրիգորը և առաջ անցավ։

— Սպասիր, Գրիշա, միթե աչքերս խաբում են ինձ։ Երբ զույգերը խուսափելով նրան դիպչելուց, առաջ անցան, նա չհամբերեց ու զրնգուն ձայնով կանչեց.

— Լյուսյա...

Նրա ձայնից Լյուսյայի մարմնով մի սարսուռ անցավ։ Նա քարացածի պես կանգ առավ տեղում, չհամարձակվելով ետ շրջվել։

— Ի՞նչ ես անում այս քաղաքում, Լյուսյա,— նրան մոտենալով ասաց Անդրիասը և բռնեց Լյուսյայի ձեռքը։

Նրա համար այլևս շրջապատը գոյութիւնն չուներ: Չէ՞ որ նրա հանդեպ կանգնած էր այն գեղեցիկ արարածը, որի պատկերն օր ու գիշեր իր աչքերի առջևից չէր հեռանում:

— Անդրեյ, Անդրեյ, — կարկամելով վերջապես ասաց Լյուսյան, — ծանոթացիր ամուսնուս հետ:

Անդրիասն ուղքի եկավ: Նա նոր նկատեց բարձրահասակ լեյտենանտին, որը քաղաքավարի մի կողմ էր քաշվել: Սառը քրտինքը պատեց Անդրիասի մարմնով:

— Ամուսինդ է, — կակազելով հարցրեց նա՝ սառն ու խիստ նայելով Լյուսյային:

— Այո, ծանոթացիր:

— Ծանոթանալ: չէ, կարիք չկա...

Հանկարծ նա բռնելով Լյուսյայի թևը, մի կողմ քաշեց:

— Արի, արի ինձ հետ, կես ժամ նվազիս ինձ, թող ամուսինդ քիչ սպասի, չէ որ ես շատ եմ սպասել:

Լյուսյան չընդիմացավ: Նա ամուսնուց ներողութիւնն ինդրեց և գնաց Անդրիասի ետևից:

Սահակյանը շատ հանգիստ, ձեռք տարավ դեպի գրպանը, հանեց ծխախոտատուփը, բացեց այն, վերցրեց մեկ զլանակ և նստելով չէմացի նստարանին, վրանց ու սկսեց ծխել:

Լյուսյան, գողութիւն մեջ բռնված փոքրիկ երեխայի վախով լուռ անձայն հետևում էր Անդրիասին:

Սաղարթաբէլու մի ծառի տակ Անդրիասը կանգ առավ:

— Ահա այսպիսի մի ծառ էր, որի ստվերի տակ

առաջին անգամ մենք համբուրվեցինք, ասա, հիշում ես:

— Հիշում եմ, — արցունքներն աչքերին արտասանեց Լյուսյան:

— Երեկոները անհամբեր սպասում էի քեզ այն ծառի տակ... Ի՞նչ գալիս էիր ուշացումով, դադարագողի ու հանկարծակի կախովում վզիցս: Ասա, հիշում ես:

— Հիշում եմ:

— Իսկ հետո, որքան եմ երազել քեզ, մահն անգամ չի կարողացել քո պատկերը ջնջել իմ սրտից: Լյուսյա, Լյուսյա, ապերախտ Լյուսյա...

— Անդրեյ, այդ ինչե՞ր ես ասում, — ճշաց Լյուսյան ու դառնորեն հեկեկաց: Անդրիասը լռեց և սկսեց շոյել Լյուսյայի մազերը: Նա բառ չէր գտնում այլևս արտասանելու: Նա նոր կռահեց, որ գեղեցիկ Լյուսյայից ֆնացել էր միայն նրա պատկերը: Իսկ այն կինը, որի մազերը շոյում է, խորթ է իրեն, օտար: Նրան քիչ հեռու նստած սպասում է ամուսինը: Ի՞նչ իրավունքով է նա շոյում ուրիշի կնոջ մազերը:

Անդրիասը բարձրացրեց Լյուսյայի գլուխը, նայեց նրա աչքերին, ապա իրենից դեն հրեց:

— Ներեցեք, տիկին, ես հանցավոր եմ ձեր առջև...

— Անդրեյ...

— Որքան օտար է այդ ձայնն այլևս ինձ համար:

— Անդրեյ, հասկացիր, որ ես մեղք չունեմ, չէ որ քեզնից երկար ժամանակ ոչ մի տեղեկություն չկար:

— Ես պառկած էի հիվանդանոցում, ծանր վերք ունեի, ես մաքառում էի մահվան դեմ... Բայց դա այլևս ոչ մի նշանակություն չունի: Ես զգում եմ իմ հանցանքը և քեզ բնավ չեմ մեղադրում: Գնա ու հան-

գիտտ սրտով վայելիր քո սերը: Մնաս բարով,
Լյուսյա...

Անդրիասը հենվելով հենակներին, տխուր հեռացավ:
Լյուսյան գամվել էր իր տեղում: Արցունքները խեղ-
դում էին նրան: Հանկարծ զգաց, թե ինչպես մեկը
բռնեց իր ձեռից: Նա բարձրացրեց գլուխը: Այդ Ան-
դրիասն էր: Նա արագ շնչում էր:

— Լյուսյա, աղաչում եմ, եթե նամակներս չես
ոչնչացրել, ապա այրիր նրանց, այրիր իմ գրած նա-
մակները:

Անդրիասը նորից հեռացավ:

Լյուսյային տեսնելով մենակ, Սահակյանը բարձ-
րացավ տեղից, դեն նետեց ծխախոտը, արագորեն մո-
տեցավ նրան:

— Դու լալի՞ս ես, ի՞նչ պատահեց, նա վիրավորե՞ց
քեզ:

Լյուսյան բռնեց Սահակյանի ձեռքը, նայեց նրա
աչքերին:

— Նա իմ մոտիկ ընկերն էր: Ես քեզ նրա մասին
շատ եմ պատմել: Նա երբեք ինձ չի վիրավորել: Այդ ես
նրան վիրավորեցի ծանր, անբուժելի կերպով: Գնանք,
ես այստեղ մնալ չեմ կարող:

...Լյուսյան մտավ իր սենյակը, վառեց լույսը,
մոտեցավ մահճակալին, նետվեց փափուկ անկողնու
վրա, գլուխը թաղեց բարձերի մեջ ու հեկեկաց:

— Այրել նամակները... Ես հնց այրեմ դրանց:

«Այրիր իմ նամակները, աղաչում եմ» — հիշեց նա
Անդրիասի խոսքերը:

Բավականին տխուր մ տքերից հետո նա բարձրա-

ցավ տեղից, սրբեց արցունքներն ու մոտեցավ գլը-
քերի պահարանին: Գեղեցիկ կազմով մի զիրք նրան
ծանոթ էր: Անդրիասի հետ քանի-քանի անգամ էին
կարգացել «Մանոն Լեսկոն», այդ սիրաբորբոք
վեպը:

— Դու Մանոնն ես, Լյուսյա, ես ասպետ դե Գրիոն, —
ասել էր մի անգամ Անդրիասը և համբուրել այնպես,
ինչպես, չէր համբուրել ասպետ դե Գրիոն Մա-
նոնին:

— Օ, ո՛չ, ես Մանոն չեմ, — վիրավորված պատաս-
խանել էր Լյուսյան, — չէ որ ես միայն քեզ եմ սիրում:
Իսկ այժմ երևի Անդրիասը, ինչպես սիրատուչոր
ասպետ դե Գրիոն, կոտորատելով մատները, անդադար
կրկնում է.

— Օ, Լյուսյա, Լյուսյա, ասպետախա Լյուսյա...

Այդ ինչպե՞ս պատահեց, որ նա դառավ «ասպետախա
Լյուսյա»... Միթե՞ մեղավոր է ինքը:

Նա սեր էր փափագում, սեր: Միրո գետը հորդացել,
դուրս էր եկել իր ավերից: Այդ սր պատնեշը կարող
էր դիմանալ սիրո գետի փրփրալից ալիքներին: Ամն-
նառուժեղ պատնեշը՝ դա Անդրիասն էր, որն իր դողտրիկ
անցյալով ու սիրակարոտ վառ նամակներով գրավել
էր Լյուսյային: Բայց հետո լոնց Անդրիասը, լոնց
երկար ու նրանից ոչ մի լուր չկար: Մղկտաց Լյուսյան:
Բայց այդ շատ չտևեց: Նա հանդիպեց Սահակյանին:
Սահակյանը սիրեց Լյուսյային: Նա հետամուտ եղավ
նրան: Լյուսյան նայում էր Սահակյանին ու հիշում
Անդրիասին: Նմանությունը չափազանց մեծ էր: Եվ
Սահակյանն իր սովերով ծածկեց Անդրիասին, մոռաց-
նել տվեց նրան: Ու սիրո գետի հորձանքն իր մեջ

առավ Լյուսյային, պտտեցրեց, քշեց, տարավ նետեց
Սահակյանի գիրկը:

Մեղավոր է, արդյոք, ինքը: Լյուսյան ձեռքն առավ
գիրքը: Ահա այդ գրքի էջերի մեջ, մեկ-մեկ պահված
են Աստրիասի նամակները:

Լյուսյան բացեց գիրքը, թ'ըթեց էջերը, հա-
նեց նամակներից մեկը, երկուդաձությամբ մոտեց-
րեց աչքերին ու սկսեց կարդալ: Իսկ առաջին նամա-
կըն էր, որ Աստրիասը գրել էր ճակատից.

Լ Յ Ո Ի Ս Յ Ա

Գրում եմ իմ առաջին նամակը: Երկու ամիս է,
ինչ մենք բաժանվել ենք իրարից: Սակայն ես քեզ
հիշում եմ ամեն բայրի, ամեն վայրկյան, ամենուրեք
դու ինձ հետ ես:

Լյուսյա: Թշնամին մոտեցել է Կովկասի վե՛սմ
գլուխերին: Նա ոմբակոծում է ձեր Կովկասի դարպասը:
Սակայն մեր կտրիճները պաշտպանում են Կովկասի
դարպասը: Թշնամին չի անցնի:

Այժմ ճակատային կարճատև դադար է: Մնկներէս
վրա գրել եմ քո պատկերը: Նայում եմ ծիծաղուն
դեմքիդ ու ինձ թվում է, թե ես խոսում եմ, իսկ դու
ուշադիր լսում ես ինձ: Քո ժպիտն ինձ խրախուսում
է: Ես պատրաստ եմ կործանել լեռներն ու նրանց
փլատակների տակ թաղել թշնամուն: Չէ՞ որ նա
բաժանեց մեզ իրարից:

Սակայն մենք նարից կհանդիպենք, Լյուսյա:

Մենք կհանդիպենք, երբ կանցնենք թշնամու
գիակների վրայով:

Քո՝ ԱՆԴՐԻԱՍ

Վաղ սոսվոտ է: Սրեք նոր է դուրս գալիս: Իր թարմ ճառագայթները նա զարկել է լեռների գագաթներին ու հետզհետե աշն տարածում է մեր դիրքերի, բլինդաժնելի վրա:

Ես և լեյտենանտ Պողոս Մուրադյանը գտնվում ենք հրամանատարական բլինդաժնում: Պողոսը հիանալի տղա է, բարակիրան, քնքույշ, հմայիչ դեմքով:

Նա նստիկ է լմ դիմաց և հափշտակված կարգում է իր սիլաձից սասցած նամակը: Գեղեցիկ աղջիկը գրում է իր սիրո, հավատարմության մատին, ոգի, հոանդ է տալիս տղային: Պողոսը կարգում է իր Լիզալի նամակը, իսկ ես մաքումս կրկնում եմ քո նամակի ամեն մի բառը: Դարձյալ դու ինձ հետ ես, լմ Լողքին և ես շոյում եմ քո մազերը, գլուխդ սեղմում կրծքիս:

Հանկարծ սթափվում եմ իմ անուրջներից: Սոսում է Պողոսը: Նրա ձայնի մեջ կա և՛ քնքշանք, և՛ Երազանք:

— Սիրում եմ Լիզալին, Սնդրեյ, սիրում եմ ամբողջ հողով: Մենք պատրաստվում էինք ամուսիններ զառնալ, երբ սկսվեց այս չարաբաստիկ պատերազմը: Ճակատ մեկնելիս, երբ կայարանում հրածեչտի վերջին համբույրը սվի Լիզալին, նա ասաց. «Պողոս, հիշիր մեր հարսանիքը, դա հաղթանակի հարսանիք պետք է լինի, չէ՞ որ այն տեղի կուռնենա թշնամու՞ ջախջախելուց հետո»: Լսում ես, Սնդրեյ, հաղթանակի հարսանիք պետք է սարքենք կովից հետո:

Նա նաւակը սեղմեց կլ ծգին ու երջանիկ ժպտաց:

Լյուսյա, հրեշտակս: Ես հանում եմ քո լուսանկարը,
նայում չքնադ դեմքիդ ու շնչում:

— «Այդ ձեր աստվածային սերն է մեզ կյանք ու
եռանդ տալիս: Հանուն ձեր սիրո մենք մաքառում
ենք ապրելու համար: Դուք ձեր սիրով մեզ հետ եք,
ձակատում, խրամատում, կովում եք մեզ հետ կողք-
կողքի վայրագ թշնամու դեմ, և ասացեք, կարո՞ղ է
գտնվել աշխարհում այնպիսի մի ուժ, որ հաղթահարի
մեզ: Ո՛չ, չկա այդպիսի մի ուժ: Անհաղթ է նա, ում
սրտում բոցկլտում է մաքուր, անկեղծ սերը:

Քո՝ ԱՆԴՐԻԱՍ

Լ Յ Ո Ի Ս Յ Ա

Լեռները հագել են սպիտակ սավան:

Ձյունը ծածկել է դաշտերը, բլինդաժները:

Այսօր մենք պատրաստվում ենք գրոհի: Գրոհից
առաջ գրում եմ քեզ այս փոքրիկ նամակը: Մեր
բլինդաժում սարսափելի ցուրտ է, սակայն ես այդ
չեմ զգում: Ձախ կրծքիս փոքրիկ գրպանում կա քո
լուսանկարը: Այդ նա է ինձ տաք արյուն տալիս: Դու
ինձ հետ ես, իմ կողքին, մեկ բլինդաժում, մեկ խրա-
մատում:

Շուտով գրոհի կգնանք: Այս քանի՞երրորդ գրոհն է,
որին մասնակցում եմ ես, հաշիվը կորցրել եմ: Սակայն
վախի, տատանման ոչ մի նշույլ չկա իմ սրտում: Ձե՞
որ դու ինձ հետ ես, Լյուսյա:

Քո՝ ԱՆԴՐԻԱՍ

Գիտեմ, այս նամակը կհուզի սիրտդ, քո աչքերից կկաթեն արցունքի կաթիլներ ու կթրջեն նամակիս տողերը: Բայց լսիր, սիրելիս:

...Մութ գիշեր էր: Մենք հագել էինք սպիտակ սավանններ ու ձյան վրայով փորսող էինք տալիս:

Թշնամին կծկվել էր իր դիրքերում ու կենդանության նշան չէր ցույց տալիս: Բղրգացնելով շրջապատը, մեր հրետանավորները բացել էին ուժեղ կրակ: Ծանր արկերն անավոր սվվոցներով թռչում էին մեր գլխավերևով: Իսկ մենք անընդհատ առաջ էինք սողում:

Ես ու Պողոսը սողում էինք կողք-կողքի: Նա երբեմն դառնում էր դեպի կապավոր բանակայինն ու ցածր ձայնով հրամաններ արձակում:

— Գուրգեն, սողա առաջ, ասա Սանթրոսյանին, որ ես կարգադրում եմ նրան իր գնդացրով ետ մնալ: Հասկացա՞ր:

— Հասկացա:

— Շտապիր:

Կապավորը կատվի արագությամբ առաջ անցավ և կորավ մութ խավարի մեջ:

— Շատ տաքարյունն է այդ Սանթրոսյանը: Ուզում է առաջինն ինքը նետվել թշնամու վրա, այն էլ գնդացրով: Նա պետք է ետ մնա ու դնդացրային կրակով օժանդակի մարտիկների առաջ գնալուն: Կարծես թե տակտիկական օրենքները նրա համար չեն գրված, — կիսաձայն ասում էր Պողոսը:

Պողոսն իրեն շատ ամուր էր պահում: Թվում էր, թե նրա նրբակազմ մարմնի մեջ բաբախում է առյուծի սիրտ: Նա շատ հանգիստ էր ու սառն: Չնայած դրան, երբեմն կատակներ էլ էր անում:

— Քիչ է մնում հա, Անդրեյ, շուտով Ֆրիցներին կտաքացնենք, անիրավները երեւի մրսել են:

Հանկարծ լռեց հրետանին: Պատռելով մութը, վեր սլացավ լուսավոր հրթիռը: Մենք խսկուշն վեր բարձրացանք և «ուռուռ» գոչելով առաջ նետվեցինք: Ահը սլատեց գերմանացիներին: Նրանք օդում կախեցին անթիվ, անհամար հրթիռները: Շրջապատը պարզ երևում էր, ինչպես ցերեկ:

Ես աշխատում էի Պողոսից ետ չմնալ, չկորցնել նրան աչքիցս: Ահա նա հրացանն առաջ պարզած, նետվեց թշնամու գնդացրոյին կետի վրա: Առաջին գնդակով գնդացրորդին գետին տապալեց, երկրորդին սրախողող արավ, իսկ երրորդն ուշքի գալով՝ նետվեց Պողոսի վրա: Ես խսկուշն ցատկեցի առաջ, հրացանիս կոթով մի հարված հասցրի նրա գլխին ու նա անշունչ տապալվեց գետին:

— Առաջ, — դոչեց Պողոսը և հանկարծ նա բռնեց ձախ կողքից, մի պահ մեխվածի պես կանգ առավ տեղում, երեբաց, հրացանը ցած ընկավ ձեռքից, իսկ հետո թեքվեց կողքի վրա ու նստեց գետնին:

— Ի՞նչ պատահեց քեզ, — հարցրի ես ու նետվեցի դեպի ընկերս:

Նա թուշլ ձայնով գեկուցեց:

— Ընկեր վաշտի հրամանատարի տեղակալ, ես ծանր վերք ստացա, թուշլ տվեք դասակա հանձնել օգնականիս...

Նրա օգնականը՝ ավագ սերժանտ Մխիթարյանը դասակի հրամանատարութունն իր վրա վերցնելով, առաջ գնաց:

Պողոսն արյունաքամ էր լինում: Ես հանեցի ան-

ձեռնմխելի փաթաթանը, կապեցի նրա վերջը: Արյան հոսանքը դադարեց:

— Ժամանակ մի կորցնի, Անդրեյ, անօգուտ են ճիգերդ, վերքս մահացու է, դու թող ինձ ու գնա...

Ես նրան տարա թշնամուց խլած գնդացրային անձնակազմի բլինդաժը, համեմատաբար ապահով մի տեղ:

Նա շնչում էր ծանր ու այլևս ձայն չէր հանում:

Լուսանում էր: Ես շտապում էի տանել նրան մերոնց մոտ: Սակայն յուրաքանչյուր շարժում նրան անասելի ցավ էր պատճառում: Նա գոռում, ճչում, իսկ հետո խնդրում էր.

— Թող ինձ հանգիստ, Անդրեյ, դու գնա, ազատիր քեզ, չէ՞ որ մենակ ենք մնացել:

Ես նրան դնում էի լետնին, սառույցի վրա, ինքս էլ դադար առնում:

— Զո՛ւր, — շշնջաց Պողոսն ինքնամոռացման մեջ:

Ես հանեցի սպանված գերմանացու կողքից կախված սրվակը: Այդտեղ օղի կար: Օղին ուչքի բերեց Պողոսին:

Բավականին լուսացել էր:

Մենք գտնվում էինք փոսի մեջ, մեր գլխավերևով այս ու այն կողմ վզալուով թռչում էին գնդակները:

Զգուշությամբ գլուխս դուրս հանեցի փոսից ու դիտեցի շրջապատս: Ըստ երևույթին հետախուզիչ գրոհից հետո մերոնք նորից ետ էին գնացել ու դիրք մտել: Այսպիսով, ես ու Պողոսը մնացել էինք մերոնց ու թշնամու միջև: Ոչ առաջ կարող էինք գնալ, ոչ էլ՝ հտ:

Պողոսին աչք մասին ոչինչ չհայտնեցի: Սակայն

նա, որ անթարթ աչքերով նայում էր պաղ երկնքին, հանգիստ ձայնով արտասանեց.

— Դրուժյունը պարզ է: Մենք մնացել ենք երկու կրակի մեջ: Փր'լուժյունն չկա, իսկ մահը մոտեցել է:

Նա հոգոյ հանեց, ծանր, շոտ ծանր ու հետո փակեց աչքերը: Ես ողջ մարմնով ցնցվեցի:

— Պողոս, — ճշացի, — ես կփրկեմ քեզ, ուշքի եկ, նա բացեց աչքերը:

— Անդրեյ, լսիր ինձ, — խոսեց նա, — վերցրու գրք պանիցս Լիզայի նկարն ու նամակները, խոսք տուր, որ դրանք կհանձնես Լիզային, կասես...

Նա չավարտեց իր ասելիքը: Թուլացած ձեռքով սկսեց փութորեն արձակել գրքպանի կոճակները: Բայց աղջկա լուսանլարը չկարողացավ հանել...

Ես հանեցի Լիզայի լուսանկարը: Պողոսը շնչաց.

— Մոտեցրու... աչքերիս...

Լուսանկարը բռնեցի նրա աչքերի գիմայ: Նա թուլ, թուլ ժպտաց:

— Լիզա, թանկագին էակ...

Նա երկար նայեց լուսանկարին, շրթունքները հպեց նրան, իսկ հետո հանկարծ ինչ որ բան վերհիշելով, լայն բացեց աչքերը և շտապ-շտապ խոսեց.

— Անդրեյ, իսկ հաղթանակի հարսանիքը միթե չպետք է կատարենք, հը, ինչ է գերմանացին, ով է նա, որ ճգնում է խախտել Լիզայիս հաղթանակի հարսանիքը:

Նա ձեռքերով հենվեց գետնին և պատյաստվում էր ոտքի բարձրանալ:

— Հանգուտացիր, Պողոս, հաղթանակի հարսանիքը

չի խափանվի, զերմանացին անդոր է այն խափանելու, մենք կկատարենք քո և Լիզայի հարսանիքը:

— Օ՛հ, ոչ Սնդրեյ, իմ բանը վերջացած է... Կասես Լիզային, որ ես իմ պարտքը նրա ու Հայրենքիս հանդեպ սրբությամբ կատարեցի:

Խելացնոր նայում էի մահամերձ վերք ստացած ընկերոջս թարտոցներին: Ես պատրաստ էի կյանքիս գնով փրկել նրան. բայց ինչպես հասցնեի նրան մերոնց:

Աննկատելի անցավ օրը: Մութը փռեց իր թևերը:

Ես Պողոսին ամրացրի մեջքիս ու սկսեցի սողալ: Ո՛ւր էի սողում, չգիտեի: Գուցե մերոնք փոխել են դիրքերը և այնտեղ այժմ գտնվում է թշնամին:

Ամբողջ գիշեր առաջ սողացի:

Երբ լուսացավ, մենք գտնվում էինք բաց ու հարթ տարածության վրա: Մեր շարժումը նկատվեց: Մեզ վրա սկսեցին կրակել: Ովքեր էին կրակում, մերձք, թե՛ թշնամին: Դժվար էր հասկանալ: Ես անշարժացա: Աչքերով սկսեցի թափանցել շուրջ բոլորս: Չկար մտաիկ ոչ փոս, ոչ էլ ծածկոց: Ի՞նչ անել: Անհնարին էր երկար այդպես անշարժ պատկած մնալ սառն ձյան վրա: Ուղեղս անզաղար աշխատում էր: Հարկավոր էր մի հնար գտնել այդ դրությունից դուրս գալու:

Մեր շուրջ բոլորը փոփած էին անհամար դիակներ: Ըստ երևույթին այստեղ տեղի էր ունեցել դաժան ձեռնաւարտ: Շատ դիակներ սվինահար էին արված: Ես զգուշությամբ և չափազանց աննկատելի՝ դիակ-դիակի և տեխից քաշեցի ու դարսեցի չորս կողմը: Այդպիսով, դիակներից պատրաստեցի օղակյա պատնեշ: Թշնամին չէր կարող նկատել մեր շարժումը:

Ես հոգնել էի: Հարմարվեցի Պողոսի կողքին և աշխատեցի քիչ հանգստացնել լարված ջղերս:

Սարսափելի քաղցն այժմ զգացնել տվեց իրեն: Բայց ուտելու ոչինչ չկար մտա: Երկու օր էր, որ բան չէի դրել բերանս: Ես սողացի դեպի դիակներէց մեկը: Շրջեցի նրան փորի վրա: Հանեցի մեջքէց պայուսակը: Բացեցի: Սյնտեղ սառած հաց ու երշիկ կար: Սկսեցի ազահորեն ուտել: Մի կտոր բերի Պողոսի համար... Բայց Պողոսն արդեն սառել էր: Նա չէր շնչում: Գլուխս դրի նրա կրծքին ու առաջին անգամ իմ կյանքում դառնորեն հեկեկացի...

Թեթև սառը քամին ծածանում էր զլխարկի տակից դուրս թափված Պողոսի սև մազերի փնջիկը: Չյան փաթիլները պատվելով օդում՝ մեկ առ մեկ իջնում էին նրա լայն ու գեղեցիկ ճակատին: Ես անզազար համբուրում էի նրա ճակատը, դալուկ դեմքը:

Ինչքան ժամանակ անցավ: Որոշել դժվարանում էի: Չորս կողմս դարձյալ մոռթն էր: Ընկերոջս դիակը կապեցի մեջքիս ու առաջ սողացի: Հազիվ էի շարժվում:

Լուսանում էր: Այդ քանի՜երրորդ անգամն էր լուսանում: Ձէի կարողանում մտաբերել: Մտել էի փոսը, Պողոսին դրել մեջքի վրա: Նրա աչքերը փակ էին, ընդմիտ, հավիտյան...

«Ո՞վ է, ի՞նչ է գերմանացին, որ կարողանա խափանել մեր հաղթանակի հարսանիքը», — հիշեցի Պողոսի խոսքերը:

Իմ մեջ պոռթկաց ապրելու ու կավելու մեծ տենչը: Ես շա՛կա առա մեռած ընկերոջս մարմինն ու առաջ

քայլեցի: Ես նրան դուրս բերի մերոնց մոտ ու պատ-
վով թաղեցի:

Լյուսյա, քո պատկերը ձախ կրծքիս վրա է: Ես
նորից ապրում եմ, նոր թափ ու ոգի առած: Ես ապ-
րում եմ մարտնչելու համար:

Քո՛ ԱՆԴՐԻԱՍ

Լ Յ Ո Ի Ս Յ Ա

Այսօր ապրիլի մեկն է: Եղանակն արտասովոր է:
Լեռներից ու բլրակներից խոխոջալով ցած են վազում
փոքրիկ առվակներ:

Բացված գետնի վրա երևում է կանաչը: Թռչուն-
ներն ուրախ-ուրախ ձախրում են օդում ու զվարթ
գեղգեղում: Հիանալի եղանակն ինձ արբեցրել է:
Ամենից առաջ ես եմ շտապում: Չէ որ թշնամին նա-
հանջում է, իսկ մենք նրան հետապնդում ենք: Ես
շտապում եմ: Բարձրանում եմ բլրակները, սուր աչ-
քերով թափանցում կիրճերը, ամենուրեք փնորում
թշնամուն:

Ծեր կովկասի լեռներն ու բլրակները մաքուր են:
Չկա ալյես թշնամին: Ահա գեղատեսիլ լեռն իր խորը
կրծքին է սեղմել մաքուր սալաքարի լայն կտորը: Սալի
վրայով ցած է հոսում պարզ, հստակ ջուրը: Ջուրը
հոսում է բարակ, դանդաղ ու մեղմ կարկաչով:
Արևի ճառագայթների տակ նա պեծին-պեծին է
տալիս: Ես մի պահ կանգ եմ առնում, թեքվում գեպի
սալը, շրթունքներս հպում նրան ու ազահորեն ծծում
ջուրը:

Հստակ ջրի մեջ փայլում են քո աչքերը: Եվ ինձ
թվում է, թե համբուրում եմ քո սևորակ աչքերը...

Վերջապես բարձրանում եմ, ուղղվում, նայում
լեռներին, բարձր ու լազուր երկնքին և մի միտք է
ինձ համակում.

— Առանց դեպի հաղթանակ...

Եվ մենք առաջ ենք շարժվում:

Քո՝ ԱՆԴՐԻԱՍ

... Լյուսյան վերջացրեց նամակների ընթերցումը:
Սրբուհները, ինչպես նաև հատիկներ, մեկ-մեկ ցած
էին պլորվում այտերից.

Նա հավաքեց արցունքներով ողողած նամակները,
հպեց շրթուհներին, ապա շնչաց.

— Այրե՛լ... Օ, ոչ... Թանկ են այդ նամակներն ինձ
համար և ես նրանց երբեք չեմ այրի:

1944 թ. Ուրախկ.

ՆԱ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆ ԷՐ

Հսիր, Աշխեն, սիրելիս, երբ նայում եմ քո տառապանքներին, սիրտս կտոր-կտոր է լինում: Դու դեռ սիրում ես նրան ու անհամբեր սպասում նրա վերադարձին:

Մի սպասիր նրան այլևս, Աշխեն, մեռածները չեն վերադառնա, ետ չի գառնա նաև նա:

Ես քեզ սիրում եմ, Աշխեն, չեմ ուզում, որ դու մնաս մոլորության մեջ, այդ պատճառով էլ թաքցնել քեզնից ճշմարտությունը չեմ կարող:

Հսիր անպինս, լսիր այս պատմությունը...

...Հիշում ես, Աշխեն, 1941 թվի հունիսի 22-ը: Խարզախ թշնամին անսպասելիորեն հարձակվեց մեր երկրի վրա և անխնայորեն սկսեց ոմբակոծել մեր քաղաքները, գյուղերը, ոչնչացնել խաղաղ բնակիչներին:

Ես, դու և նա այն ժամանակ հաջող քննությունից հետո, արդեն ընդունվել էինք մանկավարժական ինստիտուտի գրական ֆակուլտետի առաջին կուրսը: Մենք անչափ ուրախ էինք: Մեզնից ամեն մեկն արդեն պարզ տեսնում էր իր վառ ու սքանչելի ապագան: Մակայն ուխտադրուժ թշնամու հարձակումը խափանեց մեր ծրագրերը ու վրդովեց մեր դուլալ սիրտը:

Ամենից շատ դու էիր վրդովվել: Հիշում եմ, դու

սեղմել էիր բուռնցքներդ, սպառնական ու անեղ ձայնով ասում էիր,

— Թշնամու խարդախությունն անպատիժ չի մնա: Մեր սրբազան հողը պաշտպանելու կենի ժողովուրդը, իր զայրութիւնը կ'թափի թշնամու դէմին: Ես, ես ևս ձակատ պիտի մեկնեմ:

Դու հենց նույն օրը վազեցիր կոմերիտմիութեայն շրջկոմը, որ կամավոր գրվես, բայց այնտեղ քեզ խըստիվ ասացին.

— Շարունակեցեք ձեր ուսումը, հարկավոր կլինեք, կկանչենք:

Հաջորդ օրը ես և նա զինկոմատից ծանուցագիր ստացանք:

Դու նախանձով էիր նայում մեզ, մէքանի անգամ կարդացիր ծանուցագրերը, իսկ հետո լացակումած ասացիր.

— Բախտավորներ, Գնում եք Հայրենիք պաշտպանելու:

Նա քեզ սիրովում էր: Դու գլուխդ դրել էիր նրա կրծքին, ցածր ու մեղմ լալիս էիր:

Ահա այդպես, ամեն անգամ ցավով էի դիտում քեզ, երբ դու այդպիսի բողոքներին նրան ավելի մոտ էիր գտնում, քան թե ինձ:

Ճիշտ է, դու խելացի ազնիվ ես, գիտեիր, որ մենք երկուսս էլ հավասարապես սիրում էինք քեզ: Մենք առանձին-առանձին հայտնել էինք քեզ մեր սեղը, սակայն դու ոչ ինձ, ոչ էլ նրան դրական պատասխան չէիր տվել: Ես ու նա գտնվում էինք տարակուսանքի մեջ: Հաճախակի վիճում էինք, թե դու մեզնից ում ես սիրում:

Ես հիշում եմ քո խոսքերը, երբ մեզ ճակատ ճամբելու վերջին ըոպեին ասացիր:

— Իմ սիրելիներս, ես ձեզ կապասեմ... Ձեմ թաքցրնում, երկուսիդ էլ սիրում եմ, որպես մտաիկ, անզին հարազատներիս... Մարտնչեցեք անիծված թշնամուդեմ, մարտնչեցեք մինչև վերջնական հաղթանակը: Ով շատ ոչնչացնի այդ գարշելիներին, ում կուրծքը ծածկված կլինի շատ շքանշաններով, ես կդառնամ նրա կինը: Համաձայն եք:

Մենք համաձայն էինք, Աշխեն: Մենք երեքով թևանցուկ ման էինք գալիս էշելոնի երկարությամբ, խոսում, ծիծաղում, կատակում: Թվում էր, թե մենք ճակատ չէինք մեկնում, այլ ինչ որ մի զբոսանքի:

Երբ շոգեքարշը սուլեց, մենք մի պահ նայեցինք իրար: Դու ցածր, դողդողադող ձայնով ասացիր.

— Յանկանում եմ ձեզ արագ ու հաղթական վերադարձ, իմ սիրելիներս:

Գնացքը շարժվեց: Ես նայեցի նրան: Նրա աչքերից ցած էին զլորվում արցունքի կաթիլներ: Այո, Աշխեն, նա լալիս էր: Ես զզվանքով շրջվեցի նրանից:

... Թշնամին ամուր մոտեցել էր կովկասի լեռներին: Նա ճգնում էր գրավել Գրոզնին, Վլադիկավկազը, իսկ հետո շարժվել մեր հարազատ Բաքվի վրա:

Մեր առջև խնդիր էր դրված՝ պաշտպանողական մարտեր վարել, ջլատել, թուլացնել թշնամու ուժերը, իսկ հետո անսպասելի մի հարվածով հարձակման անցնել և շարժել նրան հեռու, շատ հեռու:

Մենք խորը խրվեցինք հողի մեջ, պատրաստեցինք

ամբություններ ու սկսեցինք հաջողութեամբ ետ վանել թշնամու կատաղի գրոհները:

Ես ու նա գտնվում էինք միևնույն հրաձգային վաշտում: Երկուսս էլ ունեինք ավագ սերժանտի կոչում, երկուսս էլ ջոկի հրամանատար էինք ու միևնույն խրամատում, իրար «գրացիներ»:

Դա 1942 թվականի սեպտեմբերի 22-ին էր: Վաղ առավոտվանից թշնամին սկսեց ուժեղ հրանոթային կրակը: Մենք նստել էինք խրամատի հատակին ու չէինք համարձակվում գլուխներս վեր բարձրացնել: Կեսօր էր, երբ օդում հայտնվեցին թշնամու սավառնակները: Քիչ անց, նրանք սկսեցին ցած թափել ծանր ուղմերը մեր առաջավոր կրակագծերի վրա:

Պայթում էին ուղմերը, պայթում արկերը, դողում, դրդում էր երկիրը, կտոր-կտոր լինում, թանձր փոշին ծածկել էր արևի ճառագայթները, շուրջ բոլորը պատել էր հեղձուցիչ ծխով:

Ծուխն ու խանձահոտը շնչահեղձ էր անում մարդկանց: Մարդիկ մեռնում էին արկերի, ուղմերի բեկորներից, կենդանի մնացածները խլանում էին ահեղի դրդյուններից:

Շուտով, շատ շուտով թշնամին պետք է հարձակման անցներ:

— Ոչ մի քայլ ետ, պահպանել դիրքերը...

Այսպես էր հրամանը: Մեզնից ամեն մեկը գիտեր, եթե թշնամու գրոհը չխափանվի, ապա ամեն ինչ կորած է:

Ես նստել էի խրամատի հատակին ու մտածում էի նրա մասին: Ինչպե՞ս է նա իրեն զգում այժմ, կենդանի՞ է դեռ. Ձէ որ ես ու նա մանկութեան ընկեր-

հեր էինք, սովորել էինք միևնույն դպրոցում, միասին
ավարտել, միասին էլ սիրեցինք մի աղջկա: Ինչ որ
տարօրինակ ճակատագրական կապ կար մեր կյանքի
մեջ: Ահա դարձյալ երկուսով իրար շատ մոտ կողք-կողքի
խրամատում, կովում ենք Հայրենիքի անկախության
համար:

Սակայն մտածել այդ ուղղությամբ երկար չկա-
րողացա:

Անսպասելի կերպով դադարեց հրետանային կրակը
և գերմանացիները ողջ հասակով, աղաղակ բարձրաց-
նելով, գրոհի անցան:

— Զնկ, — հրաման տվի, — շարժվող թշնամու շղթայի
վրա, կրակ:

Տեղաց հրացանային համադարկը, հետո երկրորդը,
գործի անցան գնդացիները, սկսեց աշխատել մեր
սուրբ հրետանին:

— Կրակ, կրակ, — գոռում էի ես դայրադին: Թշնա-
մու զինվորները հնձված խոտի պես գլորվում էին
գետին: Նա այլևս մի տեղ կանգնել չէի կարողանում:
Նա պատրաստ էի դուրս թռչել խրամատից և հարձակ-
վել թշնամու վրա: Սակայն վաշտի հրամանատարը
կարգադրել էր տեղից չշարժվել:

Թշնամին երեբաց: Նա շատ գոհեր տվեց: Նրա
գրոհը խեղդվեց: Նա ստիպված էր ետ գնալ և նորից
մտնել իր հին դիրքերը: Սակայն մենք ևս բավականին
գոհեր ունեինք: Միայն իմ ջոկից շարքից դուրս
եկան չորս հոգի: Բայց չէ՞ որ հաղթանակը մերն էր:

Հանկարծակի տիրեց ճակատային դադարը: Մար-
տիկները սկսեցին իրենց վրայից թափ տալ փոշին:

Վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Գորլովը,

փոշոտ սաղավարտը գլխին, մոտեցավ ինձ: Նա ամուր
սեղմեց ձեռս ու ասաց.

— Ապրես, Սարգսյան, շնորհավորում եմ քո դիմաց-
կունուլթյան համար, դու քեզ քաջի պես էիր պահում:
Քո օրինակը խրախուսում էր շատերին:

Ես ոչինչ չէի հասկանում: Ես այլ ժամանակ չէի
էլ լսում ավագ լեյտենանտին: Ես դարձացած նայում
էի իմ մանկուլթյան ընկերոջը: Ես նայում էի նրան,
Աշխեն: Նա երկու զինվորով կանգնել էր վաշտի հրա-
մանատարի ետևը: Նրա դեմքը դժգուշն էր, նա կար-
ծես թե տասը տարով ծերացած լիներ:

— Այդ թիւն է պատահել նրան, ընկեր ավագ լեյ-
տենանտ,— հարցրի ես:

Ավագ լեյտենանտը զայրուլթով նայեց նրան:

— Կորցրեց իր բոլոր մարդկանց, շիոթվեց վախից,
ուզում էր փախուստ տալ: Վերցրեք դրան ձեր ջոկը
և խստիվ հետևեցե՛ք, որ հիմարություններ չանի:

Ես չէի հավատում ոչ ականջներիս, ոչ էլ աչքերիս:
Քայց ես նրան պարզ տեսնում էի ու շարունակ ականջ-
ներումս հնչում էին ավագ լեյտենանտի բառերը.
«Կորցրեց իր մարդկանց, շիոթվեց վախից, ուզում էր
փախուստ տալ»:

Ես այլևս չէի կարողանում նայել վախից սփրթնած
նրա դեմքին: Սակայն այդ օրը նրան ոչինչ չասացի:
Եվ այդպես նա ընկավ իմ ջոկը: Նա մռայլ էր, լուս-
կյաց և մահվան չափ վախեցած:

Անցան օրեր:

Թշնամին այլևս հարձակողական գործողություններ
չէր ձեռնարկում: Երկու կողմերից ևս աշխատում էին

հետախուզիչ խմբերը: Մյդ հնարավորութունն էր տալիս մեզ, շարքային մարտիկներին, կարգի բերելու մեր հոգնատանջ անդամները:

Հիանալի տաք եղանակ էր: Արևը գտնվում էր զենիթում: Նրա ճառագայթների ջերմութունը թափանցել էր խրամատի ներսը և մարտիկները զանազան դիրք ընդունած, հաճելի տաքանում էին:

Լուռ էր թշնամին, լուռ էինք նաև մենք: Սյդպիսի խաղաղ դադար ճակատում շատ հազվագյուտ էր տեղի ունենում:

Մեր առաջավոր գիծը եկավ գնդի փոստատարը: Նա ինձ նամակ մեկնեց: Ես իսկույն ճանաչեցի ըո ձեռագիրը, Աշխեն, և իմ սիրան ուրախութունից սկսեց տրոփել: Սակայն դու մեծ մասամբ հետաքրքրվում էիր նրանով: Ես մոտեցա նրան: Նա խենթի պես պպզել ու մեջքով հենվել էր խրամատի պատին: Ես ձայն տվի նրան: Նա ապուշի պես նայեց ինձ:

— Աշխենից նամակ, սո, կարդա:

Չեմ թաքցնում, նրա դեմքը փայլեց: Նա կարծես թե սթափվեց ծանր, կոշմարային երազից, բարձրացավ տեղից և արադորեն ձեռիցս խլեց նամակն ու սկսեց ազահորեն լափել տողերը:

Դու նրան զրում էիր, որ անհամբեր սպասում ես մեզ երկուսիս, սպասում այն բաղձալի օրվան, երբ մենք ետ կդառնանք որպես հերոսներ, որպես հաղթողներ:

— Դու տեսնում ես, Աշոտ, — ասացի ես նրան, երբ չի բջացրեց նամակի ընթերցումը, — Աշխենը կամենում է, որպեսզի մենք ետ դառնանք փառքով, հերոսի

կոչումով: Եկ խոսք տանք իրար, որ այդպիսին կլինենք:

Նրա աչքերը փայլատակեցին, նա նայեց ինձ ու հարցրեց.

— Դու Աշխենին իմ աստիճանազրկման մասին ոչինչ չե՞ս գրել:

— Ո՛չ, չեմ գրել:

Նա ուրախացավ ու սեղմեց ձեռք:

— Շնորհակալ եմ: Ճիշտն ասած ես անչափ վախեցում էի, որ դու այդ մասին նրան գրած կլինես: Ես, ճիշտ է, սկզբում ինձ կորցրի, իսկ այժմ կարծես թե ընտելանում եմ այս կրակոցներին... Ես սիրում եմ Աշխենին, այդ պատճառով խոսք եմ տալիս վերադառնալ այնպիսին, որպիսին նա է կամենում ինձ տեսնել:

Նա այս բառերն արտասանեց չափազանց անվստահ, թախծոտ տոնով: Զգացվում էր, որ նա ինքն այնքան էլ վստահ չէր իր խոսքերի իսկությանը:

— Լսիր, Աշոտ, — ասացի ես, — արի մենք իրար մեկ խոսք էլ տանք:

— Ի՞նչ խոսք:

— Ահա թե ինչ: Եթե ես երբեիցե վախկոտություն հայտարարեմ, կամ ետ փախչեմ, դու ինձ զնդակահարի: Իսկ եթե այդ դու անես, ապա ես քեզ տեղն ու տեղը կզնդակահարեմ:

Նա չուեց աչքերն ու զարմացած նայեց ինձ:

— Դու, ի՞նչ է, ուզում ես այդ մասին գրել Աշխենին:

— Ոչ, այդ մասին Աշխենին չենք գրի, այս պայմանը կմնա միայն մեր մեջ:

— Ինչի՞ համար է այդ պայմանը, Գրիգոր, միթե՞ դու չես տեսնում, որ գերմանացիները ուժեղ են:

— Է, հետո ի՞նչ:

— Չէ՞ որ մենք երկուսս էլ ստիպված կլինենք ետ գնալ, կամ էլ...

— Կամ էլ ի՞նչ:

— Կամ էլ՝ ձեռներս վեր բարձրացնել անձնատուր լինելու համար:

Ես բնազդորեն բարձրացրի ավտոմատս:

— Այդ ինչե՞ր են ցնդաբանում:

— Դու մի բարկանա, Գրիգոր, այլ ուղիղ նայի՛ր ճշմարիտ իրականությանը:

— Լռի՛ր, այլևս մի խոսի՛ր, զիտցի՛ր, եթե մենք մեկ քայլ անգամ ետ գնանք, ապա ինքն Աշխենը իր փոքրիկ ձեռիկներով մեզ կգնդակահարի: Միթե՞ դու չկարդացիր նրա նամակը, «Մեռնք, կամ վնասաբեր-
ձեք որպես հերոսներ»:

Նա դեղնեց քաթանի պես, իսկ հետո կցկտուր արտասանեց.

— Շատ լավ, համաձայն եմ, թող լինի այնպես, ինչպես պայմանավորվեցինք:

Խաղաղ ու հանդարտ անցավ օրը: Վեց ամիս տեվոզ պաշտպանական մարտերից հետո, այդ առաջին անգամն էր, որ ես այդպես լավ հանգստացա: Զարթնեցի այն ժամանակ, երբ լուսնի դեղնագունը սկավառակը մեղմորեն բարձրանում էր խանձահոտություն փչող տափաստանի վրա: Հրացանային ոչ մի կրակոց չէր լավում: Այդ ինձ այնքան էլ չզարմացրեց, որովհետև գիտեի այդպիսի խաղաղ դադար տեղի է ունե-

նում միայն նախապատրաստվող գրոհից առաջ: Մա-
կայն այդ գիշեր բնավ չէի մտածում գրոհի մասին:
Ես դուրս ելա խրամատից, սողացի հինգ-վեց մետր,
ծնոտս իջեցրի տաք հողի վրա ու սկսեցի անթարթ
աչքերով նայել լուսնին: Լուսինն այնքան մոտ էր
երևում, որ թվում էր, թե շրթունքներս կհպվեն նրան:
Ոչ, ես չէի մտածում, որ գուցե մեկ բուսից, կամ
մեկ վայրկյանից հետո կճայթի սարսափելի մարտը և
այս գիշերն ու այս լուսինը վերջինը կլինեն իմ կյան-
քում: Ոչ, Աշխեն, այդ մասին չէի մտածում: Ես
վերհիշում էի այն օրերը, երբ մենք ուրախ ծիծաղով,
խմբով վերադառնում էինք գրական երեկույթից:
Մենք քննադատության էինք ենթարկում ոչ միայն հայ
գրականության կլասիկների ստեղծագործությունները,
այլև մեր հասակակից ընկերների մատաղ աշխատու-
թյունները: Ես մտաբերում էի քեզ, Աշխեն, թե ինչ-
պես դու ջերմ ելույթներ էիր ունենում ու գովաբա-
նում մաքուր լիբիկան: Դու ինքդ ամբողջովին ըն-
քույշ լիբիկա էիր, սիրելի Աշխեն: Ես այնքան էի տար-
վել այդ քաղցր մտորումներով, որ բնավ չնկատեցի,
թե ինչպես ինձ մոտեցավ կապավորը.

— Ընկեր ավագ սերժանտ, ձեզ իր մոտ է կանչում
վաշտի հրամանատարը:

Ես իսկույն անցա հրամանատարական ըլինդաժը:
Ավագ լեյտենանտը նստել էր հողից պատրաստած
սեղանի մոտ, ինչ որ գծումներ էր կատարում:

— Ներկայանում եմ ձեր հրամանով:

— Նստեցեք, ընկեր Սարգսյան:

Ես նստեցի: Նա նայեց աչքերիս ու ասաց.

— Այսօր, առավոտյան, սպանվեց ձեր դասակի հրամանատարը:

Ես բարձրացա տեղիցս: Գիտեի, որ դասակիս հրամանատարը, լեյտենանտ Պարչենկոն ուղարկված էր հետախուզության:

— Այո, նա իր փոքրիկ խմբով ուղարկվել էր հետազոտելու թշնամու կրակային կետերը: Սակայն գերմանացիները ծուղակի մեջ գցին նրանց ու բռնորին կոտորեցին: Իվիլիզիայի հրամանատարի կողմից դրված խնդիրը պետք է կատարենք ինչ գնով էլ ուզում է լինի: Ձեզ նշանակում եմ դասակի հրամանատար: Այսօր ժամը 24—00 ամբողջ վաշտով պետք է հետախուզիչ մարտի դուրս գանք: Հասկացա՞ք դուք ինձ:

— Հասկացա, ընկեր ավագ լեյտենանտ:

— Ձեր դասակը հարձակվում է ձախ թևից: Ըստ տվյալների, այստեղ են գտնվում թշնամու հիմնական կրակային կետերը: Պետք է որոշել նրանց ճիշտ դասավորումը և նշել քարտեզի վրա: Կարո՞ղ եք այդ անել:

— Կարող եմ:

— Վստահ եք ձեր դասակի վրա:

— Վստահ եմ, ընկեր ավագ լեյտենանտ:

— Իսկ ինչպե՞ս է իրեն զգում Աշոտը:

Ես չկարողացա միանգամից պատասխան տալ այդ հարցին: Մեր վերջին «պայմանագրից» հետո նա դառնել էր ավելի լռակյաց, ինքնամոռի և ինձ հետ այլևս չէր խոսում: Կրակոցների ժամանակ խուճապի կամ վախկոտության նշաններ ցույց չէր տալիս, սակայն նրա դեմքը դեղնում, այլանդակվում էր անճանաչելիորեն:

— Գուցե նրան չվերցնեք, թողնեք, ի՞նչ կասեք, —
խոսեց ավագ լեյտենանտը, ապա ինձնից իսկույն պա-
տասխան չստանալով, ինչ որ կասկածանքով նայեց դեմ-
քիս: Սակայն ես ուղեցի վերջին անգամ փորձել
ավագ ընկերոջս:

— Ոչ, ես կամենում եմ, որ նա մեզ հետ լինի:
Ստանալով մանրամասն ցուցումներ, ես դուրս
ելա ավագ լեյտենանտի գեանափոր տնակից:

Հավաքեցի իմ դասակը, բացատրեցի մեր պարտա-
կանությունը Հայրենիքի հանդեպ, ապա ջոկի հրամա-
նատարների առջև խնդիրներ դրի՝ չանջատվել իրարից,
կապն ինձ հետ պահպանել ամբողջ գործողության
ժամանակ:

Մարտիկները լուռ էին: Ամեն մեկը տարվել էր
քաղցր խոհերով: Մինչև հարձակումը դեռ 30 րոպե էլ
կար: Ես կրճքովս հենվել էի խրամատին ու անթարթ
նայում էի առաջ, մութ խավարի մեջ, սպասում
պայմանական ազդանշանին: Հանկարծ զգացի սուսիկ —
փուսիկ քայլերի մոտեցում: Շուռ եկա ու հարցրի.

— Ո՞վ է:

— Ես եմ, Գրիգոր, Աշոտը, — խուլ ձայնով պա-
տասխանեց նա:

— Հը, ի՞նչ կասես, Աշոտ, նստիր:

— Այդ ճի՞շտ է, որ մենք այս գիշեր պետք է հար-
ձակում գործենք:

— Իսկ դու ի՞նչ ես կարծում, սիրելի Աշոտ, մենք
կատակ ենք անում:

— Այդ հիմարությունն է, — մրմռաց նա:

— Այդ ինչե՞ր ես ասում, հնց թե հիմարությունն է:

— Էհ, հենց այնպես ասացի, Գրիգոր, միթե՞ չես տեսնում, որ մենք գերմանացուն տեղից անգամ շարժել չենք կարողանում:

Իսկույն զգացի, որ նա վախենում է և վախենում է սեփական կաշվի համար: Որոշեցի նրան չվերցնել մեզ հետ:

— Լսիր, Աշոտ, ես քեզ թույլ եմ տալիս մնալ, մի գա մեզ հետ:

Նա երկար քննում էր իմ կարգադրությունը: Երեվում էր, որ տատանվում է: Նրան տանջում էր այն միտքը, որ միևնույն է, և թե ինձ հետ մարտական հետախուզության չգա, ապա մարտի անպատճառ պետք է դնա: Նա խեղճ-խեղճ ասաց:

— Ոչ, ես կգամ... Միևնույն է, մի օր պետք է մեռնենք:

— Մեռիր, բայց պատվով, — զայրացած ասացի ես ու հեռացա նրանից:

Ժամը ուղիղ 24-00-ին, կարգադրություն ստացա իմ դասակով դուրս գալ:

Լուսինը թաքնվել էր լեռների ետևում և մենք օգտու-
վելով տիրող խավարից, արագ առաջ սողացինք: Բարձ-
րանում էր քամին: Երկնակամարով վազում էին մռայլ
ամպերը: Երբեմն նրանց արանքից լուսնի լույ-
սի տակ տեսնում էի, թե ինչպես իմ մարտիկները կարճ
վազքով առաջ էին նետվում: Մենք չավազանց մոտեցել
էինք թշնամու խրամատներին: Մնում էր ընդամենը
50—70 մետր: Հրաման սվի սլա տրաստի բերել ավտո-
մատները, նռնակները: Հենց այդ նույն ժամանակ
վեր բարձրացող հրթիռը լուսավորեց մեր շուրջ բոլորը:

— Գրոհի՛ր, իմ ետեից,— ձայնեցի ես և նետվեցի՛ առաջ:

Մեկ-երկու թռիչքով հասանք հակառակորդի խրամատներին: Մինչև գերմանացիներն ուշքի կգային, նրանց վրա նետեցինք մեր նռնակները: Հետո բացելով ավտոմատային ու հրացանային կրակ, կենդանի մնացածներին դուրս քշեցինք Վերքերից:

— Առանջ ընկերներ, քշենք գերմանացուն:

Թշնամին սկսեց հրետանային կրակ բանալ մեր վաշտի աջ թևի վրա:

Հրթիռները լուսավորեցին մեզ չորս կողմից: Մենք ընկանք օղակի մեջ: Մեզ նկատեց թշնամին ու բացեց ականանետային և հրետանային ուժգին կրակ:

— Պառկիր և խրամատավորվիր,— հրամայեցի ես:

Մարտիկներն իսկույն պահկեցին և սկսեցին արագորեն խրամատավորվել: Ես ակնդետ դիտում էի հակառակորդի կրակոցային կետերն ու մտքումս մեկ առ մեկ պահում նրանց:

Մեր առջև զրված խնդիրը հիմնականում կատարված էր:

— Չկրակել, հանգիստ պառկել, այս ըոպեին ամեն ինչ կվերջանա և մենք նորից ետ կդառնանք,— ասացի ես:

Կես ժամից հետո, խավարը ձեղքելով վեր սլացավ դեղնավուն հրթիռը: Այդ ետ դառնալու ազդանշանն էր:

— Ետ սողալ, առանց ձայնի— կարգադրեցի ես:

Վաղ առավոտյան մենք արդեն գտնվում էինք մեր խրամատներում: Իմ դասակից սպանվածներ չկային: Երեք հոգի վիրավորված էին: Նրանց տեղափոխեցին սանիտարական մասը: Սակայն մեկը բուրբուրովին չկար՝

Դրա Աշոտն էր: Հարց ու փորձ արի մարտիկներին, թե ով էր նրան տեսել վերջին ըոպեում: Ամենքը նրան տեսել էին ողջ և առողջ: Սակայն ո՛ր կորավ նա: Ոչ ոք տեսել չէր կարող: Միթե՞ սպանված է նա: Նրա մահը ոչ ոք չէր հաստատում:

Վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Գորլովը չսելով իմ զեկուցումը, դառնորեն ժպտաց.

— Ասում եք ոչ ոք նրան վիրավոր կամ սպանված չի տեսել: Ոչինչ, Սարգսյան, միք մտածի այլևս այդ մասին: Ուրախացեք, դիվիզիայի հրամանատարն անձամբ ձեզ հայտնում է իր շնորհակալությունը: Իմ կողմից շնորհավորում եմ ու միջնորդում ձեզ լեյտենանտի կոչում տալու: Այժմ դնացեք հանգստանալու:

Բայց ես ոչ կարող էի հանգստանալ, ոչ էլ մոռանալ կատարվածը: Մտածում էի նրա, Աշոտի մասին: Ի՞նչ հղավ նա: Եթե սպանվել էր, մեկն ու մեկը պետք է որ տեսներ: Ողջ օրը մտածեցի: Իսկ գիշերը տեղակալիս թողնելով իմ տեղը, ոչ ոքի չհայտնելով վճիռս, ես փորսող մոտեցա մեր մարտ վարած տեղամասը: Մթության մեջ ամբողջ տարածությունը փնտռեցի, գտած զիակաները շրջելով մեջքի վրա, նայում էի նրանց զիմագծերը, զիականեր շատ կալին, սակայն ինձ հարկավոր էր Աշոտի դին, որպեսզի համոզվեմ նրա մահվան մեջ: Սակայն նրա զիակը ես ոչ մի տեղ չգտա:

* * *

Աշխեն, այս բոլորը կատարվեց 1942 թվականի սեպտեմբերի վերջերին: Թվում էր, թե սրանով պետք է վերջանար իմ պատմությունը: Սակայն ճակատագրին վիճակված էր այլ վերջավորություն տալ այս եղելու-

Թյանը: Լսիր, Աշխեն, լսիր ուշադիր և ինքդ դատիր, կարո՞ղ էի ես այլ կերպ վարվել:

Մեր հարձակողական մարտերը սկսվեցին 1943 թվականից: Ամբողջ Հյուսիսային Կովկասն ու Կուբանն անցանք մարտերով: Սկսվեցին Հայրենիքի սրբազան հողի ազատագրման մարտերը: Անցան 1943—1944 թվականները: Ես արդեն ունեյի ավագ լեյտենանտի կոչում և ավտոմատավորների վաշտի հրամանատար էի: Այդ տարիների ընթացքում այնքան դեպքեր տեղի ունեցան, որ ես իսպառ մոռացա Աշոտին, նրա կերպարը: Քո հարցումներին մեկ անգամ պատասխանեցի, որ նրան տեղափոխել են այլ զորամաս ու նրա հետ այլևս ոչ մի կապ չունեմ: Այնուհետև նրա անունն այլևս չէր հիշատակվում: Փոթորկի պես իրար ետևից վերջերս զարգացող դեպքերը պատճառ դառան, որ քեզ հետ էլ կապը կտրվեց: Այսպիսով Աշոտը կրկնակի մոռացվեց:

Սակայն...

Այդ 1945 թվականն էր, ապրիլ ամիսը: Մարտ էր տեղի ունենում ավստրիական մի քաղաքի արվարձաններում: Թշնամին չէր ուզում թողնել քաղաքը, Նա ձգնում էր և դեռ հույս ուներ կանգնեցնել մեր հարձակումը: Սակայն մենք ձեռք էինք բերել մարտական փորձառություն և այդ էր պատճառը, որ մեր մարտերը միշտ հաղթական բնույթ էին կրում:

Այլպես էլ տեղի ունեցավ այդ քաղաքի գրավման ժամանակ:

Գիշերը ես իմ վաշտով անցա թշնամու թիկունքը: Ավտոմատավորներին բաժանելով խմբերի, չորս կող-

մից մտանք քաղաքի փողոցները և սկսեցինք այնպիսի կոտորած կազմակերպել, որ թշնամին գաղափար չունենալով մեր քանակի ու տեղի մասին, սկսեց խուճապահար փախուստի դիմել: Մեր գունդը քաղաք մտավ: Գնդի ժամանակավոր շտաբը կանգ առավ բարձրագմբեթ եկեղեցու մոտ: Այդտեղ էին բերում զինաթափ արած ու գերի հանձնված թշնամու զինվորներին: Գնդի հրամանատարը, լիքը մարմնով, միջառասակ գնդապետը, ոտքի վրա կանգնած վճիռներ էր կայացնում: Ես նստել էի քարի վրա: Արևի ջերմությունը նինջ էր բերում վրաս: Սակայն հաճելի էր լսել, թե ինչպես կարմիր մարտիկները սրամիտ բացահանչություններով բերում էին մեկ-մեկ, խմբերով զինաթափ արած թշնամուն: Ահա աչքերս խուփ, սակայն ահանջներս լարած լսում եմ.

— Ասում եք այս երեքը զիմադրում էին:

— Ընկեր գնդապետ, շան որդիները մինչև վերջին փամփուռը կրակեցին և... սպանեցին մեր վաշտի ավագին, — սպտ սխանեց իմ վաշտի ավտոմատավոր սերժանտ Նիկուլինը:

Ես ցնցվեցի ու աչքերս բացի, վաշտիս ավագ վասինին, վաշտիս հպարտությանն ու գեղեցկությանը խփել են: Ես ոտքի ելա, դանդաղ մտաեցա, հերթով նայեցի զերիններին: Իմ հայացքն ահամա կանգ առավ երկար մազերով, ածուխի պես վայլուն աչքերով բարձրահասակ մեկի վրա: Երկար դիտում էի նրան: Նա գերմանական շինելի մեջ էր:

— Ո՞վ ես դու, — հարցրեց նրան գնդապետը:

— Ես կովկասցի եմ:

— Ինչպե՞ս ընկար գերմանացիներին մոտ:

— 1943 թվականին մենք իջանք թշնամու թի-
կունքը: Ես այն ժամանակ պարաշոտիստ էի:

— Ստում ես, սրիկա,—այլևս չհամբերելով գոռա-
ցի ես:

Նա գլուխը կախեց և ոչինչ չասաց:

— Ի՞նչ պատահեց ձեզ, Սարգսյան,—գառնալով
ղեպի ինձ՝ հարցրեց գնդապետը:

— Ընկեր գնդապետ, թույլ տվեք ինձ այդ «կով-
կասցու» հետ առանձին խոսելու,—ասացի ես:

— Ի՞նչ է, ծանոթ է նա ձեզ:

— Այո, ես դրան ճանաչում եմ:

— Շատ լավ, վերցրեք,—ասաց գնդապետն ու հե-
ռացավ:

— Գնանք ինձ հետ,—գնդապետի հեռամալուց
հետո ասացի ես կովկասցուն: Նա առանց խոսքի առա-
ջնկավ:

Մենք քայլում էինք գետակի ավազ: Հասնելով
փրված կամուրջին, ես ասացի.

— Կանգ առ:

Լուռ ու անձայն հանեցի ատրճանակս:

Նա կանգ առավ ու վախեցած աչքերով սկսեց նա-
չել ինձ: Ես չէի կարողանում հանգիստ դիտել նրան:
Դա նա էր: Նա կանգնած էր իմ առջև գերմանական
գորշ-կանաչ շինելը հագին, երկար, խռիվ մազերով,
ամբողջովին իսկական գերմանացու նման:

— Մեր պայմանը հիշում ես:

Նա ղեղնեց, բացեց բերանը, սակայն ուշքի
զալով խոսեց.

— Դեհ, ի՞նչ արած, ճակատագրից, ինչպես ասում
են, չես խուսափի... Ես գերմանացիների կողմն անցա,

այն շարաքաստիկ գիշերը, երբ մենք հատախուղիչ մարտ վարեցինք: Չէի հավատում մեր հաղթանակին: Կարծում էի երկու օր ևս և զերմանացին կգրավի ողջ Կովկասն ու...

Իսկ ես սպրեկ էի ուզում: Ինձ ուրիշ ելք չէր մնում...

Ես չէի կարողանում այլևս լսել նրան: Ցասումը բռնել էր ինձ: Ես այրվում էի կատաղությունից: Իմ առջև կանգնած էր վախկոտը, դավաճանը: Ես բարձրացրի ատրճանակի փողը, նա նետվեց դեպի ինձ, ծնկի իջավ, արցունքն աչքերին ուղեց ինչ որ ասել, բայց արդեն ուշ էր...

* * *

Ահա բոլորը, Աշխեն: Ինչ այլևս մի սպասիր նրան: Նա հայրենիքի դավաճան էր և ես զնդակահարեցի նրան:

1945 թ. Բուդապեշտ

ՀԵՏԱԽՈՒՅՁԸ ԵՔԵՐՈՒՄ

Անտառապատ բլուրներն ու լեռները կորչում էին հետզհետե խտացող մառախուղի մեջ: Թվում էր, թե անտես մի ձեռք նուրբ մատներով ձգում, ձգձգում էր բամբակի քուլաները, բարակացնում, դարձնում լայնածավալ անթափանցիկ սավան ու նրանով պատում շուրջ բոլորը:

Ոչինչ չէր երևում:

Մակայն թշնամու հեռավոր հրետանին, քանի գնում ու ժեղացնում էր կրակը: Պատռելով մառախլապատ երկինքը, արկերը վզոցով գալիս էին, խրվում հողի մեջ, ու պայթելով ամենի հաղակույտերը վեր բարձրացնելով՝ շարժում ամենուրեք:

Մեր մարտիկները նստել էին խորը խրամատներում: Նրանք լուռ, սպասողական դրության մեջ էին: Մեկ ժամից հետո պետք է գրոհի անցնեին: Բայց թշնամին բայել էր ծանր հրետանու տարերայնային կրակ ու թույլ չէր տալիս խրամատից գլուխ դուրս հանելու:

— Ե՞րբ կսկսի գործել մեր հրետանին, — հարցնում էին միմյանց մարտիկներն ու կարգի բերում հրացանների սվինները:

Իսկ սովետական հրետանին դեռևս պահպանում էր

լուսթյուն, որն անհանգստացնում էր մարտիկներին:

Ամենից շատ անհանդիստ էր զգում իրեն հրետանային բրիգադայի հրամանատար՝ փոխգնդապետ Մամիկոն Սարգսյանը:

— Թյուն, սատանան տանի, էսքան էլ սպասել կլինի:

Նա զուրս էր եկել հրամանատարական դիտանոցից, բարձրացել փոքրիկ բլրի վրա, հեռադիտակը բռնել անջ ձեռքում ու նայում էր առաջ:

Ոչինչ, ոչինչ չէր երևում: Թշնամու հեռավոր հրետանու կրակոցային կետերը քողարկված էին վարպետորեն: Ստացած մատխուզային քողը, առավել ևս առջևի բլուրներն ու լեռները թույլ չէին տալիս տեսնելու թնդանոթի փողից փայլատակին տվող կրակի լեզվակն ու սպիտակ ծուխն անգամ:

Փոխգնդապետը հայեց ձեռքի ժամացույցին, սպա դառնալով իր մոտ կանգնած հետախուզական վաշտի հրամանատար կապիտան Զավադ Առաքելյանին՝ խստորեն ասաց.

— Կես ժամ է մնացել, կապիտան, իսկ ձեր հետախուզյունները ոչ մի տեղեկություն չեն բերել... Այդ մեզ ոչ-ոք չի ների...

Կապիտան Զավադ Առաքելյանն ամոթից կասկարմիր էր կտրել: Նա իրեն լիակատար խայտառակված էր զգում: Այդպիսի մի պատասխանատու բոպեին նա դեռ չէր կատարել իր առաջ դրված մարտական խնդիրը: Նրա կտրին հետախուզյուններից ոչ-ոք չէր վերադարձել: Պարզ էր, որ նրանք ամաչում կամ չէին կամենում ձեռնունայն ետ դառնալ: Նմանօրինակ դեպք դեռ-

ևս չէր պատահել կապիտանի մարտական կյանքում։ Ահա երեք տարի է, ինչ կապիտանն ու իր հետախույզները բարձր են պահել հետախույզի պատիվն ու նրանց փառքը դղրդում էր ողջ ճակատում։

Բայց այսօր, թե չարաբաստիկ եղանակը և թե երկրի աշխարհագրական դիրքը հետախույզների համար շուրջ արգելքներ հանդիսացան առաջադրված խնդիրը ժամանակին կատարելու։ Բայց մի՞թե այդ կարող է արդարացնել նրանց։ Հետախույզն իր ամբողջ հմտությունը, ընդունակությունը, իր վարպետությունը պետք է ցույց տա հենց այդպիսի դժվարին պայմաններում։ Այն, ինչ անհաղթահարելի է ուրիշների համար, հետախույզի համար պետք է հաղթահարելի լինի։ Այսպես էր դաստիարակել կապիտանն իր բանակայիններին և ահա եկել էր ժամանակը, երբ ինքը պետք է հաղթահարեր անհաղթահարելին։

Սակայն ի՞նչ անել, չէ որ ժամանակն անցնում է։ Հարկավոր էր ելք գտնել, հարկավոր էր շուտափուլիս հայտնաբերել թշնամու կրակային կետերը. բայց ինչպե՞ս։

Հանկարծ մի լուսավոր միտք ճառագեց կապիտանի գլխում։ Նա ժպտաց, ապա գլուխը վեր բարձրացնելով շեշտակի նայեց փոխգնդապետին ու ասաց.

— Թույլ տվեք վեր բարձրացնել անբոստատը, ընկեր փոխգնդապետ։

Փոխգնդապետը խեթ և դժկամ հայացքով չափեց կապիտանին, ապա զայրացած ասաց.

— Կապիտան, դուք խաղալու ժամանակ եք գտել, եթե ձեր հետախույզները ոչինչ չկարողացան անել

ապա թնչ կարող եք անել անբոստատը վեր բարձրաց-
նելով...

— Անբոստատը հետախույզի եթերային աչքն է,
ընկեր փոխգնդապետ, թույլ տվեք և ես տասնհինգ
բոպիից հետո հարկավոր տեղեկությունները կկարո-
ղանամ հայտնել ձեզ:

— Իսկ ով պետք է վեր բարձրանա:

— Ես ինքս, ընկեր փոխգնդապետ:

— Դձուք... Սակայն ես չեմ կամենում ձեր կյանքը
վտանգի ենթարկել... Դուք ինձ հարկավոր եք...

— Ընկեր փոխգնդապետ, ինձ ոչինչ չի պատահի:
Կապիտանի հաստատուն ձայնն ակամա վստա-
հություն ներշնչեց փոխգնդապետին:

— Այդ դեպքում շտապեցեք, կապիտան, ժամա-
նակը վտանգի տակ է դնում մեր գրոհը:

Կապիտան Զավադ Առաքելյանը շտապ ցած վազեց:
Բարձրագմբեթ բլուրների ետևում, գետնից 15-20
մետր բարձրության վրա, պարաններից կախված, օդի
մեջ փղի նման անշարժ կանգնած էր անբոստատը:

Անբոստատի տակի դամբուղը գտնվում էր գետնի
վրա: Զամբուղի մեջ այդ բոպիին նստած էր ավագ-
սերժանտ Վասիլի Կորժը: Նա լուռ էր: Մերթ ընդ
մերթ նայելով չորս կողմը, նա ինքն իրեն
խոսում էր.

— Սրիկա... Տես ոնց է գազազել... Մեր հետևակա-
յինները երևի այժմ խլացել են...

Երբ կապիտանը մոտեցավ, ավագ սերժանտը
ոտքի ելավ, ապա դուրս գալով դամբուղի միջից,
ուղիղ ձգվեց ու դեկուցեց.

— Հերթապահ ավագ սերժանտ Վասիլի Կորժ:

— Պատրաստել անբոստատը վեր բարձրանալու, վերցնել ռազիոկայանը և պարաշյուտները, շտնայ...

Ավագ սերժանտի տազնապի կոչին հողատնից դուրս վազեցին հինգ բանակային: Նրանք իսկույն գրավեցին իրենց տեղերը: Կապիտանն ու ավագ սերժանտը հագան պարաշյուտներն ու մտան զամբյուղը:

— Թուլացնել պարանները:

Անբոստատը հանկարծակի տարուբերվեց տեղում, ապա սկսեց վեր բարձրանալ: Քիչ անց, զամբյուղը կախվեց անբոստատի տակից ու սկսեց ճոճվել օդում:

Ավագ սերժանտը բացեց ռազիոկայանն ու սլաքը դրեց համապատասխան արիքի վրա: Միացնելով էլեկտրական հոսանքը, նա միկրոֆոնը մոտեցրեց բերանին ու սկսեց կանչել:

— Որո՞տ, Որո՞տ, խոսում է Եթերը, ինչպե՞ս եք լսում, ինչպե՞ս եք լսում, ինչպե՞ս եք լսում, պատասխանեցե՛ք:

Քիչ հետո ականջակալների մեջ լսվեց.

— Եթեր, Եթեր, խոսում է Որոտը, ձեզ լսում եմ հիանալի, ձեզ լսում եմ հիանալի:

Կորժը միկրոֆոնը ցած դրեց, հանեց ականջակալները ու բարձրանալով՝ ուղիղ կանգնեց ճոճվող զամբյուղի մեջ ու բարձր ձայնով ղեկուցեց կապիտանին.

— Կապը Որոտի հետ ստեղծված է:

Կապիտանը, որ կրժքով հենվել էր զամբյուղի կողին ու նայում էր առաջ, առանց հտ շրջվելու պատասխանեց:

— Եղեք ուշադիր և իմ ասածներն առանց սխալի հայտնեցե՛ք Որոտին:

Անբոստատը շարունակում էր վեր բարձրանալ:

Մառախուղը հետզհետե նոսրանում էր և շրջապատն ավելի լայն էր երևում:

Կապիտանը կանդառման նշան չէր տալիս: Երբ բարձրությունը հասավ 600 մետրի, նա ուրախ մի ճիչ արձակեց.

— Հիանալի է, այդպես էլ գիտեի,—բացականչեց նա,—ամեն ինչ պարզ երևում է, կանգնել:

Իսկապես, այնտեղ հեռվում, բարձրավանդակների թմբերին, լեռների հետևում, անտառի եզրերին ու բաց տափարակներում մառախուղ չկար: Պարզ երևում էին գերմանական ծանր ավտոմեքենաները, որոնք ետ ու առաջ էին սլանում, երևում էին ձիեր ու այլ սև կետեր: Իսկ երբ կրակում էր թշնամու թնդանոթը, ապա պարզորոշ փայլատակին էր տալիս ակնթարթային կրակե լեղվակը:

— Այժմ ես ձեզ մառախուղ ցույց կտամ, շներ— շշնջաց կապիտան Առաքելյանը ու նայեց տեղագրական քարտեզին, ապա դառնալով դեպի ավազ սերժանտը, ասաց.

— Հայտնեցեք կոորդինատները՝ 85-27, 95-30, 60-40:

Վասիլի Կորժն ուրախ-ուրախ հազավ ականջակալներն ու միկրոֆոնը մոտեցնելով բերանին՝ ավելի բարձրը, քան թե կապիտանը, գոռաց:

— Որոտ, Որոտ, խոսում է Եթերը, ընդունեցեք կոորդինատները...

Կապիտանն ուշադիր, սրատես աչքերով շարունակում էր նայել հեռուն: Նա հրձվանքից ժպտում էր: Չէ որ ինքն իրավացի դուրս եկաւ և այս անգամ էլ հետախույզների փառքը կրկին կզզրդա ամբողջ ճակա-

տում: Կապիտանը հայտնում էր նորանոր կոորդինատներ: Նա մերթ ընդ մերթ նայում էր ժամացույցին:

— Ինչո՞ւ են մերոնք լուռ...

Այժմ նրան տիրել էր սպասողական անհամբերություն: Նա կրճտացնում էր ատամները:

Հանկարծ դղրդաց մեր ծանր հրետանին: Ճեղքելով մառախլապատ օդը, խոշոր արկերը սլացան դեպի թշնամին:

— Այդպես, — ինդալից գոչեց կապիտանը, — հիասալի դիպուկ կրակ, օդը ցնդեցին միանգամից երկու կրակային կետ: Մերժանտ Կորժ, մեր հրենատավորներին շնորհակալություն հայտնեցեք: Տվեք նրանց հետևյալ կոորդինատները... Օ՛հ, գեղեցիկ, մի նոր կետ ևս ծածկվեց...

Մեր ծանր հրետանին հետզհետե սաստկացնում էր իր կրակը: Թշնամու կրակոցային կետերն իրար ետևից մեկ-մեկ լուռ էին և կապիտանն ուրախությամբ տեսնում էր, թե ինչպես այնտեղ, թշնամու դիրքավորման տեղամասում, երկինքն ու գետինը միացել էին իրար: Այնտեղ պայթում էր հողը և օդի մեջ առաջացնում սև, ծխախառն թանձր մառախուղ: Քիչ հետո ցրվում էր այդ սև մառախուղը, ամեն ինչ նորեն պարզվում ու թշնամու հոգնատանջ, խլացած, կենդանի մնացած կրակոցային հատ ու կենտ կետերը ծուլ-ծուլ արձակում էին իրենց արկերը:

Բայց կապիտանն իսկույն նրանց կոորդինատները հայտարարելով՝ հազորդում էր Որոտին: Այդ ուղղությամբ տասնյակ արկեր էին սլանում, ամեն ինչ խառնում իրար և ընդմիջա լռեցնում թշնամու այդ կրակակետերը ևս:

Թշնամին կորցրեց իր գլուխը: Նա առժամանակ դադարեցրեց հրետանային կրակը և կապիտանը տեսավ, թե ինչպես գերմանական զինվորները շտապ-շտապ սկսեցին մի տեղից մի այլ տեղ փոխադրել իրենց թնդանոթները:

— Խաբէլ եք ուզում, բան չի դուրս գա, — ինքն իրեն ասաց կապիտանը: Նա սպասեց: Թշնամին հարմար տեղ գտնելով, սկսեց քողարկել թնդանոթները:

— Հայտնեցեք Որոտին՝ 68-22 —, ասաց կապիտանը:

Այդ ուղղությամբ սլացան արկերը և թշնամու տեղափոխած թնդանոթն առանց կրակ բանալու մեկ ակնթարթում օդը ցնդեց: Մեր հրետանավորների դիպուկ կրակը կատաղեցրեց թշնամուն: Նա նկատեց օդում կախված անբոստատը: Փորձեց հրետանու կրակով ցած գցել: Սակայն ոչինչ դուրս չեկավ: Աերոստատը մահվան սովերի պես սառն ու հանգիստ շարունակում էր կանգնած մնալ օդում:

Ահա այդ ժամանակ սև անգղիների պես դեպի անբոստատը սլացան երկու սավառնակ:

— Պատրաստ դրության բերել ավտոմատը, — հրամայեց կապիտանը:

Բայց սերժանտն ուշադիր ընդունում էր կարևոր ազդիոզիրը:

— Ընկեր կապիտան, փոխգնդապետը հրամայում է խսկույն ցած իջնել:

— Խնդրեցեք հինգ ըոպե ևս, նոր կետեր եմ հայտնաբերել:

Ավագ սերժանտն օդում մնալու հինգ ըոպեի թույլտվություն խնդրեց: Այդ բավական էր, որպեսզի թշնամու սավառնակները ցինների պես վրա հասնեին: Նը-

րանք հեռվից բաց արին գնդացրային երկարատև կռակ: Կրակը դիպուկ չէր և անրոստատը շարունակում էր կանգնալ մնալ: Սավառնակները պտույտներ կատարելով, ավելի մոտեցան: Սերժանտն ու կապիտանը իրենց ավտոմատներից կրակ բացին:

Սավառնակները հեռացան: Նրանք սկսեցին թափով մոտենալ տարբեր կողմերից ու բացելով երկարատև կրակե տարափը՝ սլացան հեռև, շատ հեռու:

Անրոստատը բռնկվեց բոցերով ու մեկ ակնթարթում այրվեց, անէացավ:

Սակայն կապիտանն ու ավագ սերժանտը ժամանակին իրենց ցած նետեցին զամբյուղի միջից: Օդում նրանք բացին պարաշուտները: Թշնամու սավառնակներն ուղեցին ետ դառնալ: Սակայն օդն էին բարձրացել սովետական կարմրաաստղ ինքնաթիռները: Ահա դադորդ աղմուկով, տիրական վստահությամբ, նրանք սլանում էին ուժակոծելու թշնամու դիրքերը: Ահա նրանցից երկուսը կտրվեցին շարքից, ամենի թախչքով սկսեցին հալածել զերմանական սավառնակներին:

Կապիտան Առաքելյանն ու ավագ սերժանտ Վասիլի Կորժը դետին իջան համարյա իրար շատ մոտ:

Արձակելով պարաշուտը, կապիտանը շտաբեց հրամանատարական դիտանոցը: Իսկ մինչ այդ փոխգնդապետը ձեռները թափահարելով վազում էր նրան ընդառաջ:

— Ընկեր փոխգնդապետ, — ուզեց զեկուցել կապիտանը, բայց փոխգնդապետը նրան ամուր սեղմելով իր լայն կրծքին՝ ասաց.

— Ապրե՛ք, ապրե՛ք կապիտան, դուք առաջադրու-

Թյունը գերազանց կատարեցիք, գրոհը սկսվեց Ճամանա-
կին և թշնամին խելահորույս նահանջում է... Դուք
արժանի եք եթերային հետախույզի բարձր կոչ-
մանը:

1946 թ. Մուրոմ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԵՐԸ

Պարաշուտա—դեսանտային զորամասի մարտիկներն ու հրամանատարները սիրով ու հարգանով էին արտասանում ավագ լեյտենանտ Սարգիս Մուսաեղյանի անունը: Գնդում նա իրավացիորեն վաստակել էր խիզախ, հնարագետ, վերին աստիճանի կարգապահ, պարաշուտա—դեսանտային մարտեր վարելու տակտիկան հմտորեն գիտցող հրամանատարի կոչումը: Պարտություն ասած բանը նա չգիտեր: Մարտական ինչպիսի դժվարին պայմաններում էլ գտնվեր, նա միշտ դուրս կգար հաղթանակով ու շնչին կորուստներով: Սարգիս Մուսաեղյանը օժտված էր նաև մեկ այլ հիանալի հատկությամբ՝ չափազանց ընկերասեր էր, ուրախ, կատակասեր և երբեք հուսահատվել չգիտեր:

Ահա թե ինչու գնդում մեծ զարմանք առաջացրեց այն հանգամանքը, երբ վերջին մարտերում ստացած ծանր վերքերը բուժելուց հետո, Սարգիս Մուսաեղյանը գունդը վերադարձավ չարացած և իրեն տվեց գինեմոլության: Ի՞նչ պատահեց նրան, ինչո՞ւ այդ հիանալի ընկերն ու հրամանատարն այդպես հանկարծակի կերպարանափոխվեց: Այս հարցը շատ անգամ էր տվել ինքն իրեն ավագ լեյտենանտ Վասիլ Կատրենկոն, որը Մուսաեղյանի սրտառուչ, անբաժան ընկերն էր: Նրանք երկուսով ապրում էին մեկ սենյակում և Կատրենկոն

տեսնում էր, թե ինչպես Մուսահեյյանը օրավուր դառնում էր անճանաչելի:

«Հարկավոր է փրկել նրան»—հաստատ վճռեց Վասիլ Կատրենկոն և սկսեց սպասել պատեհ առիթի:

Մարզիս Մուսահեյյանը միջահասակ էր, լայնաթիկունք: Նա ուներ երկար, ուժեղ ձեռքեր: Նրա շարժումներն արագ էին, առյուծային, հայացքը խիստ ու ահռելի, նրա գոտուց միշտ կախված էր դեսանտային կորաքիթ դանակը, որը պարսկական յաթաղանի նմանություն ուներ: Վերջերս Մարզիս Մուսահեյյանն այնքան դյուրագրգռիւ էր դառել, որ երբ մեկնումեկի հետ վեճի էր բռնվում, այնքան էր տաքանում, որ հաճախակի ձեռքը տանում էր դեպի դանակը, և թվում էր, թե ուր որ է այն դուրս կհաներ պատյանից և կխրեր խոսակցի կուրծքը: Բայց այդ երբեք չէր պատահում: Նա շատ շուտ ուշքի էր գալիս, բարեկամաբար բռնում էր զրուցակցի ձեռքը, ապա ասում.

— Գնանք, հոգյակս, օղի խմենք, թե չէ զուր տեղն փնջու վիճենք:

Օղի նա սկսել էր շատ խմել: Խմում էր գիշերը: Ցերեկը նա զգաստ էր, գիշերը հարբած:

— Գիշերն իմն է, խմում եմ մտածում, ոչ ոք չի խանգարում:

Հիվանդանոցից դուրս գալու առաջին օրը, սառը բարեկեղով լրջամիտ Վասիլի Կատրենկոյին, ստքից գլուխ նրա վրա մի խիստ հայացք ձգեց, կարծես առաջին անգամն էր տեսնում, ապա հարցրեց.

— Խմում ես:

— Ո՛չ:

— Վատ է: Մոտիկ ընկեր ես ու չես խմում:

Երբ անցավ ցերեկը և գիշերը փոսց իր սև թևերը,
Մուսաելյանը վրան գցեց անշրանցիկ վերարկուն,
ապա դառնալով դեպի Վասիլն՝ ասաց.

— Գնանք խմենք:

— Չեմ ուզում:

— Ախոսս, իսկ ես կարծում էի, թե կգաս: Բայց
վնաս չունի, ես մենակ կզնամ:

Եվ նա գնաց ու ամբողջ գիշեր խմեց,
զվարճացավ:

Սկզբում Վասիլն իրոք չէր հասկանում ընկերոջ
տարօրինակությունների պատճառը: Մարգիտ Մուսա-
ելյանը նրան ոչինչ չէր ասում: Միայն մեկ անգամ
նա դժվարությամբ խոստովանեց.

— Խմում եմ դարդից:

Վասիլը միայն ժպտաց ու ոչինչ չասաց: Սակայն
Քրն էր այդ խիզախ հրամանատարի վիշտը: Մարգիտ
Մուսաելյանը մոլի պարաշուտիստ էր: Տարբեր բարձ-
րություններից նա կատարել էր 315 վայրէջք և ծան-
րոցներով և՛ առանց ծանրոցների: Իր մարտիկներէ
հետ նա շատ անգամ էր իջել գերմանացիների թի-
կունքը: Դժվարին պայմաններում մարտեր էր վարել,
կռվել որպէս ամենի առյուծ: Նա պայթեցրել էր թըշ-
նամուռ ուղմամթերքային կարևոր պահեստները, ոչըն-
չացրել ստրատեգիական նշանակություն ունեցող
կամուրջներ, օդն էր ցնդեցրել գերմանական զինվոր-
ներով լի էշելոնները, իսկ հետո անսպասելիորեն օդակի
մեջ առնելով գերմանական զինվորներին, նրանց վրա
բացել էր ավտոմատային կործանարար կրակ: Կատա-
րելով իր ավերածությունները թշնամուռ խորը թիկուն-
քում, նա ամենուր թողել էր մի փոքրիկ մակազրու-

թյուն. «Կատարել է երևանցի հայը», Այդ անունը գերմանացիների համար դառել էր սարսափի սիմվոլ: Այդ անունը լսելուն պես թշնամու զինվորներն իսկույն խուճապի էին մատնվում, իսկ գերմանական հրամանատարությունն ուժեղացնում էր իր կայազորները: Թշնամին դառը փորձից գիտեր, որ երևանցի հայն անողոք է, նրա ձեռքից պրծում չկա, նա հայտնելով է անակնկալ, որպես հոգեառ հրեշտակ և աներևույթանում՝ ինչպես դև:

Փերժանական բարձրագույն հրամանատարությունը չէր կորոզ անտարբեր նայել Սարգիս Մուսաելյանի արարքներին: Նա վճռեց ոչնչացնել խիզախ հրամանատարի խումբն ու դրանով իսկ վերջ տալ նրա մասին տարածված լեգենդին: Եվ ահա հատուկ պատրաստված արագաշարժ զորամասեր սկսեցին հետապնդել երևանցի հային, որն իրեն սպասեցնել չավալ: Սոշոր օպերացիաներից մեկի ժամանակ Մուսաելյանն իր քաջ մարտիկներով շրջապատվեց գերմանական թիկունքային թարմ ու թեթևաշարժ զորամասերով: Տեղի ունեցավ չտեսնված մի մարտ, որտեղ քանակով ու զենքով տասնապատիկ ուժեղ թշնամին օղակի մեջ էր առել մի բուռը սովետական պարաշուտիստներին: Մանևրային, խաբուսիկ ու համարձակ շրջանցումներ կատարելով, կայծակնային հարվածներ հասցնելով, մեր մարտիկները ձեղքեցին օղակը, դուրս եկան շրջապատումից, իրենց հետ բերելով ծանր վիրավորված հրամանատարին: Յոթ օր Մուսաելյանը ուշքի չէր գալիս: Վիրահատ բժիշկները նրա մարմնի տարբեր մասերից հանեցին 15-ից ավել զնդակ: Մակայն երկու ամսից հոտո Մուսաելյանը ոտքի կանգ-

նեց, սկսեց խնդրել, որպեսզի իրեն դուրս գրեն հիվանդանոցից, ուղարկեն զորամաս: Բժշկական հանձնաժողովը ստուգելուց հետո գտավ, որ նա ժամանակավորապես պիտանի չէ դեասանտային գործող զորամասերում ծառայելու: Նա սկզբում զայրացավ:

— Ո՞վ ասաց, որ ես պիտանի չեմ: Բժիշկը: Բայց նա ի՞նչ է հասկանում: Միթե նա կարող է մտնել իմ հոգու ներսը: Ո՛չ, չի կարող: Միթե նա կարող է հասկանալ, որ երևանցի հայր այն ժամանակ է լավ կըսվում, երբ շրջապատված է լինում թշնամիներով: Ո՛չ, բժիշկն այդ հասկանալ չի կարող...

Նա գնաց գնդի հրամանատարի մոտ ու սկսեց խնդրել:

— Ընկեր փոխգնդապետ, դուք հին պարաշուտիստ եք, ինձ լավ կհասկանաք, կովի այս եռուն ժամանակ, երբ ամեն մի պարաշուտիստ այնպես անհրաժեշտ է, ես չեմ կարող շարքից հեռանալ:

Ծանրախոհ փոխգնդապետի համար իրոք որ ծանր էր կորցնել հնարագետ և արի հրամանատարին: Սակայն նա ոչինչ անել չէր կարող:

— Գնացեք թիկունք, դուք այնտեղ էլ հարկավոր եք:

— Ես կզիմեմ բարձրագույն հրամանատարությանը:

Նա ուսպորտ գրեց բարձրագույն հրամանատարությանը: Սակայն սրտի հեռավոր խորքում զգում էր, որ պատասխանը բացասական է լինելու: Ոչ մի կերպ չէր ուզում հաշտվել այն մտքի հետ, թե ինքը պետք է բաժանվի իր մարտիկներից և այլևս մարտական թռիչքներ չպիտի կատարի: Նա տանջվում էր թե բարոյապես և թե մարմնով: Իրոք որ նա դառել էր վշտոտ ու վշտից էլ սկսել էր խմել: Գիտակցում էր, որ լավ չի անում,

բայց ուրիշ ելք գտնել չէր կարողանում:

Գիշեր էր: Դրսում անձրև էր մաղում:

Ավագ լեյտենանտ Վասիլի Կատրենկոյի աչքերին բռն չէր իջնում: Նա նայում էր կողքի դատարի մահճակալին ու խորհում ընկերոջ մասին: Արդեն ժամը մեկից անց էր, իսկ ընկերը դեռ չէր վերադարձել: «Ձեռքից գնո՛ւմ է տղան, հալ ու մաշ լինում, հարկավոր է փրկել նրան... Բայց ինչպե՞ս»... Մտածում էր Վասիլին ու միևնույն ժամանակ ունկնդրում, թե ինչպե՞ս անձրևի կաթիլները տկտկացնում էին ապակին, թիթեղյա առաստաղը:

Հանկարծ բացվեց դուռը և զգուշությամբ ներս մտավ Սարգիս Մուսաելյանը: Նա վառեց ճրագը, վրայից հանեց թաց անջրանցիկ վերաբեկոն ու նետեց աթոռի թիկնակին: Հետո արագ քայլվածքով մոտեցավ Վասիլիին ու կուսնալով նայեց նրա դեմքին: Վասիլին ամուր փակեց աչքերը և իրեն քնած ձևացրեց:

Մուսաելյանը հեռացավ, աթոռը մոտեցրեց սեղանին, նստեց, ապա զրպանից հանելով օղու շիշը՝ լցրեց բաժակը, մոտեցրեց շրթունքներին, ուզեց խմել, բայց քիչ մտածելուց հետո այն դրեց սեղանին ու վճռական շարժումով ոտքի ելավ: Նա մոտեցավ Վասիլիի մահճակալին ու թափահարելով նրան, սկսեց ցածր ձայնով կանչել.

— Վասյա, Վասյա:

— Ի՞նչ, ի՞նչ է պատահել, — աչքերը բացելով դժկամորեն հարցրեց Վասիլը:

— Վեր կաց:

— Ի՞նչ կա:

— Վեր կաց, ընկերս, վեր կաց:

Նա քաշեց Վասիլի վրայից վերմակը, օգնեց նրան բարձրանալու, հագնվելու:

Երբ Վասիլը նստեց սեղանի մոտ, նա երկրորդ բաժակը լցրեց օղիով ու մեկնելով նրան, կարճ ասաց.

— Խմիր:

Վասիլը կնճռոտեց դեմքը:

— Խմիր ասում եմ,—բարձր կարգադրեց Մուսահեյանը:

— Խմիր, այդ ես եմ ասում, երևանցի հայր:

Վասիլը քիչ մտածեց, ապա ձեռքն առնելով բաժակը, ասաց.

— Շատ լավ, նստիր, խմենք...

Մուսահեյանը բերանը լայն բանալով ծիծաղեց. նրա մաքուր, սպիտակ ստամբները փայլեցին որպես սադաֆներ:

— Այ, հիմա ես քեզ սիրում եմ... իսկական մարտիկ ես ու ընկեր:

Նրանք խմեցին: Մուսահեյանն արագ բացեց ձկան պահածոյի տուփը և դրեց Վասիլի առջև:

— Կեր, սիրելիս ու հիշիր երևանցի հային, ես ստացա ռապորտիս պատասխանը... չհարգեցին խնդիրս, ուղարկում են թիկունք, բայց ասա, ի՞նչ պետք է անեմ ես այնտեղ...

Նա քիչ լռեց, ապա նորից շարունակեց:

— Ես կատաղած եմ գերմանացիների վրա: Իմ ցամառը չափ ու սահման չկա: Ես չեմ կարող մի օր անցկացնել առանց այդ դարչնադույն օձերին սպանելու:

Այդ նրանք խանդարեցին իմ ուսումը, խափանեցին

ժրագիրս և այն ամենը, ինչ վճռել էի անել: Մեկ տարի էր մնացել, որ ավարտեի գյուղատնտեսական ինստիտուտը: Պետք է աշխատեի պտղաբուծության ասպարեզում: Մանկույ սիրում էի այգեգործությունը: Գերմանացին ե՛լավ կովով, պղտորեց մեր խաղաղ կյանքը: Ասա, ինչպե՞ս չհարվածել այդ հրեշին... Նրան հարկավոր է հարվածել ամեն կողմից և առջևից, և ետևից, աջից ու ձախից, այնպիսի մի վախ տարածել, որ նա դիչեր ու ցերեկ, ամեն վայրկյան անհանգիստ դրուժյան մեջ լինի, որ նա վախից զողա այնպես, ինչպես նապաստակը բաց դաշտում, որտեղ չկա ոչ թուփ, ոչ թուփք, որի ետև թաքնվի: Ահա այդպիսի մի վախ ներշնչում ենք գերմանացուն մենք, պարաշուտիստներս... Ահա ինչու՞ գերմանացին վախենում է մեզնից, և երբ լսում է երևանցի հայի անունը, թողնում է ամեն ինչ ու լեղապատառ փախչում:

Վասիլի Կատրենկոն ուշագիր լսում էր Մուսաելյանին: Այդ երևանցի հայը, որի համբավը նրան քաջ հայտնի էր, քանի գնում, բարձրանում էր նրա աչքին: Նա սկսեց հասկանալ Մուսաելյանին:

— Լցր՞ու, Մուսաելյան, ես հասկանում եմ քեզ, լցրու խմենք: Բայց գիտցիր, որ վիշտը օղիով չես թմբեցնի... Այ, ես էլ վիշտ ունեմ և ահա քո մեկ բաժակ օղին այն ավելի բորբոքեց...

Մուսաելյանը լուրջ ու խստահայաց նայեց Կատրենկոյին:

— Պատմիր վիշտդ, — ասաց նա խուլ ձայնով:

— Լսիր, ես քեզ կպատմեմ... Ահա խմում եմ այս դառն օղին, գլխումս ամեն ինչ դմբդմբում է, ողջ աշխարհն է շուռ եկել, իրար խառնվել, բայց նա ջինջ

ու հստակ, որպէս լաղուր երկիրնք, փռվել է աչքերիս
առաջ ու ժպտում է մեղմ, թախծալի: Ուր որ գնում
եմ, նա հետս է, երգում է, խաղում, ամենուր լսում
եմ նրա քնքույշ ձայնը: Մեկ անգամ, երբ մահը փա-
կեց իմ ուղին և ես հանգիստ վախճանիս էի սպասում,
հանկարծ երևաց նա և մահը փախուստի դիմեց: Մի
ուրիշ անգամ ձմեռը, սաստիկ սառնամանիքին, երբ
գնդակների սուլոցների ու պայթող արկերի բեկորների
տակ խրվել էի ձյան մեջ, թվում էր, թե կսառչեմ ու
անգոր կլինեմ վերջին գնդակս պարպելու թշնամու
ձակտին, հանկարծ նորեն երևաց նա և ջերմություն
տվավ ինձ: Ես բարձրացա տեղիցս և ուռւ գոռալով
առաջ նետվեցի: Թշնամին փախուստի դիմեց...

Վասիլը լռեց, ապա մի կում օղի խմելուց հետո
շարունակեց.

— Ես սիրում եմ նրան, նա շատ մոտ է իմ սրտին.
հանուն նրա սիրո ես պատրաստ եմ ամեն մի զոհա-
բերության: Կարո՞ղ ես դու այդ հասկանալ, երևանցի
հայ...

— Ո՞վ է նա, ասնու:

— Նա իմ կյանքն է, իմ արևը, նա գեղեցկություն
է, երաժշտություն, նա պոեզիա է, առանց նրան ինձ
համար չկա կյանք, երջանկություն:

— Բայց որտե՞ղ է ապրում նա:

— Նա ապրում է իմ սրտում:

— Ոչինչ չեմ հասկանում, սատանան տանի, խոսիր
պարզ, ինչպէս են կոչում նրան:

— Նրա անունը Հայրենիք է... Այդ նա է, որ գի-
շեր-ցերեկ ինձ հանգիստ չի տալիս, չէ որ նրա սըր-

բազան հողը ոտնահարել է թշնամին... Ասա, երևանցի հայ, ալդ նույն վիշտը չէ, որ քեզ տանջում է:

Մուսաբեկյանը բարձրացավ տեղից ու մոտ գալով, ամուր, շատ ամուր իր լայն կրծքին սեղմեց Վասիլի Կատրենկոյին:

— Այո, դու հասկացար ինձ...

— Եվ ահա, որպեսզի արագացնենք թշնամու կործանումը, ժամանակավորապես շարքից դուրս եկած քեզ պես մարտական հատություն ունեցող հրամանատարները թիկունքում խոշոր անելիքներ ունեն: Ալդ նրանք պետք է պատրաստեն վերջին վճռական գրոհին՝ զորաբանակներ: Գնա՛ թիկունք և պատրաստվիր հաղթական գրոհի: Քո հաջողության կենացը, երևանցի հայ...

* * *

1945 թվի մայիս ամիսն էր:

Անընդհատ դղրդում էին թնդանոթները ավստրիական գեղատեսիլ ալպերում: Այստեղ խոշոր մարտեր էին տեղի ունենում:

Ամիս ու կես գրոհող սովետական զորամասերը ալպիական լեռների ստորոտներում կանգ էին առել ու սպասում էին օգնական ուժերի, որոնք բավական հեռ էին մնացել:

Թշնամին, օգտագործելով բնական ամրությունները, լեռներն ու անտառները, անցել էր հակազրոհի:

— Դիմանա՛լ, մինչև օգնություն գա, — կարգադրել էր ղեկավարայի հրամանատարը:

Գումարտակի հրամանատար Վասիլի Կատրենկոն, եղունգները կրծոտելով, ասում էր.

— Կմենենք, բայց ոչ մի քայլ ետ չենք գնա,—
ասպա նայեց իր մի բուռն քաջերին ու գոհունակ
ժպտաց:

— Մրանց հետ մեռնելը փառք է...

Օգնական զորամասերն ուշանում էին: Իսկ թշնամու հրետանային կրակը քանի գնում՝ սաստկանում էր:

Իր դիտարանից կապիտան Կատրենկոն տեսնում էր, թե ինչպես գերմանական զինվորներն արագաքայլ, փոքրիկ վազքերով առաջ էին գալիս: Նրանք նորից պատրաստվում էին գրոհի:

— Միացրեք ինձ զիվիզիայի հրամանատարի հետ,— ասաց Կատրենկոն կապալոր բանակայինին:

Հեռախոսափողը վերցնելով, կապիտանն այն մտեցրեց ըբրանին ու խոսեց.

— Ընկեր գեներալ-մայոր, զրուցյունը կրիտիկական է, դիմում եմ սվինամարտի... Այո...

Կապիտանը լսեց, թե ինչպես գեներալ-մայորը խստորեն կարգադրեց.

— Դիմացեք...

— Լսում եմ,— կարճ կտրեց կապիտանը ու հեռախոսափողը տեղը դնելով, վերցրեց հրացանը, ամրացրեց սվինն ու բարձրաձայն հրամայեց.

— Պատրաստվե՛ր... առանց կարգադրութան սվինամարտի չդիմել...

Ահա այդ ժամանակ էր, որ օդը ճեղքելով՝ թշնամու ուղղությամբ սլացան կարմրաստղ չորս ինքնաթիռ: Ինչ անց, թշնամին զաղարեցրեց հրետանու կրակը, իսկ առաջ վազող գերմանական զինվորներն ամբողջ հասակով բարձրանալով, սկսեցին ետ փախչել:

— Այդ ինչ պատահեց նրանց—հարցրեց գումար-
տակի հրամանատարի տեղակալը:

— Պատահեց այն, որ թշնամու թիկունքն իջան
սովետական պարաշուտիստները,—հանգիստ պատաս-
խանեց կապիտան Կատրենկոն ու գոչեց,—առաջ, իմ
հտեից...

Նա առաջ նետվեց, իր հտեից տանելով մի բուռը
քաջերի:

Մարտը կարճատև եղավ: Օղակի մեջ առնված թըշ-
նամին մեծ զոհեր տալով՝ ցաք ու ցրիվ եղավ:

Կապիտան Կատրենկոն աջ ձեռքից ծանր վիրա-
վորվեց: Մակայն նա ուզում էր տեսնել պարաշուտա-
դեսանտային խմբի հրամանատարին: Երբ պարաշու-
տիստի համազգեստով, ավտոմատը կրծքին կախած,
թուխ դեմքով հրամանատարը մոտեցավ նրան, նա
զսպելով ձեռքի ցավը բարձրացավ տեղից և ուրախ
բացականչեց.

— Կապիտան Մուսաելյան, սիրելի իմ երևանցի
հայ...

— Կատրենկո—գոչեց պարաշուտիստ հրամանա-
տարը և վիրավորին առավ իր դիրկը:

Նրանք ամո՛ւր, շատ ամուր գրկախառնվեցին:



ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Հրաձգային դիվիզիայի հրամանատար՝ զեներալ-մայոր Գրիգոր Մանուկյանն ընդունում էր հյուրերին և հայրաքար ասում:

— Նստեցեք, թանկազինս, նստեցեք:

Լայն, ընդարձակ դահլիճում բացված էր ճոխ սեղան՝ անուշահամ խորտիկներով: Առանձնապես առատ էր կոնյակը, գինին, օղին: Գեներալն ամեն ինչ արել էր, որպեսզի թշնամու հանդեպ տարած հաղթանակի օրվա առիթով բացված ճաշկերույթը լիներ փարթամ ու տպավորիչ: Նա հրամայել էր զընդերի երաժշտախմբերն իրար միացնել: Եվ միացյալ երաժշտախումբն անընդհատ նվագում էր հաղթական քայլերգներ:

Խիստ ու պահանջկոտ զեներալը դառել էր բարի, հոգատար տանտեր: Նա երիտասարդական կայտառությամբ ընդառաջում էր հյուրերին, տեղավորում բազկաթոռների մեջ, հաճելի կոմպլիմենտ անում շատերին ու շտապում ղեպի նոր եկողները: Եվ թշնամու դեմ վարած դաժան մարտերում կոփված խստաբարո հյուրերը, չկարողացան առանց ժպիտի դիտել, թե ինչպես զեներալը ափալ-թափալ վազեց ու զրկեց վերջին եկող հյուրին, երեք անգամ համբուրվեց նրա հետ, ապա բռնելով ձեռից, տարավ նստեցրեց իր կողքին: Դա հարևան դիվիզիայի հռչակավոր կին հրամանատար՝

գնդապետ Բարվենկոն էր: Նոր հյուրի դաշուստը ներկա
ների կողմից ընդունվեց բունն, երկարատև, ոտնկայս
ծափահարություններով ու բացականչություններով:

— Կեցցե՛ք քաջ գնդապետ Բարվենկոն:

Անվանի կին հրամանատարը, որի կուրծքը պատած
էր շքանշաններով ու մեդալներով, բարձրացավ տեղից
ու թեթևորեն շառագունելով՝ գլուխ տվավ բոլորին:

Երբ երաժշտախումբը դադարեց «տուշ» նվագելուց
գեներալը բարձրացավ տեղից ու ասաց.

— Ուրախ եմ, ընկերներ, չափազանց ուրախ, որ
մենք պատվով կատարեցինք մեր պարտքը Հայրենիքի
ժողովրդի հանդեպ... Մենք հաղթեցինք թշնամուն
մենք պահպանեցինք սովետական երկրի երջանկու
թյան աղբյուրի գուլալությունը, անարատությունը...

Գեներալը մի պահ լռեց, նայեց գնդապետ Բարվեն
կոյին, ժպտաց, ապա շարունակեց...

... 191... թվականին, ավստրո-հունգարական ճակատում,
ն. գյուղից 12 վերստ դեպի հյուսիս-արևմուտք
գտնվող երկու գեղեցիկ բլրակների արանքում մեկ
գունդն անսպասելիորեն ընկավ ավստրիացիների խա
չածև կրակի տակ:

Գնդի անձնակազմի կեսից ավելին ընկավ կռվում:

Սակայն իմ հրամատանարության տակ գտնվող
գումարտակն ինձ հաջողվեց չնչին կորուստով դուրս
բերել այդ շրջապատումից: Բայց ես վերջում ծան
վերք ստացա:

Ինձ տեղափոխեցին խորը թիկունք: Երբ վեց ամի
հետո բուժվեցի, նշանակում ստացա և որպես տակտիկ

ավանդող դասատու, ուղևորվեցի Ու... քաղաքը՝
զինվորական դպրոցում աշխատելու:

Ահա այս քաղաքում ինձ հետ պատահեց այն դեպ-
քը, որն իմ կյանքի պատմության անմոռանալի էջն
է կազմում:

Ու... քաղաքի զինվորական դպրոցը ուսսական
բանակի ու ճակատի համար շտապ կարգով սպաներ
էր պատրաստում: Դպրոցի սովորող անձնակազմը գլխա-
վորապես կազմում էին վաճառական, միջին բուրժու-
ազիայի զավակները և ուսումը կիսատ թողած ինտելի-
գենցիան: Թեև ուսուցչական կազմը գրագետ էր,
ոչինչ չէր խնայում դասավանդումը բարձր հիմքերի
վրա դնելու, բայց և այնպես ռազմական գիտություն-
ները դժվար էին ըմբռնվում վախկոտ ինտելիգեն-
ցիայի ու բոի, անտաշ բուրժուականների տղաների կող-
մից: Ես սովորութչուն ունեի իմ խումբը քաղաքից
դուրս տանելու և այնտեղ վարժական պարապմունք-
ներ անցկացնելու:

Պետք է ասեմ, որ օրերս անցնում էին վերին
աստիճանի տխուր ու տաղտկալի: Այդ չոր ու արևից
տապակվող քաղաքում ես ծանոթներ չունեի: Դպրոցի
ուսուցչական-սպայական կազմը միանգամայն օտար
էր ինձ, իսկ ուսանողների մեջ իմ սրտին մոտ մեկը
չկար:

Ես ինձ պահում էի մեկուսացած, շարունակ լինում
էի մենակ, առանց խոսակցի, առանց ընկերոջ:

Միակ սպան, որը երբեմն մոտենում ու խոսում
էր հետս՝ պորուչիկ Վասիլի Մարկովն էր:

Պորուչիկ Մարկովը բարակ իրանով, անսովոր եր-
կար պարանոցով, սուր քթով, օձի խաժաժ աչքերով

մի մարդ էր: Նա քայլում էր ընդհնդալեն, իրանն առաջ
թեքած: Չինվորականի ոչ տեսք, ոչ էլ կազմվածք ու-
ներ նա: Սակայն հպարտ էր, ինչպես հնդկահավ ու իր
մասին մեծ կարծիք ուներ: Նա հետս խոսում էր բարձր
ձայնով, լայն ժպտալով, տեղի-անտեղի քրքջալով, իսկ
ես մտացրիվ ու անտարբեր լսում էի նրան: Երբեմն,
խոսակցության թունդ ժամանակ, Մարկովը հանկար-
ծակի կանգ էր առնում ու քացականչում:

— Սատանան տանի, չէ՞ որ ես ձեզ առաջին հայաց-
քից ձանաչեցի, այդ ինչպե՞ս է, որ դուք ինձ չեք
հիշում: Չէ՞ որ մինք միասին ծառայում էինք Ն.
գյուղում: Ես վաշտի հրամանատար էի, իսկ դուք՝
գումարտակի:

Այնուամենայնիվ ես նրան չէի հիշում: Նա դրա-
նից նեղանում էր: Սակայն այդ չէր խանգարում
նրան նորից մոտենալ ինձ, նորից խոսակցության
բռնվել հետս:

Օրերս կարճելու համար, երբեմն շրջագայություն-
ներ էի կատարում, ուսումնասիրում քաղաքն ու նրա
արվարձանները: Քաղաքը ևս ուներ իր արժանի, դեղե-
ցիկ, ուսանելի կողմերը: Քաղաքի արևելյան կողմի
օղակել էր արագահոս Ուրալը, հյուսիս-արևմտյան
կողմով դանդաղ ու ծուլ-ծուլ հոսում էր Չեգան գետը:
Այնտեղ, ուր Ուրալ և Չեգան գետերը խաչաձևում
էին, փռվել էր գեղեցիկ, սքանչելի մի պուրակ: Վեր-
ձիգ սաղարթախիտ ծառերն իրենց ստվերներին
տակ էին առել սիրունիկ, կոկիկ, սդիտակ տնակները:
Այդ տնակներում ապրում էին հարուստ դասի մարդիկ:
Դա նրանց ամառանոցավայրն էր, ուր նրանք պատըս-

պարվում էին շոգից ու ամառվա տաք ամիսներն անց էին կացնում ուրախության, զով հանգստի մեջ:

Բուն քաղաքը մեծ չէր: Ծառազարդված էին միայն կենտրոնական փողոցները, որոնք տանում էին դեպի զբոսանքի միակ վայրը՝ քաղաքային այգին: Երեկոներն այգում նվազում էր փողային երաժշտախումբը:

Երիտասարդ զույգերը, առույգ ու կայտառ վայրկամ ֆոկստրոտ էին պարում: Ինքս պարի սիրահար էի: Սիրում էի պարել, բայց ամենից շատ սիրում էի կանգնել անկյունում ու դիտել պարողների ճկուն, կայտառ շարժումները:

... Օրը կիրակի էր, երեկոյան դեմ: Աշխույժ նվագում էր երաժշտախումբը: Ես հենվել էի ծառին ու դիտում էի զույգերի պարը: Նրանք մրցում էին միմիանց հետ ճարպիկ շարժումների ու թոփչքների արագության մեջ: Իմ մեջ ցանկություն հղացավ պարել: Մոտեցա անձանոթ, երիտասարդ մի տիկնոջ ու նրան պարի հրավիրեցի: Նա ժպտաց, ապա ձեռքը դրեց ուսովս ու մեք սկսեցինք, սկզբում դանդաղ, ապա հետզհետե արագ, վալսի խելահեղ պտույտները:

Ես մոռացա ամեն ինչ: Թվում էր, թե պատերազմը գոյություն չունի: Ես չեմ տեսել նրա սարսափները: Կյանքը աչքիս դարձյալ երևաց գեղեցիկ, հրապուրիչ: Երաժշտության քնքույշ, մեղմ հնչյունների տակ պտտվում էի անձանոթ, սակայն դուրալի մարմնով տիկնոջ հետ... Ես միանգամայն կլանված էի, թվում էր, թե գտնվում էի ինչ որ հեքիաթային, վերացական աշխարհում: Հանկարծ պարող զույգերի արանքից դուրս եկավ մեկ զույգ: Կանացի գեղեցիկ գլուխը շրջվեց դեպի ինձ և նրա սև, սիրունիկ, զարմացական

աչքերը հառվեցին վրաս: Այդ վաղեմի ծանոթ աչքերը
ցնցեցին ողջ մարմինս: Ես ս'սեցի պտտվել: Երբ հա-
վասարվեցի այդ նոր'իկ գուլգին, ժպտալով բացական-
չեցի:

— Զինախղա Արկաղենա:

— Գրիգոր,— բացականչեց զեղեցիկ կինը:

Նա էր, Զինախղան: Նա խսկույն թ ղեց իր պարտ-
նյորին, ապա ընդառաջ եկավ: Ես անծանոթ տիկնո-
ջից ներողություն խնդրեցի, թողի նրան: Մենք
մոտեցանք, առանց մի բառ արտասանելու բռնեցինք
իրար ձեռներ ու շտապ դուրս եկանք պարողների
շրջանից:

Զինան հագնված էր չափազանց շլացուցիչ: Նրա
փարթամ մաղերն ուսերի վրա կաղմել էին խիտ
խոպոպիկներ: Այդ խոպոպիկներից բուրում էր անուշ
մի հոտ: Կիսաբաց, փղոսկրյա սպիտակություն ունե-
ցող ուսն ու հոլանի լիք թևերը կախարդիչ տալավո-
ւթություն էին թողնում նայողի վրա:

Զինան արագ-արագ հովհարում էր դեմքը: Ըստ իմ
հին սովորության, մեղմորեն ձեռս առա հովհարն ու
սկսեցի հոգացողորեն հովհարել այդ զեղեցիկ կնոջը:
Նա ժպտաց և խանդաղատանքով նայեց վրաս:

— Դուք ի՞նչ եք անում այս քաղաքում, Զինախղա
Արկաղենա,— հարցրի ես:

— Հանդստանում եմ, Գրիգա, իմ ամառանոցը գլտ-
նվում է Սանի պուրակում, կարող ես հյուր պալ ինձ:

— Ծնորհակալ եմ, Զինա:

— Իսկ դու թնց հայտնվեցիր այս կողմերում, չէ՞
որ դանվում էիր ռազմաճակատում:

Ես կարճ պատմեցի իմ մասին:

— Ինձ հետ էլ դժբախտություն պատահեց... Անց-
յալ տարի, անսպասելի կերպով մահացավ ամուսինս:

— Ինչպե՞ս, — զարմացա ես, — միթե՞ այժմ մենակ ես:

Զինայի հետ ծանոթացել էի հինգ տարի առաջ: Պատերազմի առաջին տարում մեր գունդը գտնվում էր Ս. քաղաքում: Այդ քաղաքը ուս արխատոկրա-
տիայի ու վաճառականության բունն էր:

Մեր գնդի փողային երաժշտախումբը ամեն երեկո
այգին էր հավաքում արխատոկրատ — սլորտաբույժ երի-
տասարդության երկու սեռերին: Այգին էր զալիս նաև
Զինան իր ծանոթ տիկիներին հետ: Այդ տիկիներին
ամուսինները մեծ մասամբ վաճառականներ էին: Հա-
ճախակի քաղաքից բացակա լինելով, այդ «գործուն-
յա» մարդիկ հնարավորություն չունեին իրենց կա-
նանցով զբաղվելու: Այդ պարտականությունը բարե-
խղճորեն կատարում էին մեր գնդի սպաները: Զինան
ամենանշանավոր վաճառական Բորիս Գլեբովիչի կինն
էր: Բորիս Գլեբովիչն ուներ իր սեփական նավը,
վարում էր խոշոր վաճառականական գործեր և ամիսը
հազիվ մեկ անգամ լինում էր տանը: Նա նույնիսկ
այդ միակ օրը չէր կարողանում նվիրել երիտասարդ
կնոջը:

— Օ՛, ոնց եմ ատում ես նրան, նրա հարստու-
թյունը, — զանգատվում էր Զինան, — օրերս անցնում են
տաղտուկ, անիմաստ: Թվում է, թե պառավել եմ, ան-
պետքացել, կյանքի զվարճալի կողմերը չեն հրապու-
րում ինձ: Կինն առանց սղամարդի ապրել չի կարող:
Նրա կյանքը դառն է: Նս այդպիսի դժբախտ կանան-
ցից եմ:

Եվ այդ ասում էր 18-19 տարեկան, նոր ամուսնացած, հարուստ, փարթամ գեղեցիկությամբ կինը:

Ես Զինային ոչինչ չէի ասում: Ես շուտով էի նրա փափուկ, կլոր, սիրուն ձեռները, կարոտալից նայում նրա գեղեցիկ աչքերին, լիքը ուսերին:

— Ձեր ամուսինը կույր է ու մարդկային քնքույշ զգացմունքներից զուրկ, Զինաիդա Արկադևնա: Դուք նրա համար ոչ այլ ինչ եք, եթե ոչ թանկագին գոհար: Նա վաճառական է և ձեզ նայում է իր մասնագիտության աչքերով: Իսկ ինձ համար դուք կյանքի, երջանկության աղբյուրն եք,—բացականչում էի ես ու նրան բաց թողնելով թեվերիցս, հեռանում ու հեռվից զմայլվում նրանով: Նա կատարյալ պատկեր էր: Ես այն ժամանակ իրոք սիրում էի այդ ջահել կնոջը: Նա ևս հավատացնում էր, որ սիրում է ինձ.

Եվ անհ չորս-հինգ տարվա անջատումից հետո, մենք նորից հանդիպեցինք իրար: Նա այժմ ավելի էր հասունացել, ավելի գեղեցկացել:

Ինչ խոսք, որ ես չափազանց ուրախ էի այդ հանդիպման:

Զինան ևս ուրախ էր:

Մենք այդ ողջ երեկոն պարեցինք արբենալու չափ:

Երբ ուշքի եկանք, նոր նկատեցինք, որ միակ պարոզ դույզը դա մենք էինք: Մնացած դույզերը հոգնած, հևասպառ մի կողմ էին քաշվել ու հետաքրքիր զարմանքով նայում էին մեզ:

Զինան քրքջալով քաշեց թևիցս ու մենք վազելով հեռացանք պարահարթակից:

Օրերն ինձ համար նոր հմայք ստացան:

Որպես սիրաբորբոք պատանի, անհամբեր սպասում էի, թե երբ վրա կհասնի երեկոն, որպեսզի վաղեմ Ձինային դիմավորելու:

Ես ու Ձինան ամեն օր գնում էինք ակումբ՝ դիտելու շրջիկ թատերախմբի ներկայացումները: Ամեն երեկո ուրախ էր անցնում մեզ համար:

Մեկ օր, ինչ որ տոնի կապակցութեամբ՝ դպրոցի պետ գեներալ Օրլովը կարգադրեց դպրոցի ակումբի դահլիճում կադմակերպել սպայական շքեղ երեկո:

Բոլոր սպաները հրավիրատոմս ստացան երեկոյին ներկայանալ իրենց տիկնանց հետ: Գեներալի հրամանով, ով տիկին չունեի, նա չպետք է մասնակցեր երեկույթին: Այսպիսով գեներալը ցանկանում էր անձամբ տեսնել, թե իր սպաներն իրենց արժանի՞ տիկիներին հետ են ման գալիս, թե ոչ:

Այդ երեկույթին ներկա լինելու հրավեր էի ստացել նաև ես: Ինչ խոսք, որ առանց Ձինայի այդ երեկոն ինձ համար ոչ մի հետաքրքրութուն չէր ներկայացնի:

Սակայն ինձ մեկ դժվարին խնդիր բավականին մտահոգութուն էր պատճառում: Դա հազուստի խնդիրն էր: Հարմար հազուստ չունեի: Սովորական, ամենօրյա շորերով դնալ երեկույթին, անհարմար էր: Ուստի վճռեցի հին հազուստեղենս տալ լվանալու, հարթուկելու, մի խոսքով «հինը նորացնելու»: Բայց մեծ տար: Երկար խորհելուց հետո, վճռեցի հանձնել մեր դպրոցի լվացարարուհիներից մեկն ու մեկին: Այդ ինձ համար էժան կլիներ: Պետք է խոստովանեմ,

որ ես այն ժամանակ դրամի խիստ կարիք էի զգում: Զինան ինձ չափազանց թանկ էր նստում: Թեև նա հարուստ էր և իմ օգնության կարիքը չեր զգում, բայց ամեն մի գնում կատարելիս, պահանջված գումարը ինքս էի վճարում: Հպարտութունս թույլ չէր տալիս ապրիլ ու ման գալ Զինայի ծախսերով:

... Այդ օրը դասի գալիս, ես խնամքով հին շորերս փաթաթեցի թերթի մեջ ու բերի հետս: Դասամիջոցին, կապոցը թելիս տակ, բակ դուրս եկա:

Լվացքատան լվացարարուհիները բախում շորերը փռում էին պարանների վրա: Ես մոտեցա նրանցից մեկին, որը մեջքով կանգնել էր դեպի ինձ ու պարանի վրա խնամքով կախում էր անկողնակալի սավաններ: Նա գեղեցիկ ու նուրբ իրան ուներ: Սպիտակ լաշակն այնպես էր կապել գլխին, որ աչքերն ու դեմք համարյա չէին երևում:

— Տիկին, կարելի՞ է դիմել ձեզ մեկ խնդրով:

— Լսում եմ ձեզ, պարոն սպա:

Զայնը քնքույշ էր, հմայիչ ու արտասովոր երաժշտական:

Ես ակամա նայեցի լվացարարուհու դեմքին ու մնացի ապշած:

Իմ առջև կանգնած էր չքնաղ մի էակ: Գեղեցիկ, խոշոր սև աչքերը, բարակ, նուրբ ունքերի տակ կազմել էին զուլալ ջուխտ լճակ: Նրա ճերմակ դեմքը, ուղիղ քիթը, նուրբ շրթունքները, որոնց վրա թառել էր ժպիտը, նայողին խելքամաղ էին անում:

Ես զմայլված նայում էի ու չէի կարողանում խոսել:

— Պարոն սպա, հրամայեցեք, ես ձեզ եմ սպասում,— ասաց նա ու ծիծաղեց:

Դա ծիծաղ չէր, այլ հմայիչ երաժշտության քնքույշ մի ակկորդ:

— Ես, ես կխնդրեի, որ դուք քիչ կարգի բերեք իմ գալիֆենն ու վերնաշապիկը...

— Պարոն սպան սպառաստովում է երեկույթի, այնպես չէ:

— Այո;

— Պարոն սպան անշուշտ երեկույթին կգնա Զինայի հետ, այնպես չէ°...

Նրա ակնարկն ինձ զարմացրեց, սակայն բնավ չվիրավորեց:

— Իսկ դուք այդ որսեղից զիտեք:

Նա խորամանկորեն ժպտաց և առանց հարցիս պատասխան տալու, ասաց.

— Ձեր գալիֆենն ու վերնաշապիկը երբ պատրաստել, պարոն սպա:

— Այսօր ժամը վեցին, եթե կարող եք:

— Ո՞ւր բերել:

— Բերել դարպասի մոտ, ես ձեզ կսպասեմ:

Նա վերցրեց շորերս, ապա խորիմաստ մի հայացք նետելով վրաս, հեռացաւ: Ես կանգնել ու նայում էի նրա ետևից:

Նա կարծես թե վարդի կոկոն լիներ: Աշխարհիս ամենամեծ քանդակագործն անգամ կնոջ այդպիսի հիասքանչ մարմնի գեղանուրբ կազմվածք դէռ չեր քանդակել, որպեսին նվիրել էր ինքը, բնությունն այդ արարածին:

— Ահա կյանքի աստվածը. և որպեսի հասարակ շորերի մեջ է թաքնված նա, — շնչացի ես ակամա, — սակայն ոչ ոք նրա վրա ուշադրություն չի դարձնում:

Նա թերև, ապրում է ներքին ու մութ նկուղում: Նա գոհար է, թաքնված երկրի ընդերքում:

Ես երկար հմայված դիտում էի դանդաղ ու վեհափառ քայլվածքով հեռացող լվացարարուհուն: Ամենահպարտ ու գրավիչ Շամիրամ թագուհին անգամ չուներ նրա քայլվածքի վսեմությունը: Եվ իմ կյանքում ես առաջին անգամ, չգիտես ինչու, ամսոսացի խորը կերպով:

Ամբողջ օրը ման էի գալիս որպես հարբած, շմածի պես: Դասարանից-դասարան էի մտնում ու չէի գտնում իմ խումբը:

Դասավանդում էի առանց հետևելու մտքիս թելին: Նույն դարձվածքները կրկնում էի մի քանի անգամ: Տրված հարցերին պատասխանում էի կիսատպուտ, կցկտուր: Ապագա սպաները ժպտալով, խորիմաստ աչքով էին անում իրար: Իմաստը պարզ էր. «Կապիտանը կոնծել է»: Ես իսկապես հարբած էի: Ինձ իր անուշ բուրմունքով արբեցրել էր գեղատեսիլ լվացարարուհին: Նա իր սլացիկ, ճկուն հասակով, նուրբ շրթունքներով, կախարդիչ ժպիտով, շարունակ կանգնած էր առջևս:

Վերջապես դասերը վերջացան

Ես շտապ դուրս եկա բակը: Թևս բռնեց պորուչիկ Վասիլի Մարկովը:

— Ձեզ թնչ է պատահել, ինչ որ արտասովոր եք, — հարցրեց նա:

— Առանձնապես ոչինչ... Մտածում եմ երեկույթի մասին, խուսափող պատասխան տվի ես:

— Դուք ինչու պետք է մտածեք որ, — ասաց նա, — այդ ես պետք է մտածեմ:

— Ինչո՞ւ, — զարմացա ես:

— Շատ պարզ: Դուք ունեք միայն մեկ դամա, ու նրա հետ կգաք երեկույթին: Իսկ ես ունեմ հինգ դամա, գլուխ եմ ձաքեցնում ու չեմ կարող որոշել, թե որի՞ հետ ներկայանամ գեներալական երեկույթին, — բացատրեց նա շատ հանգիստ, լպիրշ խնդաց՝ թեթև զարկելով ուսիս:

Ես զզվանքով նայեցի նրան: Նա աղտոտում էր իմ քնքույշ, նվիրական զգացմունքները:

Պորուչիկ Մարկովը պատկանում էր պորտաբույծ գինվորականների թվին: Նա իր ստացած գումարից գոռոշ անգամ չէր ծախսում: Նա ապրում էր միայն իր «հինգ դամաների» ծախսերով:

— Բայց իմ հինգ դամաները միասին վերցրած չարժեն ձեր Զինային, հարուստ ու գեղեցիկ Զինային, — ափսոսանքով եզրակացրեց նա, ապա նայելով դեմքիս՝ շարունակեց, — Գրիգոր Պողոսովիչ, նա ձեզ համար ոչինչ չի խնայի, նա պատրաստ է ձեր յուրաքանչյուր ցանկությունն իսկույն և ետ կատարել: Ինչո՞ւ չեք օգտվում այդ կնոջ առատածեռնությունից:

— Այդ ինչեր էք ասում, պորուչիկ, — զայրացա ես: Մակայն նա ըստ երևույթին չնկատեց իմ վրդովմունքը: Նա նույն տոնով շարունակեց.

— Գիտեմ, ամեն ինչ գիտեմ, Գրիգոր Պողոսովիչ, ինձանից ու Վլադիմիրից վերցրած պարտքերը ծախսում եք Զինայի վրա: Բայց չէ՞ որ մադամ Զինան ձեր դրամի կարիքը չի զգում: Նա հարուստ է այնքան, որ կարող է ձեզ ոսկու մեջ լողացնել: Օգտվեք այդ կնոջ հարստությունից, այն անսպառ է:

Ես հանկարծակի կանգ առա: Սմուր բռնեցի նրա բարակ թևից ու խիստ ասացի:

— Լսեցեք, պարոն, եթե մյուս անգամ համարձակվեք այդպիսի ակնարկներ անել, ես չեմ խնայի հինգ գնդակս, բոլորը կպարպեմ ձեր ճակատին:

Նա հիմարի պես ապշեց:

— Ի... Ի՞նչ,— կմկմաց նա ու քաշեց թևը:

Նա դեղնելով վախեցել էր:

— Հեռացեք, միք պղտորի արյունս,— գոռացի ես ու ձեռս տարա դեպի ատրճանակը:

Նա դեղնելով ետ-ետ գնաց:

— Ես ձեզ վատ բան չասացի, Գրիգոր Պողոսովիչ... Ես... Ես կատակ արի,— կմկմաց նա:

— Այդպիսի կատակներ ես չեմ սիրում:

— Լավ, լավ, էլ չեմ անի... Իսկապես որ կովկասեցու հետ պետք է զգուշ լինել, տաքարյուն են, շուտ բռնկվող, մեկ էլ տեսար դուր տեղը մարդուն սպանեցին,— մրթմրթալով, մոլորվածի պես նա սկսեց հեռանալ:

* * *

Երեկոյան ժամը հինգն էր:

Ես արգեն կանգնած էի դարպասի առաջ: Անհամբեր սպասում էի լվացարարուհուն: Բոլորովին չէի մտածում հագուստի կամ երեկույթի մասին. Ինչ որ զորավոր ուժի մղումով ես մեկ ժամ առաջ դուրս էի եկել փողոց ու սրտատրոփ սպասում էի լվացարարուհուն:

Համբերությունս հատում էր, իսկ նա դեռ չէր երևում:

Սպաները շտապ-շտապ ել ու մուտ էին անում, բարևում ինձ, ոմանք էլ հարցնում, թե ես ում եմ

սպասում: Ըստ երևույթին ես միայն ապուշորեն ժպտում էի ու բան չէի ասում:

Բայց անա արդեն ժամը վեցն է: Ես անցա ու կանգ առա դարպասի դիմաց բուսած տերևախիտ ակացիաի տակ: Ես տեսա նրան: Նա գալիս էր:

Ճերմակ կարապի պես դանգաղ ու հպարտ քայլերով գալիս էր լվացարարուհին: Նա հագնված էր հասարակ, սակայն մաքուր ու վայելուչ:

Գլխի սպիտակ շորի տակից, փարթամ գիսակներն իջել էին ուսերին ու նրան տվել թարմ, սիրուն տեսք: Նա ժպտում էր քնքույշ ու դուրալի: Սիրտս կրճքիս վանդակում թպրտում էր և ես զգում էի նրա թպրտոցները: Երբ լվացարարուհին բավական մոտեցավ, այլևս չկարողացա ինձ զսպել, ընդառաջ վազեցի և անիմաստ ու անգիտակցաբար բացականչեցի:

— Ա՛, արդեն պատրմաստ է...

— Պատրաստ է, պարոն կապիտան, խնդրեմ, ստացեք, — պատասխանեց նա ու ինձ մեկնեց մաքուր սպիտակ շորի մեջ փաթաթած կապոցը:

Ձեռս տարա գրպանս, հանեցի մի քանի թղթադրամ և առանց հաշվելու մեկնեցի նրան:

Նա հրաժարվեց ընդունել վճարը:

— Դուք ինձ անհարմար դրուժյան մեջ եք թողնում, կապիտան, — ասաց նա թեթև շիկնելով:

— Դուք աշխատանք եք կատարել, արժանի եք վարձատրման: Դուցե վճարը քիչ է, ներեցեք, այս բոլորն սխալը կուղղենք:

Նա գուլյնը գցեց, ապա բացականչեց այնպես, կարծես թե ես նրան ցավ պատճառեցի:

— Օ, ոչ, այդ ինչն՛ր եք ասում, ես ձեզանից ոչ մի

վճար չեմ ուզում... Դեհ, մնաք բարով, ես շտապ գործ ունեմ:

Նա շրջվեց և ուզում էր հեռանալ:

Ես բռնեցի նրա թևից: Նա ողջ մարմնով մեկ դողաց, սակայն թևը դուրս չքաշեց:

— Ներեցեք, եթե վիրավորեցի ձեզ... Այդ դեպքում թույլ տվեք ուղեկցել ձեզ մինչև ձեր տունը:

— Օ, ոչ, հարկավոր չէ, պարոն կապիտան, կարող եք երեկույթից ուշանալ, մեր տունը բավականին հեռու է...

Ես առանց վարանելու սկսեցի քայլել նրա հետ: Անցող-դարձողների վրա ուշադրություն չէի դարձնում: Սակայն, այնուամենայնիվ իմ ուշադրությունից չվրիպեց պորուչիկ Վասիլ Մարկովը: Նա մտել էր արտասովոր գեր մի տիկնոջ թևը և ծանր-ծանր գալիս էր մեզ ընդառաջ: Երբ բավականին մոտեցել էինք իրար, նա հետաքրքիր ու դարմացած նայեց ինձ, ուղից ուհուս՝ ոտքից մինչև գլուխ, ապա թեքվելով ինչ որ արագ-արագ շնչաց տիկնոջ ականջին: Գեր տիկինը բռնեց կողքից կախած լորնետը, մոտեցրեց աչքերին ու սկսեց գննել մեզ: Սակայն տարածությունը մեր մեջ այնքան քիչ էր, որ մենք շտապ սնցանք և նա ըստ երևույթին չկարողացավ մեզ դիտել:

Բավականին ժամանակ ես ու լվացարարուհին քայլում էինք լուռ: Նա երկու ձեռքով բռնել էր գլխաշորի ծայրից ու այն աշխատում էր կապել կարապի պարանոցի նման սպիտակ իր պարանոցին: Նա նայում էր այս և այն կողմ ու թվում էր, թե վախենում է մեկն ու մեկից, կամ ամաչում իմ ընկերակցությունից:

— Ձեր անունն ի՞նչ է, — հարցրի ես:

— Մարիա:

— Մարիամ:

Նա զարմացած նայեց երեսիս:

— Մարիամ՝ մեր լեզվով է, — բացատրեցի ես, —
քաղցր, լավ անուն է:

Նա ցածրաձայն ծիծաղեց:

— Ո՞ւր հետ եք ապրում, Մարիա:

— Ապրում եմ մորս հետ, նա բարի, լավ մայրիկ
է: Նա ուզում է աշխատանքի գնալ, սակայն ես թույլ
չեմ տալիս: Նա պառավ է:

— Իսկ ձեր վաստակը բավարարում է երկու-
սիդ:

Նա նայեց ինձ ու ոչինչ չասաց:

Ես կամենում էի նրան շատ հարցեր տալ: Սակայն
լեզուս լալկվել էր, համարձակութունս չքացել: Բացի
դրանից, աղջիկը չափազանց ամաչում էր և այդ ինձ
կրկնակի անհարմար դրության մեջ էր թողնում:

Հանկարծ լվացարարուհին սայթաքեց ու թեթե
ճիչ արձակեց: Ես իսկույն բռնեցի նրա թևից ու պահ-
պանեցի հավասարակշռութունը: Մենք առժամանակ
այդպես քայլեցինք: Հետո նա կանգ առավ և աղաչա-
կան տոնով ասաց.

— Բաց թողեք թևս, անհարմար է:

— Ամաչում եք ինձ հետ քայլել թևանցուկ:

— Օ, ոչ:

— Վախենում եք, որ ձեր սիրածը կարող է տեսնել:

— Ես սիրած չունեմ:

— Ապա ինչու չեք կամենում, որ ձեր թևից բռնեմ,
միթե՞ դրա մեջ պախարակելի բան կա:

— Պարոն կապիտանին վայել չէ լվացարարուհու

հետ թեանցուկ ման գալը: Պարոն կապիտանը կարող է թեանցուկ անել հարուստ, բարձր դասի կանանց: Նրան ոչ ոք վատ բան չի ասի:

— Մարիա, դուք բարձր եք բոլոր հարուստ կանանցից:

— Եթե այն տիկինը լսի, կնեղանա ձեզանից:

— Ո՞ր տիկինը:

— Այն տիկինը, որի հետ շարունակ պարում եք, ակումբ գնում: Նա ձեզ շատ է սաղում և նրա հետ ամոթ չէ ման գալը:

Այս բառերը Մարիան արտասանեց միանգամայն լուրջ, առանց ժպտալու, տխուր ձայնով:

— Այդ ամենը դուք որտեղից գիտեք:

— Ես ձեզ շարունակ նրա հետ եմ տեսնում:

— Ուրեմն դուք ևս լինում եք ակումբում:

— Այո, երբեմն:

— Ո՞ւմ հետ:

— Մենակ, կամ ընկերուհիներիս հետ:

— Կկամենա՞ք ինձ հետ ակումբ գնալ, մենք միասին կպարենք:

— Ոչ:

— Ինչ՞ի:

— Այնպես:

Նա այլևս ոչինչ չասաց: Մենք կանգ առանք երկհարկանի խոշոր շինության դիմաց: Մոտեցանք փայտյա, հաստ դարպասին:

— Ահա մեր տունը, շատ ու շատ շնորհակալ եմ ցույց տված պատվի համար: Դեհ, շուտ վերադարձե՛ք, ապա թե ոչ երեկույթից կուշանաք և ձեր տիկինը կնեղանա, — ասաց նա թեթև ժպտալով:

— Ձեր սենյակն ինձ ցույց չե՞ք տա:

— Ձեր ինչի՞ն է հարկավոր: Իմ սենյակը ձեզ դուր չի գա, պարոն կապիտան, այն գտնվում է նկուղում:

— Նկուղում... Երևի պատուհան էլ չունի,—հարցրի ես:

— Ոչ, պատուհաններ կան, ահա այս երկու ցածր պատուհանները, որ նայում են դեպի փողոց:

Դարպասից քիչ աջ, երկու մաքուր պատուհան, ծածկված սպիտակ վարագույրով, ամուր կպած էին մայթին: Նրանց մաքուր, պսպղին տվող ապակիներից կարելի էր ենթադրել, որ սենյակում տիրում է կատարյալ մաքրութուն:

Ես բռնեցի Մարիայի ձեռը, նայեցի զուլալ, գեղեցիկ աչքերին, արտասանեցի.

— Մարիա, այսուհետև իմ սիրտը գտնվում է ձեր ձեռքում: Ես ձեզ սիրում եմ և ամեն օր, լինի գիշեր, թե ցերեկ, ես կգամ ձեր պատուհանների մոտ:

— Լռեցեք, այլևս չայդ մասին ոչ մի խոսք,— ջացակասնչեց աղջիկը և կտրվելով տեղից, այժյամի թեթև-զւթյամբ փախավ բակը:

* * *

...Ժամը յոթ անց կեսն էր: Ես ուշացել էի ժամադրմանը: Այդ իմ կյանքում առաջին դեպքն էր, որ ժամադրված ժամից պետք է ուշ գայի: Սակայն նայած դրան, բոլորովին չէի շտապում: Ես դեռևս գտնվում էի լվացարարուհու ազդեցության տակ և այդ աղջիկն իր սքանչելի հասակով երկար չէր հեռանում մտքիցս:

Երբ հասա Խանի պուրակը, արդեն մութն ընկել էր:

Սո բարձրացա կոկիկ վերանդան ու ծեծեցի դուռը:
Գուրս եկավ աղախինը՝ միջին տարիքով, համա-
կրելի մի կին:

— Տիկինը տանն է,—հարցրի ես:

Աղախինը պատասխանեց թեթև նախատական
տոնով:

— Օ՛, պարոն, նա ձեզ երկար սպասեց, հետո զայ-
րացավ, հա նեց շորերն ու պառկեց:

— Հայտնեցեք, որ ես եկել եմ և խնդրում եմ, որ
ինձ ընդունի:

— Ձի ընդունի, պարոն, սաստիկ նեղացել է:

— Գնացեք հայտնեցեք տիկնոջն իմ խնդիրը:

Աղախինը գնաց: Գլխումս համառորեն անընդհատ
մի միտք էր պտտվում: «Թողնել հեռանալ, գնալ
ուզիդ Մարիայի մոտ, ու էլ չհեռանալ նրանից
Ձինաները ժամանակավոր են, տխուր, ձանձրալի»:

Մինչև այսպես խորհում էի, վերադարձավ աղախինն
ու հայտնեց.

— Տիկինը խնդրում է ներս գալ:

Մտա Ձինայի ընդունարանը: Նա մեկնվել էր փա-
փուկ դիվանի վրա և ինձ ընդունեց թթված, նեղա-
ցած դեմքով:

— Իմ տղաս, այդ երբվանից է, որ դուք սկսել եք
ուշանալ:

Երբ Ձինան նեղանում էր, նա սկսում էր հետս
«գուք»-ով խոսել:

— Կարևոր գործ կար, Ձինաիդա,—պատասխա-
նեցի ես:

— Երևի այդ կարևոր գործը ձեր կյանքի համար
մեծ նշանակություն ուներ, այո՞:

— Այո, Ձինա, չափազանց մեծ նշանակութիւն ունեցաւ: Նա իմ կյանքում, իմ հայացքում խոշոր հեղաշրջում կատարեց:

Ձինան կիսազարմացած նայում էր ինձ, ճգնում ըմբռնել, լուրջ եմ խոսում, թե կատակում եմ:

Ես մոտեցա նրան, բռնեցի ձեռքն ու խաղաղ տոնով շարունակեցի:

— Մի բարկանա, Ձինա, պատասխան տուր իմ հարցին, ասա, դու երբեիցե սիրե՞լ ես մաքուր, անկեղծ սիրով:

— Այդ ի՞նչ հարցուփորձ է, պարօն, միթե՞ դուք չգիտեք իմ կյանքի պատմութիւնը: Ձէ որ ամուսնուցս հետո երկրորդ տղամարդը, որին ճանաչում եմ, այդ դուք եք...

— Քո կյանքի պատմութիւնն ինձ հայտնի է: Ես գիտեմ, որ դու ամուսնուդ չես ճանաչել, չես սիրել: Ինչ նրան կնության են տվել ծնողներդ կամքիդ հակառակ, ավելի շուտ քեզ ծախել են այդ հարուստ մարդուն: Բայց ասա, ճշմարիտ ասա, Ձինա, դու ինձ սիրո՞ւմ ես:

Ըստ երևույթին ես խոսում էի չափազանց լուրջ, ազդեցիկ տոնով, որովհետև Ձինան փոխեց դեմքի գույնը, բարձրացավ տեղից, շփեց ու շտկեց մազերը, մոտեցավ հայելուն, զննեց իրեն ոտքից գլուխ, ապա ետ գալով՝ կանգնեց դիմացս ու ասաց:

— Տղաս, իրավ որ քեզ հետ լուրջ դեպք է պատահել: Հարցնում ես, սիրո՞ւմ եմ ես քեզ: Պատասխանում եմ, դու ինձ դուր ես գալիս: Ինչ դուր ես գալիս ինձ, որովհետև տարբերվում սե մնացած տղամարդկանցից

ոչ միայն քո արտաքինով, այլ և քո ներքին հոգեկան աշխարհով: Դու հինգ տարի ինձնից հեռու ես եղել: Չգիտես իմ վերջին հինգ տարվա կյանքը: Լսիր ուրեմն: Ամուսինս ամենատգեղ, ստոր արարածներից մեկն էր: Սակայն նա երկրի տարբեր ծայրամասերում ուներ հոյակապ տներ, ուներ գեղատեսիլ սիրուհիներ, ման էր գալիս ճշմարտությունը կոխկրտելով, ապականելով, ջարդում էր, փշրում լավը, պղծում սրբությունը, ինքը ոչինչ չէր շինում, ուրիշների շինածն էլ ավերում, փչացնում էր: Ո՞վ էր նրան այդ իրավունքը տվել և կգտնվե՞ր մի սիրտ, որ նրան սիրեր անկեղծ, ամբողջ հոգով: Միթե՞ կարծում ես, որ ես այդ չէի հասկանում...

Հետո նա մահացավ: Նրա հարստության միակ տերն ու տիրականը ես դառա: Ամուսնուս մահից մի քանի օր անց, ոտքերս լիզելով, ինձնից սեր էին հայցում շատ-շատերը:

Ամենքը, ամենքը հավատացնում էին, որ սիրում են ինձ, որ նրանք իրենց ամբողջ կյանքում միայն իմ մասին են երազել, ինձ են տենչացել: Ես նրանց չէի ճանաչում, չէի տեսել: Սակայն միթե՞ կարծում ես, որ ես նրանց չէի հասկանում: Եվ ասա, կարո՞ղ էի ես երբևիցե սիրել նրանցից մեկն ու մեկին:

Ձինան շեշտակի նայեց աչքերիս: Ես բերանս բաց լսում էի նրան: Ն. ր. այդ հարուստ, հպարտ ու եռասեր կինը, առաջին անգամն էր հետս խոսում այդպես պարզ ու անկեղծ: Նոր նկատեցի, որ Ձինան խելացի կին էր և ես իմ հարցով նրան վիրավորեցի:

— Ձինա, — ասացի ես, — ներիր, եթե վիրավորեցի քեզ:

Նա ծիծաղեց, ապա բռնելով ծոծրակիցս, կրկին
թափանցող հայացքով նայեց աչքերիս ու հարցրեց.

— Տղաս, իսկ դու ինձ սիրում ես, ասա:

Ես իսկույն չկարողացա պատասխան տալ:

— Դժվարանում ես ասել, դե, իհարկե, չես սիրում:
Եվ չես էլ կարող ինձ սիրել: Կարծում ես այդ ես
չգիտեմ: Սակայն դու ընդունակ ես սիրել ուժգին,
անկեղծ: Երբեմն, այո, երբեմն դու այդպիսի սեր իմ
հանդեպ ցուցաբերում ես: Սակայն նրանք վայրկյա-
նական կայծեր են, որ դուրս են ցայտում առանց
բոցեր տալու: Դու ինձ չես կորող սիրել, որովհետև
իմ մեջ կյանքի իմաստ չես գտնում: Ես քեզ համար
ժամանակավոր աղբյուր եմ, կառուցված օտարների
ձեռքով, օտար, ամայի, բաց դաշտում, ուր դու կանգ
ես առել ժամանակավոր օթևանի: Սակայն երբ նորից
կշարունակես քո կյանքի ուղին, կքայլես առաջ, ան-
տարակույս դու կգտնես քո հարազատ աղբյուրը, որի
ակունքից դու այլևս չես հեռանա մինչև կյանքիդ
վերջը:

Զինան երկար խոսում էր այսպես: Ակամա ենթարկ-
վելով նրան, ես լսում էի լճու, անձայն: Ամեն ին-
չից երևում էր, որ ես իմ անտեղի հարցով խորտա-
կեցի այդ կնոջ հոգեկան դետի առջև կանգնեցրած
պատնեշը և ահա կանգ առած ջուրը ազատութուն
ստանալով, սկսեց առաջ վազել:

Զինան լռեց: Ապա երկու քայլ հեռացավ դեպի
խոհանոց տանող դուռն ու գոչեց.

— Սոֆիա, գինի ու խորտիկ բեր, ես կամենում
եմ հարբել, բացի դրանից, այսպիսի զրույցը պետք է

տարվի գինու բաժակները առջև: Ուրեմն խմենք, տղաս
և շարունակենք մեր վեճը:

— Զինախղա Արկագենա, մենք պետք է գնանք
երեկույթի, հարկավոր է հագնվել, — զգուշությամբ
ասացի ես:

— Մենք ուշացել ենք, տղաս, իսկ ուշացած հյուրը
սատանայից էլ վատ է:

— Ոչ, մենք չենք ուշացել և ճիշտ ժամանակին
տեղը կլինենք, որովհետև երեկույթները սովորաբար
ուշ են սկսվում:

— Ես կամենում եմ շարունակել մեր զրույցը:

— Վերջ տանք դրան, Զինա, ամենակարևորը մեզ
համար պարզ է, մենք իրար հասկանում ենք և այդ է
էականը: Կարգադրեցեք, որպեսզի բերեն ձեր հանդեսի
շորերը:

Ես սկսեցի կատակներով բարձրացնել տիկնոջ
ընկած տրամադրությունը: Այդ ինձ հաջողվեց:

Զինան ժպտաց ու սկսեց հագնվել:

Արդեն մթնել էր: Փողոցի անկյուններում, բարձր
այտներին ամրացրած հատ ու կենա նավթի լամպերն
աղոտորեն լուսավորում էին մայթերը:

Ես ու Զինան ամուր կպել էինք իրար, լուռ և
անձայն քայլում էինք դեպի գեներալական երեկույթը:

Թեթև քամին սուլում էր մեր ականջներում ու
շարժում Զինայի շորերի քղանցքները:

* * *

Մենք բավականին ուշացել էինք գեներալական
երեկույթից: Երեկույթի բացման հանդիսավոր մասն
արդեն ավարտվել էր: Ակումբի լուսավոր դահլիճնե-

րում տիրում էր աշխույժ աղմուկ-աղաղակ, ամենուրեք
թնդում էր բարձր ծիծաղ, քրքիջ, շարժում

Երաժշտախումբը տեղավորվել էր բեմի վրա և կա-
պելմեյստրը ինչ որ ցուցումներ էր տալիս երաժիշտ-
ներին: Դահլիճից դուրս էին տարվել բոլոր աթոռները,
այդպիսով բացվել էր ազատ հրապարակ, ուր կավալեր-
ներն իրենց դամաների հետ պարեր էին ձեռնարկում:
Արդեն մեկ պար վերջացել էր և ամենքը գոհ ու քըրտ-
նած բարձր-բարձր խոսելով ու գաղտագողի միմյանց
դննելով նազանքով ման էին գալիս:

Երաժշտախմբին շատ մոտիկ, բեմից ցածր, աջ
կողմի պատի մոտ, փափուկ բաղկաթոռներում նստած
էին գեներալ-մայոր Օրլովը՝ նրա տեղակալ-գնդապետ
Չիչեն ու շտաբի պետ Լազկինը:

Գնդապետ Լազկինն ու գնդապետ Չիչեն չոր ու
ցամաք բարձրահասակ ղինվորականներ էին: Գեներ-
ալ-մայորը միջին հասակի էր, հաստամարմին, ճա-
ղատ գլխով, ճարպոտ, փայլուն աչքերով: Նա խստիվ
տարբերվում էր մյուսներից թե իր մարմնի կազմված-
քով և թե իր հագուստով:

Ամենքը հետաքրքրությամբ նրան էին նայում:
Իսկ նա ժպտում էր բարեհոգորեն, ներողամտորեն:

Գեներալի կինը, Ամալիան, հաղիվ տասնիններ
տարեկան լինելով: Նա ևս աչքի էր ընկնում իր
հագուստի ճոխությամբ և արտասովոր աշխուժությամբ:
Ինչպես սիրուն, անխելք ու անհոգ թիթեռնիկ՝ պլտտ-
վում էր գերմարմին գեներալի շուրջը, նստում, վեր-
կենում, ինչ որ բառեր արտասանում ու զրնգուն ձայ-
նով քրքջում: Գեներալը նայում էր նրան, ժպտում
ու գլխով շարժումներ անում:

Գեներալի մանկահասակ կինը որոշ նմանություն ուներ Մարիայի հետ, այդ իսկ պատճառով նա սկզբից գրավեց իմ ուշադրությունը: Ես ահամա պատկերացրի Մարիային Ամալիայի գունավոր շորերի մեջ: Եվ ի՞նչ... Արդյոք կարո՞ղ էր մեծաքանքար նկարչի վրձինը կտավի վրա վերարտագրել իմ պատկերացրած սքանչելի Մարիային: Մարիան գեներալուհու շորերի մեջ անգույն գական էր և ես հափշտակվելով մտքիս ստեղծած ից՝ լսելի ձայնով շշջացի...

— Աննաման Մարիա...

— Այդ ինչե՞ր ես ասում, Գրիշա, — հարցրեց Զինան: Ես սթափվեցի ու անիմաստորեն ժպտացի:

— Գնանք բուֆետ, Զինա, — ասացի ես:

Մենք անցանք բուֆետը: Բոլոր սեղանները զբաղված էին: Սպաներն ախորժակով գարեջուր էին խմում և դրանով հյուրասիրում իրենց տիկիններին:

— Դուրս գնանք, — ասաց Զինան:

Սակայն ես իմ որոշման մեջ համառ էի: Ես ազատ սեղան էի փնտռում:

— Գրիգորի Պողոսովիչ, — լսեցի պորուչիկ Մարկովի ձայնը: Նա վերջի վերջո գեներալական եր եկույթին էր եկել իր հինգ տիկինների հետ: Ահա նա, թե տխրո՞վ և թե մարմնի կազմվածքով իրարից տարբերվող տիկինների արանքում, ինչպես երկարավիզ աքաղաղ նստել է մենակ, ինքը գարեջուր է խմում, իսկ տիկինները քաղցրավենիք են ճաշակում:

— Գրիգորի Պողոսովիչ, մեր զխմացի սեղանն ազատ է, համեցեք, գրավեցեք այն:

Զնայած դեպի նրան տաժած իմ հակակրանքին, ևս
Զինային տարա պորուչիկի ցույց տված սեղանի մոտ:

Մատուցողն իմ պատվերով գարեջուր ու խորտիկ
բերեց. ես լցրի իմ ու Զինայի բաժակները գարեջրով
ու խմեցինք:

— Ի՞նչ անքաղաքավարի եք, Գրիգորի Պողոսովիչ,
ձեր մոտիկ ընկերոջն անգամ չեք կամենում ծանոթաց-
նել ձեր փայլուն տիկնոջ հետ:

Ես նայեցի պորուչիկին ու հանկարծ բռնկվեցի
նրա ցուցաբերած լիտիության համար: Սակայն նկա-
տելով Զինայի ժպիտը, իսկույն խաղաղվեցի:

— Դուք, պորուչիկ,— ասացի ես, — հինգ տիկին
ունեք, այնուամենայնիվ ոխակ չեք անում ինձ նրանց
հետ ծանոթացնելու, իսկ ես ունեմ միայն մեկ տիկին,
ինչպե՞ս դիմեմ այդ ոխակին:

Զինան բարձրաձայն քրքջաց և դա բարձրացրեց
իմ տրամադրությունը:

Պորուչիկ Մարկովը սկզբում շփոթվեց, ապա իրեն
հավաքելով, կակազեով արտասանեց.

— Խը... Խը... Խնդրեմ, Գրիգորի Պողոսովիչ, ծանո-
թացեք իմ տիկինների հետ: Ահա ձեզ փափկամարմին
Վալենտինա Գրիգորենան, կայտառ Պելագեա Սպիրի-
դոնովնան, գեղեցկուհի Սոֆիա Նիկոլանան, չարա-
ձճի Նատա Սիդորովնան և լրջախոհ Անաստասիա
Պավլովնան: Ուշադրություն, տիկիններ: Ներկայաց-
նում եմ ձեզ տաքարյուն կովկասեցուն՝ կապիտան
Գրիգորի Պողոսովիչին, խնդրեմ, եղեք ծանոթներ:

Ես բարձրացա տեղիցս, ներկայացա այդ հինգ
կանանց ու սեղմեցի նրանց ձեռները:

— Այժմ հերթը ձերն է, Գրիգորի Պողոսովիչ, էդ-
պես շուտ մոռացմք պայմանը:

Զինան շարունակում էր քրքշալ:

— Զինախղա Արկադենա,— ասացի ես միանգամայն չուրջ,— ձեր ուշադրութեանն եմ հրավիրում պորուչիկ Մարկովին, գործունյա զինվորական է, մենակ կարող է հինգ կավալերի փոխարինել, խնդրեմ եղեք ծանոթ:

— Է՛, շատ չափազանցացրիք, Գրիգորի Պողոսովիչ,— ժպտալով բողոքեց պորուչիկը և մինչև Զինան կշարժվեր տեղից, նա անսպասելի դյուրաշարժութեամբ մոտ եկավ և քծնող ժպիտ խաղացնելով շրթունքներին, խոնարհվեց ու համբուրեց Զինայի ձեռները:

— Ուրախ եմ ու չափազանց բախտավոր ձեզ հետ ծանոթանալուս համար:

Նա սկսեց կոմպլիմենտներ անել Զինային, գովել նրա գեղեցկութունը, շմեցուցիչ հմայքը: Այդ ինձ սկսեց գրգռել:

— Դեհ, պորուչիկ, տեսնում եմ, որ իսկապես մեծ ռիսկ արի ձեզ ծանոթացնելով իմ դամային, ես կարող եմ նրան կորցնել:

— Օ, Գրիգորի Պողոսովիչ, կորցնելով ձեր դամային, դուք կարող եք ձեռք բերել միանգամից իմ հինգ դամաներին, այնպես որ վերջ ի վերջո շահողը դուք կլինեք:

Նրա լպիրշ սրախոսութունն ինձ բոլորովին դուր չեկավ, իսկ Զինան այդ բառերից ավելի բարձր քրքշաց:

Ես կախեցի հոնքերս և չգիտեի, թե ինչով կվերջանար այդ բոլորը, եթե երաժշտախումբն անսպասելիորեն չնվագեր մի վայր:

Նվագը բուժեատուժ խլրտում առաջ բերեց: Զույգերը շտապ-շտապ բարձրացան տեղերից:

— Պարենք, Գրիշա,— ասաց Զինան ու բարձրացավ

տեղից: Նա ձեռքը մեկնեց ինձ և առանց ուշք դարձ-
նելու իր կողքին կանգնած ժպտացող պորուչիկին,
առաջ անցավ:

Պարը սկսվել էր: Ես ու Ջինան մի կերպ խցկվե-
ցինք պարողների շրջանը: Նվագի տակ, սկզբում մենք
կատարում էինք դանդաղ շարժումներ: Այդ հնարա-
վորություն էր տալիս Ջինային խոսելու հետս:

— Պարուչիկը չափազանց խորամանկ է ու սրամիտ:
Ես ոչինչ չասացի:

— Ինչո՞ւ ես լուռ, Գրիշա, միթե՞ պորուչիկից նեղա-
նում ես, թքիր նրա վրա, պտտվիր Գրիշա, թարմաց-
րու գլուխդ:

Մարմինս պտույտ էր կատարում, բայց սիրտս
քարացել, կանգնել էր մեկ տեղում: Միտքս Մարիայի
հետ էր: Նա կանգնած էր աչքերիս առջև իր ամբողջ
հասակով: Ո՞վ էր նա, որտեղից հայտնվեց և ինչո՞վ
այդ հասարակ աղջիկն իմ անհոգ կյանքը ցնցեց, ամեն
ինչ խառնեց իրար ու ստիպեց ինձ կանգնել այդպես
մոլոր ու շվար: Կարծես թե այդ աղջիկն ինչ որ
մոգական ուժով բացեց աչքերս ու ես նոր նկատեցի
իմ առջև բացված վիհը, ուր պետք է գլորվեի, եթե
մեկ անզգույշ քայլ ես անեի:

Եվ ամուր գրկելով Ջինային՝ ասացի.

— Պտտվիր Ջինա, արագ պտտվիր...

Սկսվեցին խելահեղ պտույտները:

— Գրիշա, զգույշ, դանդաղ պտտվիր, նայիր, բո-
լորը մեկ-մեկ դուրս եկան պարից, մնացել ենք մենք,
բավական է, Գրիշա, — վերջապես շնչաց Ջինան:

Ես ոչինչ չէի տեսնում, ոչինչ չէի լսում: Իմ դեմ
կանգնած էր Մարիան, նա խուլս էր տալիս ինձնից
և ես աշխատում էի բռնել նրան:

Ուշքի եկա այն ժամանակ, ելք հանկարծակի կարվեց երսժշտախմբի նշագը և լահլիճով մեկ ինչպես որոտ, տարածվեց ծափահարությունների տարափը:

Զինան հոգնել էր: Նա հեիհե շնչում էր: Մեղ անընդհատ ծափահարում էին:

— Բռավո, բռավո,— զոչում էին աւեն կողմից:

— Այ քեզ պարող դույզ, երսժշտախմբին հոգնեցրեց: Վերջապես ուշքի գալով, ես ժպտացի ու զլուխ տալով հասարակությանը, Զինայի հետ սկսեցի շարժվել դեպի ելքի դուռը: Այդ ժամանակ ինչ որ դինվորական մտեհնալով ինձ, պատվով տվավ ու սասց.

— Պարոն կապիտան, ձեզ ձեր տիկնոջ հետ իր մոտ է կանչում նորին մեծափայլությունը:

Երբ մենք երկուսս մտեցանք գեներալին, ծափահարությունները կրկնակի սաստկացան: Տասնինը տարեկան Ամալիան փոքրիկ ձեռիկներն ամբողջ թավով զարկում էր իրար, մանկական աչքերն առանց կտրելու ինձնից, ինչ որ ասում էր ու անվերջ ժպտում: Նա ինձ նորեն հիշեցրեց Մարիային... Գեներալը ծանրորեն բարձրանալով տեղից, համբուրեց Զինայի ձեռը, ապա զարկելով ուսիս, սասց.

— Ասրեք, լրկուսդ էլ սպրեք, դուք արժանի եք իրար, կապիտան, թույլ տվեք առ ժամանակ զբաղվել ձեր դամայով, իսկ դուք մեկ պար պարեցեք Ամալիա Տուլլինայի հետ: Ամալիա Տուլլինան սլարի սիրաճալ է և ինչլում է, որ սյս անգամ սպրեք իր հետ:

Ամալիա Տուլլինան, գեներալի կինը, արդեն կանգնել էր դիմացս ու քաղցրիկ ժպիտով ասում էր.

— Շատ եմ խնդրում, կապիտան, միք մերժի խընդիրս, այս անգամ պարեցեք հետս...

Ես նայեցի Ջինսային: Նա խրախուսիչ ժպտաց:

Գնեհրալը բարեկիրթ քաղաքավարու թյամբ բռնեց Ջինսայի թևից ու նստեցրեց իր կողքին:

Երաժշտախումբը սկսեց նվագել պարի եղանակը:

Ամալիա Տուլինան թիթեռնիկի նման կպավ կըրծքիս ու մենք սկսեցինք պարը: Ամալիան պարում էր չափազանց ձկուն ու թեթև: Որքան արագ էի պտտվում, այնքան նա ամուր էր կպչում կըրծքիս, այնքան խրախուսիչ ու դուրալի էր նա ժպտում:

Ես նայում էի գեներալուհուն ու ինձ թվում էր, թե պարում եմ Մարիայի հետ: Բայց որտեղ էր Մարիան, ինչո՞ւ նա իրավունք չուներ մտնելու այդ հասարակության շրջանը:

— Կապիտան, որքան թեթև ու արագ եք պտտվում, — շշնջաց Ամալիան

— Վախեն՞ում եք, գեներալուհի:

— Ամենևին, եթե կարող եք, արագացրեք պտույտները, այդ ինձ դուր է գալիս:

— Միթե՞ միայն պտույտներն են դուր գալիս, — խորամանկորեն հարցրի ես:

— Օ, կապիտան, դուք շատ հանդուգն եք:

— Ներեցեք հանդուգնությանս համար, գեներալուհի:

— Այդ ինձ դուր է գալիս:

— Շատ ուրախ եմ:

— Վաղուց է, ինչ ծանոթ եք ձեր դամային, կապիտան:

— Վաղուց, գեներալուհի:

— Բայց նա տարիքով մեծ է:

— Այդ ոչինչ:

— Ձեզ սազում է ավելի երիտասարդը:

— Երիտասարդ կանայք սազում էն գեներալներին,
գեներալուհի:

— Գուք ծաղրում եք ինձ, կապիտան:

— Ամենևին:

Ամալիա Տուլչինան հոգնել էր:

— Բավական է, կապիտան, այլևս չեմ կարող շարու-
նակել պարը:

Մենք դուրս եկանք պարից: Երաժշտախումբն իս-
կույն լռեց: Հասարակության ծափահարությունները
տակ, մենք մոտեցանք գեներալին:

— Հը՛, գոհ ես, չարածձի,—հարցրեց գեներալը:

— Գոհ եմ, գոհ,—արագ-արագ արտասանեց Ամա-
լիան ու նայեց ինձ:

Զգուշությամբ բարձրացնելով Ձինային բազկա-
թուրից, գեներալը սեղմեց նրա ձեռքն ու ասաց.

— Տիկին, բախտավոր կլինեմ, եթե ձեզ տեսնելու
նոր առիթ ունենամ:

— Այդ առիթը, իմ կարծիքով, կախված է մեզնից
պարոն գեներալ,—ժպտալով պատասխանեց Ձինան:

Ինձ թվաց, թե ես հասկացա նրանց: Ես բռնեցի
Ձինայի թևը և մենք հեռացանք գեներալի մոտից:

Երեկույթը մոտենում էր իր վախճանին: Ես ու
Ձինան շտապ հագնվեցինք և ակումբից դուրս եկանք:

Երկնակամարում թագավորում էր լուսինը: Շուրջ
բոլորը արծաթազօծ լուսավորված էր:

Ես լուռ, տուն էի ուղեկցում Ձինային:

Նա գովում էր զեներալին, խոսում նրա քաղաքա-
վարի վարվեցողության, բարձր արժանիքների և այն
կոմպլիմենտներին մասին, որ շնորհել էր իրեն զեներալը:

Ես լսում էի նրան միանգամայն անտարբեր,
մտացրիվ...

* * *

Ես հրաժեշտ տվի Չինային:

Ուշ գիշեր էր. պետք է գնայի տուն, պառկեի, հան-
գլխատանայի: Սակայն ուր էին տանում ոտքերս:

Ես քայլում էի ու անդադար կրկնում.

«Լինի ցերեկ, թե գիշեր, ես կգամ ձեր պատուհան-
ների մոտ»:

Ո՞ւմ էի տվել այդ խոստումը... Ես անցնում էի
այն փողոցով, որի վրա ապրում էր Մարիան:

Փողոցի աջ և ձախ կողմերի տները խոր քնի մեջ
էին, նրանցից ոչ մեկի պատուհաններում լույս չէր
երևում:

Բայց ահա երկու պատուհան, որ քիպ կպել էին
մայթին, աղոտ լուսավորված էին: Միրուն երիզով,
սպիտակ շորի փեղկերը ծածկել էին ապակիները և
այն փայլում էր արտասովոր և գրավում անցորդնե-
րի ուշադրությունը:

— Միթե՞ Մարիան քրտած չէ, չէ՞ որ կես գիշերից
անց է,— մտածեցի ես:

«Ա, այդ երևի նրա պառավ մայրն է գիշերն ան-
քուն ացկացնում, որ վաղ արթնացնի աղջկան, որ-
պետզի նա գործից չուշանա» — անցավ մտքովս: Բայց
ես հիշեցի, որ Վաղը կիրակի է և Մարիան գործի
չպետք է գնար:

Մտտեցա պատուհաններին, կռացա, ներս նայեցի:
Ուղիղ պատուհանների տակ դրված էր կլոր մի սեղան: Սեղանի մեջ տեղում լուսավորում էր նավթի ճրագը, որի ապակուն հազցրված էր ձագարի ձև տված թերթը: Ծրագի լույսն ամբողջովին սփռվել էր սեղանի վրա, իսկ սենյակի մնացած մասը կիսախավարի մեջ էր:

Սեղանի մոտ, աթոռի վրա, նստել էր Մարիան, քիչ թեքվել առաջ, մի ձեռքի արմունկը դրել ծնկան, մյուս ձեռով բռնել էր ինչ որ գիրք ու խորատուղվել ընթերցանության մեջ:

Նրա գիտակներն անփութորեն ցաք ու ցրիվ թափվել էին ուսերին և նրան տվել ջրից դուրս եկած հավերժահարսի տեսք:

Ես մատներով կամացուկ թրիկացրի պատուհանի ապակին: Մարիան ցնցվեց, գիրքը դրեց ս'ղանին ու դարմացած վեր նայեց:

— Մարիա, — ցածր արտասանեցի ես:

Նա բարձրացավ տեղից, ձգվեց սեղանի վրայով գիպի պատուհանն ու սպիտակ վարագույրներն առա-կիններից մի կողմ քաշեց:

Նրա դեմքը կպել էր առակուն և այն ավելի էր փայլում, ավելի գերիչ, քան ինքը լուսինը՝ երկնա-կամարում:

— Մարիա, — նորից կանչեցի ես:

Նա ձանաչեց ինձ: Թեթև շալը քաշեց ուսերին և մի քանի վայրկյանից հետո փողոց ելավ: Ինձ թվաց, թե շուրջս վարդեր, շուշաններ, մանուշակներ բացվեցին և նրանց անուշ բուրմունքը տարածվեց ամենուր:

Ես բռնեցի նրա ձեռներից:

— Մարիա, որքան լավն ես դու...

Ես կատարյալ դառնեցում էի, արտասանում անկապ, անհիմառ բառեր: Գլուխս այրվում էր, ես հոգնել էի:

— Կապիտան, կապիտան, ուշքի եկեք, — արտասանում էր Մարիան և ես կարծես թե նրա ձայնը լսում էի հեռվից, երազի մեջ:

Մարիան բռնեց մեջքս, իր ուսը դրեց գլխիս տակ:

— Այտլած իմ, դուք այրվում եք, դուք ամբողջովի տաքության մեջ եք, ի՞նչ անեմ ձեզ, — լացալու մած խոսում էր նս ու հետո ինձ մտոնեցրեց դարպասի ձախ կողմի նստարանին:

— Կապիտան...

— Շատ եմ խնդրում, որ դու ինձ այլևս կապիտան չկոչես: Ես քեզ համար կամենում եմ լինել միայն Գրիգոր...

Վաղ արևի նման նա ժպտաց:

— Այդպես շիտ, կապիտան...

— Դարձյալ կապիտան:

— Նու լավ, Գրիգոր, այդպես շիտ, չէ՞ որ դուք ունեք հարուստ ու գեղեցիկ Ձիւս: Բացի դրանից, մի թե՛ կարծում եք, որ ես այդպես արագ կհամաձայնեմ ձեզ Գրիշա, Գրիշինկա անվանելու: Եթե դուք, այսօր, այդպես հեշտությամբ ծեծեցիք մեր փողոց նայող պատուհանները և ես շտապ դուրս եկա, այդ բոլորովին չի նշանակում, թե ես ձեր առաջին բառից հետո պետք է ասեմ «Գրիշա»: Մենք իրար դեռևս չենք ձանաչում, կապիտան: Բացի դրանից, միք մոռանա, մենք դեռևս տաղբեր գոսի մարդիկ ենք...

Ես կսխել էի գլուխս, չէ՛ կարող անում նայել նրան: Իսկ նա խիստ ու արդարաչափ դատավորի նման շարունակում էր .

— Սաղայն ես ունեմ իմ ներքին, իմ հոգու պատուհանը: Այդ պատուհանն առայժմ ամուր փակված է և ոչ մի թխկոցով չի բացվի: Նա կբացվի այն ժամանակ, երբ կլսվի հարազատ, հավատարիմ, անկեղծ ձայնը: Ուշքի եկեք, կապիտան, ես հասարակ ըլացարարուհի եմ, ապրում եմ խոնավ նկուզում, ոչինչ չունեմ, բացի այս ձեռներից և ինձ վայել չէ ձեզ Գրիշա անվանել:

Նա լռեց ու նայեց հակառակ կողմը:

— Մարիա, — վերջապես ասացի ես, — դու ինձ խոցեցիր շատ խորը... Սաղայն դու իրավացի ես... Բայց ես կապացուցեմ, որ արժանի եմ լինել քեզ հավատարիմ, անկեղծ հարազատ մարդ... Ես կսպասեմ այնքան, մինչև որ դու ինձ Գրիշա անվանես...

Նա շալը քաշեց ուսերին, նայեց ինձ, մեղմորեն ժպտաց ու հեռացավ:

* * *

Այդ օրը ես տնից դուրս չեկա: Հիշում էի Մարիայի արտասանած բառերը, խորհում, նախատում ինձ իմ թեթև վարքի համար:

«Մենք չենք ճանաչում իրար և բացի դրանից մենք տարբեր դասի մարդիկ ենք»: Ես հիշեցի նաև ուրիշ բառեր, որոնք ասել էր Զինան. «Ես քեզ համար ժամանակավոր աղբյուր եմ, կառուցած օտարների ձեռքով, ամայի դաշտում, ուր դու կանգ ես առել ժամանակավոր օթևանի»:

Ես նստեցի մահճակալիս վրա, գլուխս ավերիս մեջ առա ու իմ անհոգ կյանքում առաջին անգամ սկսեցի վերլուծության հնթարկել սոցիալական հարցերը:

Նախ— հարց տվի ինքս ինձ,— ո՞վ է Ձինան, որն է նրա աշխարհը և ո՞վ եմ ես:

Ձինան հարուստ է, նախկին վաճառականի կին:

Իսկ ո՞վ է Մարիան: Նա ի՞նչ ունի: Ի՞նչ որ անհայտ մի ուժ մղում էր ինձ մտտեմալ Մարիային, ընդհուպ տեսնել այն աշխարհը, որը հարազատ էր լվացարարուհուն, բացել նրա «հոգու ներքին պատուհանը»:

Մարիա, թարմ ու բուրումնավետ, գեղեցիկ Մարիա: Ես քեզ դտա իմ կյանքի ճամփին և հմայված կանգ առա: Իսկ զմեցրիք ինձ քո կենսալիտությունը, քո չքնադուրստությունը և ինչպես կույրը հանկարծ բացելով «չքերն ու տեսնելով արևի ճառագայթները, արձակում է ուրախ ճիչ, այդպիսի ճիչով ես ընդառաջ վազեցի քեզ:

Կարծես նոր բացվեցին աչքերս: Ես զինվորական էի: Ես երկու տարի ճակատում կռվում էի գերմանացիներին դեմ, մարդկանց մարտի տանում, հրամայում նրանց կռվել մինչև վերջին շունչը: Սակայն ո՞ւմ համար, հանուն ինչի՞:

Առաջ այդ հարցերն ինձ ամենևին չէին զբաղեցնում: Մարիան բաց արեց իմ աչքերը:

Պետք է ասեմ, որ այն ժամանակ երկրի ներքին քաղաքական աշխարհում տեղի էին ունենում խոշոր իրադարձություններ:

Ցարական իշխանությունը ճակատում պարստություն կրելով, երկիրը հասցրեց ծայր աստիճանի քայքայման: Երկրի էկոնոմիկան միանգամայն ավերված էր: Այդ ուժեղացրեց ժողովրդական լայն մասսաների վրդովմունքը: 1917 թվականի փետրվարին հեղաշրջում կատարվեց: Խորամանկ բուրժուազիան իշխանությունն իր ձեռքն առավ: Տապալված ցարական

իշխանութեան փոխարեն ստեղծվեց այսպէս կոչվող
ժամանակավոր կառավարութիւնը: Սակայն դա ևս
ավելի վատթար դրութեան մեջ դրեց երկիրը, ժողո-
վրդի համար բերեց նորանոր դժբախտութիւններ:

... Ճակատս այրվում էր, ինձ վատ էի պղում:
Պառկեցի և իսկույն քուն մտա:

Ժամը ութին պետք է գնայի Ձինայի մոտ: Առա-
ջին անգամ տհաճորեն հագնվեցի ու դանդաղ, ան-
հաստատ քայլերով բռնեցի դեպի Խանի պուրակը
տանող ճանապարհը,

Ես մոտեցա Ձինայի տնակին: Վերանդայում նըս-
տած էր նրա աղախինը: Ինձ տեսնելուն պես Սոֆիան
բարձրացավ տեղից ու շտապ-շտապ ցած իջավ:

Ես կանգ առա:

— Օ, պարոն, տիկինը հիվանդ է և ներողութիւն
է խնդրում, որ ձեզ ընդունել չի կարող: Նա ասաց,
որպէսզի վաղն անցնեք իր մոտ, այս նույն ժամին:

Ես մեխվեցի տեղումս: Իե՞տ չէր պատահել այդպիսի
դեպք, որ հիվանդութեան պատճառով Ձինան մերժեր
ինձ ընդունել: Նա հաճախակի էր հիվանդանում և
այդպիսի դեպքերում չէր մերժում ինձ ընդունել
իր մոտ:

— Երբ դու մոտս ես, Գրիշա, ես մոռանում եմ
հիվանդութիւնս և ինձ լավ եմ զգում, — ասում էր նա
շարունակ:

Իսկ այդ օրը նա հիվանդ էր և չէր ցանկանում ինձ
ընդունել: Ի՞նչ էր պատճառը: Ես այդ բոլորին դրա
վրա ուշադրութիւն չգարձրի:

— Հայտնեցեք տիկնոջ իմ լավագույն ցանկու-

թյունները և ասացեք, որ ես ցանկանում եմ նրան շուտ առողջանալ:

— Շատ բարի, պարոն, — ասաց աղախինը, շրջվելով դանդաղ հեռացավ:

Ճիշտն ասած, ես ուրախ էի դեպքերի այդպիսի ընթացքի համար:

Ես ժամանակ էի շահում Մարիային տեսնելու, նրա հետ երկար նստելու նստարանին:

Առանց տատանվելու մեկնեցի Մարիայի մոտ:

Դեռևս լույս էր: Չնայած դրան, ես առանց վարանելու մոտեցա ծանոթ պատուհաններին, կռացա ու ծեծեցի ապակին:

Այս անգամ պատուհանները պատած էին կրկնակի փեղկերով: Ներսը չէր երևում:

Անցավ որոշ ժամանակ: Սակայն պատուհանի փեղկերը չբացվեցին: Ես նորից ծեծեցի ապակին:

Քիչ անց, ճոնչաց դարպասի դռնակը և շտապ փողոց դուրս եկավ Մարիան: Նրա դեմքն այլայլված էր. սպիտակ գլխաշորը գլխից ցած էր սահել ու մնացել վզից կախված:

— Այդ ի՞նչ է պատահել, Մարիա, ինչո՞ւ այդպես ցրված ես, — հարցրի ես:

Նա հավաքեց իրեն, կարգի բերեց գլխաշորը, թեթև մի ժպիտ խաղացրեց դեմքին, հանդիստ ասաց.

— Ոչինչ, ոչինչ, պարոն կապիտան, քնած էի, նոր արթնացա և շտապեցի փողոց:

— Դարձյա՞լ կապիտան, Մարիա, դու ինձ վիրավորում ես:

Նա գննող հայացքով նայեց աչքերիս մեջ ու հարցրեց.

— Միթե՞ այդ ճիշտ է, որ դուք վիրավորվում եք, երբ ես ձեզ կոչում եմ կապիտան:

— Այո, վիրավորվում եմ, որովհետև քեզ սիրում եմ որպես հոգուս մասնիկը և կամենում եմ, որ դու էլ ինձ այդպես հարադատ զգաս:

— Շտապում եք, կապիտան:

— Նորից, նորից կապիտան, ես սկսում եմ ասել այդ բանը, այդ կոչումը, հասկանո՞ւմ ես...

— Յածր, ցածր արտահայտվեցիք, կապիտան, ժանգարմերիայի ականջները սուր են, կլսեն և ձեզ փրկություն չկա:

— Մարիա, գնանք ինձ հետ:

— Ո՞ւր:

— Ո՞ւր: Գնանք ման գանք, ուր կամենաս, ես ցանկանում եմ քեզ հետ լինել:

Նա մի պահ լռեց: Մտածում էր գլխահակ:

— Ասա, գալո՞ւ ես, թե ոչ:

— Օ, կապիտան, ճիշտն տաս՞ շատ անհարմար եմ զգում ձեզ հետ ակումբ գնալ:

— Ամաչո՞ւմ ես, ես քեզ անարժան եմ:

— Օ, ոչ, կապիտան, ինչո՞ւ հակառակը չեք ասում:

— Մարիա, միթե՞ չես տեսնում, որ ես կուրորեն հետևում եմ քեզ...

— Ժամը քանի՞սն է,— շտապ հարցրեց նա:

— Ժամը ութն է:

— Կինոնկարի ցուցադրումը սկսվում է ժամը տասին: Դուք գնացե՞ք տոմսեր գնելու, իսկ ես մեկ ժամից հետո կգամ:

— Ճի՞շտ:

— Ճի՞շտ:

— Եթե խարես, ես դարձյալ կգամ ու կծեծեմ ձեր պատուհանը:

— Շատ լավ,— ծիծաղեց Մարիան ու չարաճճիորեն փախալ մտտիցս:

Ես շրջվեցի ու սկսեցի արագ-արագ քայլել մայթով:

Ամառային կինո-թատրոնի շենքը գտնվում էր փողոցի վերջում, համարյա քաղաքից դուրս: Եենքի դիմաց կար սալահատակված լայն հրապարակ, ուր գեղեցկորեն աճեցրել էին մի շարք ծառեր, իսկ նրանց տակ դրել նստարաններ: Ես երկու տոմս գնեցի և, որովհետև ժամանակ շատ կար, անցա հրապարակը, նստեցի նստարաններից մեկի վրա.

Ժամը ուղիղ իննին ես մտտեցա կինո-թատրոնի դրամարկղին, ուր պետք է հանդիպելի Մարիային: Սակայն նա չկար: Ես անհանգստացա: Արդեն իննից անցել էր տասը, տասնհինգ ըոպե, վերջապես քսան, եռեսուն ըոպե, իսկ Մարիան չէր երևում:

Համբերությունս, ու մանավանդ տեսողությունս, գրգռիչ լարված դրուժյան էին հասել: Դեպի կինո-թատրոն շտապող ամեն մի աղջկա, կնոջ հեռվից նմանեցնում էի Մարիային: Կամաց-կամաց հիասթափությունը պատում էր ինձ: Ահա հնչեց կինոնկարը սկսելու առաջին զանգը: Հանդիսատեսները դահլիճ շտապեցին: Հրապարակում և փողոցում այլևս մարդ չմնաց: Իմ մնալն այստեղ արդեն ավելորդ էր ու անհարմար: Սակայն հույսս չէի կտրում: Կարծում էի՝ ուր որ է, նույնիսկ վերջին վայրկյանում, Մարիան կգա: Սակայն նա չեկավ:

Ես պատշապեցի հեռանալ: Բայց այդ նույն ըոպեին իմ ուշադրությունը գրավեց ուշացած մեկ զույգ:

Չույզը գտլիս էր ծանրուէն, ուռանց շտապելու: Նը-
րանք երկուսն էլ հանգւած էին ճոխ ու պատվական
անձանց շարքին էին պատկանում:

Տղամարդը հաստամարմին զինվորական էր: Նրան
զույգ կազմողը չքեղ հագնւած, փետրավոր գլխարկով
մի տիկին էր:

Ես դանդաղ քայլերով նրանց ընդառաջ էի գնում:
Երբ հավասարվեցինք, փետրավոր գլխարկի տակ տեսա
Զինայի շպարված դեմքը: Զինվորականը, որ ամուր
բռնել էր նրա թևից՝ գեներալ-մայոր Օրլովն էր: Նա
գեներալական գլխարկը քաշել էր մինչև աչքերը, գեր
բազի պես օրորվելով առաջ էր գալիս: Նա հարբած էր:
Ինձ տեսնելուն պես Զինան դեմքը շրջեց դեպի գենե-
րալը: Ես պատիվ տվի գեներալին ու անցա: Ամբողջ
մարմնով դողում էի: Զայրույթը բռնել էր ինձ: Նոր
գլխի ընկա, որ Զինայի հիվանդութունը շինծու էր
և այն բոցին, երբ ես խոսում էի նրա աղախնու հետ,
այդ նույն ժամանակ Զինան զբաղւած էր գեներալով:
Ես մտաբերեցի, թե ինչպես այդ կինը հայելու առաջ
ժամերով կանգնած շպարվում էր, զանազան օժանելիք-
ներով սրակվում, ջոկում—ջոկջ կում բազմապիսի հա-
զուստները, հագնում լաւը, սաղականը, գեղեցկացնողը,
նոր դուրս գալիս փողոց, հասարակության մեջ: Նոր
սկսեցի նկատել, որ այդ կնոջ մեջ ամեն ինչ կեղծ էր,
շինծու, [սկ գեղեցկութունը՝ արհեստական: Իսկ երբ
մտաբերեցի պորուչիկ Մարկովին, նրա հինգ կանանց,
սիրտս ակամայից սկսեց խառնել: Խաբեբա էր այն
աշխարհը, որին պատկանում էին Զինան, պորուչիկ
Մարկովն ու նրա հինգ կանայք: Այդ աշխարհը, հերավի,
հիմնւած էր խաբեության վրա:

Այո, Ջինան ինձ համար ժամանակավոր աղբյուր էր... Այդ աղբյուրից չուր խմեցին ուրիշները, ապականեցին նրան և ես հեռացա նրանից:

Բայց ո՞ւր է իմ գուլալ, անաղարտ աղբյուրը: Ո՞ւր է Մարիան:

Ես քալեիս ուղղեցի դեպի Մարիայի տունը:

Նրա սենյակի պատուհանները լուսավորված էին՝ Բարկությամբ լի ձեծեցի ապակիները:

Մարիան կայծակի արագությամբ փողոց եկավ:

Նա անմեղ ժպիտով մոտեցավ ինձ, բռնեց ձեռքիցս ու բարյացակամ նայեց աչքերիս: Նրան տեսնելուն պես բարկությունս չէացավ և ես մեղմորեն հարցրի՝

— Ինչո՞ւ չեկար, Մարիա, չէ որ ես քեզ սպասում էի:

— Ես գբաղված էի...

— Բայց ինչո՞ւ ասացիր, որ կգաս:

— Ես կարծում էի, թե կգամ:

— Մարիա, տար ինձ ձեր տուն, ես կամենում եմ հա՛յ գոտանալ, կարգի բերել ինձ:

— Օ, ոչ, մեր տանը...

— Ի՞նչ, ձեր տանը...

— Ոչինչ, Գրիշա... Ես չեմ ուզում, որ դու գաս մեր տուն, այդ շատ շուտ է:

— Ոչ, խաբում ես, դու տանը սիրած ունես, դուք բոլոր կանայքդ խաբեբաներ եք, չեմ հավատում այլևս ձեզ,— գայրացած գոչեցի ես:

— Գրիշա, ուշքի եկ, գնանք, գնանք դետի ավիլ,— սասց նա ու բռնեց թևիցս:

Ես խաղաղվեցի:

Մենք քայլում էինք դեպի գետափ:

Հուանի խոշոր, դեղնա գույն սկավառակը բազմել էր

գետի ուսին և իր լույսով արծաթագոծել դանդաղ հոսանքով ընթացող ջուրը:

Մենք նստեցինք կանաչապատ բլրակի վրա, դեմքով դեպի գետը: Մեզ էր նայում հետզհետե վեր բարձրացող լուսինը:

Միառժամանակ երկուսս էլ լուռ էինք: Այդպես մենք ավելի հարազատ էինք զգում իրար, մոտիկ: Այդ պատճառով մեզնից ոչ մեկը չէր կամենում առաջինը խոսել, և ժամանակն անցնում էր աննկատելի:

— Լսիր, Գրիշա, — վերջապես խոսեց Մարիան, — ես քեզ սիրում եմ...

— Ի՞նչ, — զարմացած գոչեցի ես:

— Բայց հանգիստ պահիր քեզ, ուզում եմ լրջորեն խոսել հետդ: Իմացիր, այս գրույցը մեզ կամ կմոտեցնի, կամ էլ կթշնամացնի: Խոսք տուր, որ ավելորդ շարժում չես կատարի:

Ազդվելով նրա ձայնի կատարյալ լրջությունից, ես խոսք տվի, որ կլինեմ ուշադիր:

— Դու ինձ առաջին օրվանից դուր եկար, — սկսեց նա, — բայց իմ գոյությունը դու չէիր նկատում: Դու կանգնած էիր ինձանից բարձր ու հեռու... Մտքովս անգամ չէր անցնի մոտենալ քեզ: Ամեն օր տեսնում էի քեզ, գիտիի ուր էիր գնում, ում հետ ժամանակ անցկացնում, սակայն մոտենալ քեզ չէի համարձակվում: Լուռ տանջվում էի, աշխատում էի դեպի քեզ տածած մաքուր զգացմունքներս խեղդել: Չէ՞ որ դու պատկանում էիր ուրիշներին:

Ես ուշի-ուշով լսում էի նրան: Ակամա կռահում էի, որ ապագա կյանքիս ողջ ընթացքը կախված է այս գրույցից:

— Կյանքն ինքը մեզ մոտեցրեց: Առաջին պահին այդ ինձ ուրախացրեց: Բայց ուրախությունս վաղ էր: Գրիշա, դու տեսնո՞ւմ ես, թե մեր երկրում ինչպիսի իրադարձություններ են տեղի ունենում. կյանքի ու մահվան կռիվ է գնում երկու աշխարհի միջև: Նկուղանքում ապրողները ոտքի են ելել, նրանք կամենում են ամեն առավոտ տեսնել արևի ծագումը, ապրել մարդավայել, վայելել ընտելյան բարիքները: Ես նկուղում ապրողներից եմ, հասկանո՞ւմ ես, ատում եմ այն ճրիակեր աշխարհը, որին պատկանում են քո Զինան, դեներալը, որին պատկանում ես թերևս դու... Սակայն մի ես դու, որ աշխարհին ես պատկանում ե կզնաս, արդյոք, պայքարի այն ուղիով, որով պետք է ընթանամ ես... Այս հարցերը կարևոր են իմ սիրո համար:

Մարիան վեր կացավ, երկու քայլ հեռացավ ինձնից: Լուսնի լույսը թափվել էր նրա ձախ այտի վրա: Ես հիանում ու հրճվում էի այդ հասարակ լվացարարուհիով: Նա գեղեցկության, ճշմարտության, արդարության մարմնացումն էր:

— Ես չեմ կամենում կանգ առնել ժամանակավոր աղբյուրի մոտ, Գրիշա, — շարունակեց նա, — ժամանակավոր աղբյուրը պղտոր է, նրանից ամեն մի պատահական անցորդ ջուր է խմում, այդպիսի աղբյուրը շատ շուտ կցամաքի: Իմ աղբյուրը մս քուր է, հստակ, կենսաբար ու մշտական, այն դեռ չկա, սակայն շատ շատով ձեռք կբերվի միայն կռվի թեժ բոցերի մեջ:

Լուսն լուծւմ էի նրան: Նա խոսում էր ակնարկներով եւ ես հասկանում էի նրա ակնարկներին իմաստը:

Երբ Մարիան լռեց, ես խոսեցի:

— Մարիա, հարցնում ես, թե ո՞վ եմ ես: Լսիր ինձ: Ես անհոգ ու անտարբեր մի ճամբորդ էի այս կյանքում, երբ իմ նավը զարնվեց խուժերին, ես ինձ նվիրեցի արեկոծվող ծովին, դառա լուզորդ և ոհա արևներն ինձ դուրս շարտեցին ավի: Այստեղ գտա քեզ, գտա իմ կյանքի աղբյուրը և նրա սկունքից այլևս ոչ մի ուժ չի կարող պոկել ինձ:

Մարիան սեղմեց իմ ձեռքը, ամուր երախտագին:

— Սիրելիս, այդ միայն խոսքեր են, նրանց հաճելի է լսել, սակայն հավատալ դեռ վաղ է:

Սակայն ես արդեն ամեն ինչ ասել էի: Մնում էր գործով ապացուցել, որ սիրում եմ անկեղծ, որ հանուն այդ սիրո պատրաստ եմ մաքառել ու մեռնել:

* * *

Հաջորդ օրը ես չզնացի Զինայի մոտ:

Ազատ ժամերս անցկացրի Մարիայի հետ՝ Չեզան գետի ափին:

Մենք դարձյալ խոսում էինք ինտիմ, սիրո հարցերի շուրջը:

Ես պատմեցի Մարիային իմ ղինվորական չոր ու ցամաք կյանքը: Նա լսեց ինձ ուշադիր: Հետո նա ինձ հայտնեց, որ բացի մորից հայր էլ ունի:

— Իսկ ո՞ւր է հայրդ, ի՞նչ է անում նա, — հարցրի ես:

Նա նայեց աչքերիս մեջ ու հետո անսպասելի հպարտ խիզախությամբ ասաց.

— Հայրս ընդհատակյա սեուլուցիոներ է, նա խոր գործ է կատարում:

— Ի՞նչ նրա հետ տեսնվում ես:

Մարիան լուռ էր:

— Մարիտ, առա, դու նրա հետ տեսնվում ես:
Նա շարունակում էր քար լուսթյուն պահպանել:
Եւ դառնորեն ժպտացի:

— Երեւի չես հավատում ինձ, վախենում ես, որ
կմատնեմ ոտտիկանությանը:

— Ես չեմ վախենում, — կտրուկ պատասխանեց
Մարիան:

— Ապա ինչ՞նչ չես պատասխանում հարցիս:

— Այո, տեսնվում եմ նրա հետ և օգնում նրա՞ն
իր դործում:

Նա խիստ-խիստ նսյեց դեմքիս: Նրա կուրծքը
հուզմունքից վեր ու վար էր անում: Նա անհամբեր
սպասում էր, թե ես ի՞նչ կասեմ:

— Լսիր, Մարի, ծանոթացրու ինձ հորդ հետ:

— Ի՞նչ, — բացականչեց նա:

— Ծանոթացրու ինձ նրա հետ, ես ուզում եմ
նրան մոտիկից ծանոթանալ:

— Հարկիվ թե հայրս ցանկանա քեզ հետ ծանոթ ա-
նալ, բայց կիրործեմ:

* * *

Օգոստոս ամիսը շատ արագ անցավ: Եւ ոչ մի ան-
գամ չգնացի Զինայի մոտ: Նա իր աղախնու միջոցով
երեք նամակ ուղարկեց ինձ: Նա խնդրում էր, որ
անցնեմ իր մոտ, կարևոր հարց ունի, կամենում է
հետս խոսել: Մակայն ես վճռել էի միանգամից կապս
կտրել նրանից:

Ի՞նչու ետևեց գլորվում էին օրերը: Փչու պատը
քամիներին փոխարինում էր անձրևը: Հետո դուրս էր
գալիս արևը, թույլ-թույլ տարածում իր ճառագայթ-
ները:

Ահա այդպիսի մի օր էր, որ Զինայի աղախինը բերեց ինձ հասցեագրած չորրորդ նամակը:

Սովորական բառերից հետո Զինան գրում էր, «Սիրելիս, վաղը մեկնում եմ և մի վիտե, գուցե այլևս չաեսնվենք»:

Այսօր իմ տանը կազմակերպում եմ հրաժեշտի երեկո: Ներկա կլինեն իմ ծանոթները, սրոնցից շատերին դու ճանաչում ես:

Իմ վերաժողոված գառնուկ, քեզ առանձնապես խնդրում եմ ներկա լինել հրաժեշտիս երեկոյին:

Համառիկս, կարծում եմ այս անգամ խնդիրս կկատարես: Անհամբեր սպասում եմ քեզ»:

Նամակը ձմեցի ձեռումս, նողկանքով նետեցի դամբյուղը: Այդ օրը ես ավելի կարևոր տեղ պետք է գնայի: Այդ օրը Մարիան պետք է ծանոթացնեի ինձ իր ընդհատակյա ռեզիդենցիաներ հոր հետ:

Գրիշերվա ժամը 10-ին ես գուրս եկա անից՝ Փողոցներում մութ էր: Շտապ-շտապ քայլում էի: Զգուշություն պահպանելու համար, որի մասին առանձնապես խնդրել էր Մարիան, ես անցա մի շարք ծուռ ու մուռ փողոցներով, նոր գուրս ելա Մարիայենց տան առաջ:

Զնայած քայլում էի շատ արագ, բայց և այնպես զգացի, որ մեկը հեռվից գալիս է ետևիցս: Ես թաքնըվեցի փողոցի խուչ անկյունում: Երբ զգացի, որ ինձ հետևողը մոտեցել էր, անապասելիորեն գուրս եկա ու ընդհարվեցի նրան: Եվ ինչ: Իմ դիմաց կանգնած էր Մարիան: Նա շփոթվել էր, շվարել ու բառ չէր կարողանում արտասանել:

— Մարիա, այդ ինչպե՞ս հասկանալ:

Նա ուշքի եկավ, ապա բռնելով ձեռք, ասաց.

— Ոչինչ, Գրիշա, այս բոլորը զգուշութեան համար է: Ես հասկացա նրան ու ոչինչ չասացի: Մենք շարունակեցինք մեր ճամբան:

Ահա և ծանոթ դարպասը: Մարիան բացեց դարպասի դռնակը և մենք անցանք խավարաչին բակը:

Մարիան քայլում էր առջևից: Ես բռնել էի նրա թևից ու կուրորեն հետևում էի նրան: Ոչինչ չեի տեսնում ու ստքերս փոխում էի Մարիայի կարգադրութեամբ:

Վերջապես կանգ առանք:

Մարիան երեք անգամ թխկացրեց դուռը:

— Ո՞վ է, — լավեց ինչ որ պառավի քնահարամ ձայն:

— Մարիան է, մամա:

— Ուշ էս գալիս, աղջիկս, — մրմրեց այսպիսով ու բացեց դուռը:

Մենք ներս մտանք: Սենյակն ազոտ լուսավորված էր: Ճրագը գտնվում էր նույն սեղանի մեջտեղում, որը տեսել էի փոզոց նայող պատուհաններից:

Սեղանի մոտ նստել էր ամուր կազմվածքով, խիտ մազերով, տարիքավոր մի մարդ: Նա ուշի-ուշով ընթերցում էր թերթը: Մեր ներս գալուն պես նա իսկույն բարձրացավ տեղից:

Նրա համակրելի առնական հայացքն ազդեցիկ էր ու թափանցող:

— Հայր, ահա նա, ծանոթացիր, — ասաց Մարիան կանգնելով իմ ու հոր միջև:

Առանց կտրելու հայացքն ինձնից, հայրը դանդաղ քայլերով մոտ եկավ և ամուր սեղմեց ձեռքս:

— Շատ ուրախ եմ, — ասաց նա հստակ ձայնով, —

Մարիան ինձ պատմել է ձեր մասին: Ինձ անվանում են Մաքսիմ Բարվենկո:

Ես ազամա ցնցվեցի: Մաքսիմ Բարվենկոն հայանի ուսուցիչներ էր: Նրա ելույթները, ճառերը լսողներին վրա թողնում էին ցնցող ապավորություն: Նրա խոսքերը ճշմարիտ էին, ինչպես բյուրեղ, արդար, ինչպես արև, ազդեցիկ, ինչպես մուրճի հարված:

Մաքսիմ Բարվենկոյի գլուխը թանկ էր դնահատված ցարական օխրանկայի կողմից:

— Կապիտան Գրիգոր Պողոսովիչ Մանուկյան, — ասացի ես:

— Շատ բարի, խնդրեմ, մոտեցեք սեղանին:

Մենք նստեցինք միմիանց դիմաց:

Մարիան դուրս գնաց: Պառաջև առույգ քայլերով մոտեցավ դռան ու կողպեց:

Մաքսիմ Բարվենկոն առանց ժամանակ կորցնելու, սկսեց խոսել:

— Դուք կամենում եք պիտանի լինել ուսուցիչային: Շատ լավ: Մեզ հարկավոր են ուղմական մասնագետներ: Դուք զիտե՞ք, թե ինչպիսի սուրբ գործի համար ենք մարտնչում մենք, բոլշեիկներս: Օրերը մոտենում են, խնդիրը հասունացել է և շուտով պետք է բախվենք հին, փտած աշխարհի հետ: Մենք զինվում ենք, սակայն այդ դեռ քիչ է հաղթանակ ձեռք բերելու համար: Մենք պետք է ուսումնասիրենք ուղմական արհեստն ու տիրապետենք նրան: Դուք ուղմական տակտիկայի դասատու եք և մեզ կարող եք շատ բանով օգնել:

Այդ գիշեր ես ու Մաքսիմ Բարվենկոն շատ երկար խոսեցինք:

Այդ գիշեր ինձ համար շատ բան պարզվեց: Մոցիալական խրթին հարցերն ինձ համար շոշափելի չափով հասկանալի դառան:

Այդ գիշեր ես գտա իմ հարազատ, մշտնջենական աղբյուրը, գտա կյանքի միակ ճշմարիտ ուղին և այնուհետև տարիներ անցան, ես այդ ուղիով քայլեցի հա սո. առ ու աներեր:

* * *

Գեներալը լռեց: Նա նայեց մեզ:

— Իսկ Մարիան,— հարցրեց սպաններից մեկը:

— Մարիան,— գեներալը ժպտաց,— նա մինչև հիմա էլ իմ անբաժան ընկերուհին է, իմ չցամաքող, զուլալ աղբյուրը: Ահա նա, նստած է իմ կողքին, զինվորական շինելը հազին...

Հյուրերը զարմանքով նայեցին գնդապետ Բարվենկոին:

— Ես ու Մարիան 1917—20 թվականներն անցկացրինք դաժան մարտերում, կողք-կողքի: Քաղաքացիական կռիւ բոցերում մենք գտանք մեր բախտը, մեր երջանկության աղբյուրը:

Սակայն՝ դերմանական շները ուզում էին ապականել այդ սուրբ աղբյուրը, պղտորել նրա զուլալութունը, ջուր խմել նրանից: Մենք նրանց խմեցրինք, շատ լավ խմեցրինք, սակայն ոչ այդ աղբյուրի ջրից:

Ես ու Մարիան նորից կողք-կողքի կռիւ ելանք ու պահպանեցինք մեր աղբյուրի անարատութունն ու պատիվը: Մենք հաղթեցինք:

ԾԱՂԻԿ	—3
ԵՍ ՄԱՅՐ ՈՒՆԵՄ	—11
ԱՅՐԻՐ ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ	—27
ՆԱ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆ ԷՐ	—44
ՀԵՏԱԽՈՒՅՋԸ ԵՔԵՐՆԻՄ	—63
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԵՐԸ	—73
ԵՐՋԱՆԿՈՒՅՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ	—85




գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0041589

ԳԻՆԸ 5 Ռ.



Г. ПЕТРОСЯН

Ч И Ч Э К

(эրմանի ԺիլինԺ)

Բակի □ ԱՅՔՐՆՔՏՐ □ 1947